



ՍՏՖԱՆ ԴԱԴԻԿՅԱՆ




ԱՐՑԱԽԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

4108093

ԱՐՑԱԽԻ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ



ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

2021

ՀՏԴ 620
ԳՄԴ 31
Պ 232

Տպագրվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ և Հայկական էներգետիկական
ակադեմիայի գիտխորհրդի երաշխավորությամբ

Գրքի պատասխանատու խմբագիր՝

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ Մ Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն
ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Գրախաներ՝ տ.գ.դ., պրոֆեսոր **ՌՌԲԵՐՏ ՄԱՐԻՆՅԱՆ**
տ.գ.թ. **ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

ՊԱՊԻԿՅԱՆ Ս. Ռ.

Պ 232 Արցախի էներգետիկական / Մենագրություն, Ս.Ռ.Պապիկյան, ՀՀ ԳԱԱ
Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ և Հայկական
էներգետիկական ակադեմիա, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.,
2021, 132 էջ + 16 էջ ներդիր:

Գրքում ներկայացվում է Արցախի էներգետիկայի պատմությունը սկզբնավորումից մինչև մեր օրերը: Բերված են հարուստ տեղեկատվական տվյալներ և վերլուծություններ կապված Արցախի էներգետիկայի տարբեր ճյուղերի զարգացման հետ: Գրքում տեղ է գտել նաև Արցախի զազամատակարարման համակարգերի վերաբերյալ տեղեկատվություն: Տրվում են նաև Արցախի Հանրապետության էներգետիկայի զարգացման հեռանկարները:

Գիրքը նախատեսվում է ոչ միայն գիտնականների, ուսանողների, այլ նաև տվյալ բնագավառի մասնագետների համար:

ՀՏԴ 620
ԳՄԴ 31

ISBN 978-9939-9260-4-9

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	4
ԳԼՈՒԽ 1. ԱՐՑԱԽԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	5
1.1. Արցախի մարզի ստեղծման համառոտ ակնարկ	5
1.2. Արցախի էներգետիկայի զարգացման խորհրդային շրջանը.....	6
1.3. Արցախի էներգետիկայի զարգացումը անկախացումից հետո	14
1.4. «Արցախ չէ՛ք» ԲԲԸ.....	37
ԳԼՈՒԽ 2. ԱՐՑԱԽԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	51
2.1. Ջերմամատակարարման համակարգերի զարգացման հիմնահարցերը Արցախի Հանրապետությունում.....	51
2.2. Արցախի էներգետիկայի առօրյան.....	56
2.3. Ջեռուցման հիբրիդային համակարգերի զարգացման հեռանկարները Արցախի Հանրապետությունում.....	58
2.4. Արցախի գազամատակարարման սկզբնավորումը.....	67
2.5. Արցախի գազամատակարարման իրավական պայմանները.....	68
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	71
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	76
ՀԱԿԵԼՎԱԾՆԵՐ	79

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հեղինակը, գլխավոր ինժեներն է Հայաստանում և Արցախում կառուցված բազմաթիվ հիդրոէլեկտրակայանների նախագծերի: Արցախի էներգետիկայի զարգացման գործում ունեցած ավանդի համար 2017-ին նրան շնորհվել է Արցախի պետական պարզև «Երախտագիտություն» մեդալ:

Մ.Պապիկյանը հեղինակել է էներգետիկայի հարցերին նվիրված բազում ուսումնասիրություններ: Սույնը վերաբերում է Արցախի Հանրապետության էներգետիկայի ավելի քան հարյուրամյա պատմությանը և զարգացման խնդիրներին: Մինչ Արցախյան 44-օրյա պատերազմը գիրքը պատրաստ էր տպագրության և աշխատանքներ էին տարվում Ստեփանակերտում նշելու Արցախի էներգետիկայի 100-ամյակը:

Առաջարկվում է Արցախի Հանրապետության էներգետիկայի զարգացման հեռանկարները ստեղծված իրավիճակում:

ԳԼՈՒԽ 1

ԱՐՑԱԽԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Արցախի մարզի սրտեղծման համառոտ ակնարկ

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը 1991թ. սեպտեմբերի 2-ին Շահումյանի շրջանի (1923թ. ինքնավար մարզը կազմավորելիս՝ Ադրբեջանը թույլ չի տվել Ղարաբաղի մասը կազմող հայաբնակ այդ շրջանը մտցնել մարզի կազմի մեջ) հետ միասին հռչակվեց հանրապետություն և կոչվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ ԼՂՀ: Այն զբաղեցնում է պատմական Հայաստանի 15 նահանգներից մեկի՝ Արցախի լեռնային մասը: Իսկ Արցախը՝ մեծ Հայքի տասներորդ նահանգը, զբաղեցնում էր Կուր և Արաքս գետերի միջև գտնվող հարթավայրի զգալի մասը և դրանից դեպի արևմուտք ընկած Աղստև գետի ավազանից մինչև Արաքսի հովիտը ձգվող լեռնային ու նախալեռնային ամբողջ տարածքը: Տարածքային որոշ տարբերություններով հայկական այդ նահանգը պատմական տարբեր ժամանակաշրջաններում կոչվել է Արցախ, Արդախ, Ուրդիխե, Արձախ, Արձախա աշխարհ, Արցախամայր աշխարհ, Խաչեն Խարենք, Փոքր Սյունիք, իսկ ավելի ուշ՝ Ղարաբաղ:

Առաջին անգամ Արցախը Ուրտեխե կամ Ուրտեխիսի անվանումներով հիշատակվում է Հայաստանի ուրարտական ժամանակաշրջանի սեպագիր արձանագրություններում:

Հին հունական, հռոմեական, ինչպես նաև միջնադարյան, հայ պատմիչների վկայությամբ՝ հնուց ի վեր Արցախը և Ուտիքը կազմել են Մեծ Հայքի անբակտելի մասը: Այս իրողությունը հավաստող փաստագրական հարուստ նյութեր և տեղեկություններ են պահպանվել Ստրաբոնի, Պլուտարքոսի, Պլինիոսի, Պտղոմեոսի, Մ. Խորենացու, Փ. Բյուզանդի, Ագաթանգեղոսի և հայ ու օտարազգի շատ պատմիչների գործերում:

1920-ական թթ. բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավարությունը, քեմալական Թուրքիային զիջեց Արևելյան Հայաստանի զգալի մասը՝ ամբողջ Կարսի մարզը, Երևանի նահանգից Մուրմալուի գավառը (22 հազ. քառ. կմ), իսկ մյուս մասը՝ Նախիջևանն ու Արցախը (շուրջ 15 հազ. քառ.կմ) զոհաբերեց Ադրբեջան անունը ստացած նոր հանրապետությանը:

Ադրբեջանին բռնակցված Արցախի մի մասում 1923թ. ստեղծվում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ): Մինչ այդ՝ Նախիջևանում

հատակ կերպով շարունակվում էր հայաթափության ծրագրված քաղաքականությունը:

1988թ. Ղարաբաղի ժողովուրդը մի կողմ նետեց Ադրբեջանի 70-ամյա գաղութային լուծը. հռչակեց անկախություն:

1.2. Արցախի էներգետիկայի զարգացման խորհրդային շրջանը

Նախկինում Արցախի գրեթե բոլոր գյուղերում ջրաղացներ կային: XX դարի սկզբներին արդեն շատ գյուղերում այրաղացները մեքենայացվել էին: Մասնավորապես Գյունե Ճարտար և Գյունե Կալեր գյուղերում կային մեքենաաղացներ, որոնց արտադրողականությունը բարձր էր:

Ներկայումս Հունտտի կիրճում և նրա շրջակայքում մոտ 12 ջրաղացների ավերակներ են պահպանվել: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին այս ջրաղացները Շուշի քաղաքին այլուր են մատակարարել: Շուշի բերդաքաղաքին այլուր մատակարարող ջրաղացների մեծամասնությունը գտնվում էին Կարկառ գետի վրա՝ Հունտտի տարածքում: Հայաստանում ջրաղացները տարածված են եղել դեռևս Ուրարտական ժամանակներից, որի մասին վկայում է Վարազա լեռան (Վան քաղաքից հարավ-արևելք) վրա գտնված, 92 սանտիմետր տրամագծով ջրաղացքարը: Ջրաղացները կառուցվում էին գետակների և առուների վրա, այնպիսի տեղերում, որ հնարավոր լիներ փայտե, քարե, հետագայում նաև մետաղյա խողովակով թեթևությամբ գահավիժող ջրի ուժով պտտեցնել թափանիվը, դրա միջոցով վերին կամ շարժական ջրաղացքարը: Հաճախ միևնույն առվի կամ գետակի վրա կառուցվել են տասնյակ ջրաղացներ, որոնք սպասարկել են շրջակա բնակավայրերին: Դրանք բաղկացած էին ջրաղացքարից, որը տեղադրված էր նույն մեծությամբ, բայց ավելի բարակ, մի այլ անշարժ քարի վրա, ուղղաձիգ ուղղությամբ մի առանցքից, որը վերևում հատուկ հարմարանքով մտնում էր ջրաղացքարի վրա փորված փոսիկի մեջ, իսկ ներքևի ծայրում իր վրա կրում էր թևավոր անիվ: Ջուրը մի քանի մետր բարձրությունից հարվածելով թևավոր անիվին, այն դնում էր շարժման մեջ: Թևավոր անիվի շարժումը ուղղահայաց առանցքի միջոցով հաղորդվում էր ջրաղացքարին, և վերջինս էլ սկսվում էր պտտվել: Ջրաղացքարի շարժումը կանոնավորում էին փայտյա հատուկ լծակով, որը կապված էր պտտվող մեխանիզմին. այդ նույն արդյունքին կարելի էր հասնել նաև ջրի ավելացման ու պակասեցման միջոցով: Ջրաղացն իր կառուցվածքով մի խղճուկ հյուղակ էր:

Ասկերանի շրջանի Ջրաղացներ գյուղն իր անունը ստացել է հավանաբար շատ ջրաղացներ ունենալու պատճառով: Մինչև այժմ պահպանվել են

Աղաբեկանց եռաստիճան ջրաղացի, Խուջունց և Ջալալանց ջրաղացների ավերակները:

Էներգետիկան տնտեսության այն ճյուղն է, որը զբաղվում է էներգիայի ստացման, տեղափոխման և բաշխման հարցերով: Դարեր շարունակ մարդկությունը էներգիա փնտրելու ակնկալիքով ստեղծել է բազմաթիվ սարքեր և սարքավորումներ, որոնք հնարավորություն են տվել նրան ապրելու: Ջրաղացներից սկսած մարդը փորձել է այն կատարելագործել մինչև միջուկային էներգիայի օգտագործում: Ջրի ուժով աշխատող ջրաղացները, քամու էներգիայով աշխատող հողմաղացները մեծ դեր կատարեցին բնագավառը զարգացնելու, նորանոր հաջողությունների հասնելու համար: Հայաստանը գտնվելով աշխարհաքաղաքական դժվարին դրության մեջ միշտ էլ փորձել է ելք գտնել ստեղծված դժվարին իրավիճակներից:

Ցանկացած երկրի տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի էներգետիկայի զարգացման մակարդակը: Այդ պատճառով ադրբեջանական իշխանությունները ամեն ինչ արել են, որպեսզի Արցախի էներգետիկան չգարգանա: Փոքր հզորությամբ էլեկտրակայաններից շատերը դարձել էին պահեստ և ըստ նշանակության չէին օգտագործվում: Միայն անկախություն ստանալուց հետո սկսեց բուռն զարգացում ապրել էներգետիկ տնտեսությունը:

Հայաստանում 20-րդ դարի սկզբին շահագործվում էին 13 փոքր էլեկտրակայաններ՝ 3165 կՎտ գումարային հզորությամբ: 13 կայաններից 9-ը աշխատում էին ջրի էներգիայի հաշվին, 4-ը՝ ջերմային (աշխատում էին ներքին այրման շարժիչներով): Տարեկան արտադրվում էր 5.1 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիա: Համեմատության համար նշեմ, որ 20-րդ դարի սկզբին աշխարհում տարեկան արտադրվել է մոտ 15 միլիարդ կՎտժ էլեկտրական էներգիա: Հայաստանում առաջին հիդրոէլեկտրակայանը կառուցվել է 1903 թվականին Դիլիջան քաղաքում 10 կՎտ հզորությամբ¹: Աղստև գետից առերկվող ջրով պտտվող անիվը աշխատեցնում էր փայտաստղոցարանի շրջանաձև սղոցը:

Աշխարհի առաջին էլեկտրակայանը շահագործման է հանձնվել 1882թ. սեպտեմբերի 4-ին Նյու Յորքում 500 կՎտ հզորությամբ: Այն աշխատում էր ածխով: 1890թ. կայանը այրվել է: 1882թ. սեպտեմբերի 30-ին շահագործման է հանձնվել առաջին հիդրոէլեկտրակայանը 12.5 կՎտ հզորությամբ: Այդ ժամանակվա էլեկտրակայանները արտադրում էին հաստատուն հոսանք, որի դեպքում կորուստները մեծ էին լինում: Ռուսաստանի էլեկտրակայաններում

¹ Պապիկյան Ս.Ռ., Հայաստանի էներգետիկան մինչև 1920 թվականը, «Հայաստան» հրատ., Եր., 2003թ.:

տեղակայված ագրեգատների գումարային հզորությունը 1913թ. կազմում էր 1.1 միլիոն կՎտ:

Ջրաղացներ Հայաստանում եղել են շատ հին դարերում և ծառայել են բնակչությանը:

1989թ. Հայաստանում էներգառեսուրսների սպառման նվազում է նկատվում: 1991թ. Հայաստանում այդ ցուցանիշը կազմում էր մոտ 60 տոկոս, 1992թ.՝ 40 տոկոս, 1993թ՝ 25 տոկոս:

1993թ. ջերմամատակարարման համակարգերը ապահովում էին Հայաստանի պահանջարկի մոտ հինգ տոկոսը: 1988թ. մեկ շնչին ընկնող վառելիքաէներգետիկական պաշարների սպառումը հասնում էր 3620կգ պայմանական վառելիք: 1991թ. այդ ցուցանիշը նվազեց դառնալով 2780 կգ, 1993թ.՝ 1200կգ:

Թվերը ցույց են տալիս, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո էներգետիկ ճգնաժամի պայմաններում անհրաժեշտ էր հաղթահարել բազում դժվարություններ:

Ներկայումս մեր կողմից կառուցված հիդրոէլեկտրակայանների մեծ մասը գտնվում է թշնամու վերահսկողության տակ: Հարկ է նշել, որ այդ ընթացքում հիդրոէլեկտրակայանների հիդրոուժային սարքավորումների մի մասը հնարավոր եղավ ապամոնտաժել և բերել Հայաստան:

Պատերազմից առաջ Արցախի Հանրապետությունում մեծ ծավալի աշխատանքներ էին կատարվում էներգետիկայի զարգացման ուղղությամբ: Արցախում շահագործման մեջ էին գտնվում 27 հիդրոէլեկտրակայաններ, որտեղ տեղադրված դրվածքային գումարային հզորությունը կազմում էր 192 ՄՎտ: Տարեկան կարող էր արտադրվել 887 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիա:

Ներկայումս գոյություն ունեցող հիդրոէլեկտրակայաններից Արցախի տարածքում է մնացել վեց ՀԷԿ՝ Մարսանգի, Գետավանի, Թրդիի կասկադի չորս ՀԷԿ-երը: Այսինքն՝ 192 ՄՎտ դրվածքային գումարային հզորությունից մեր տարածքում է գտնվում 75 ՄՎտ գումարային հզորություն: Էլեկտրահաղորդման բարձրավոլտ զծերը, որոնք Արցախը կապում են Մայր Հայաստանի հետ, անցնում են Լաչինի տարածքով:

Նախախորհրդային Ղարաբաղի միակ էլեկտրակայանը գտնվում էր Շուշի քաղաքում, որն ուներ ընդամենը 30 կՎտ հզորություն:

Լեռնային Ղարաբաղի տարածքում կար խորհրդային խշխանության տարիներին կառուցված երեք հիդրոէլեկտրակայան: Դրանցից համեմատաբար հինը Ստեփանակերտի ՀԷԿ-ն է, որը գործում էր 1930-ական թվականներից: Այն ուներ փոքր հզորություն և երկար ժամանակ բավարարում էր միայն Ստեփանակերտի պահանջները: 1940-ական թվականներին կառուցվել է մի փոքր հիդրոէլեկտրակայան Մարտակերտի շրջանի Մատաղիս բնա-

կավայրի մոտ: Համեմատաբար հզորը Մարսանգի շէԿ-ն է, որը կառուցվել է Մարտակերտի շրջանում Թարթառ գետի վրա, շահագործման է հանձնվել 1970-ական թվականներին: Հզորությունը կազմում է 50 հազար կՎտ: 1988-1993թթ. Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով Մարսանգի շէԿ-ը նույնպես չէր գործում: Այժմ այն լրիվ հզորությամբ վերագործարկվում է: 1940թ. ԼՂՀ-ում արտադրվել է 1.51 մլն կՎտժ էլեկտրա-էներգիա, իսկ 1988թ.՝ 57.8 մլն կՎտժ:

Ղարաբաղի տնտեսության ամենախոշոր ճյուղը էներգետիկան է: Դա իրականացվում է Թարթառ գետի վրա գտնվող Մարսանգի հիդրոէլեկտրակայանի միջոցով: Այն շահագործման է հանձնվել 1976 թվականին և տարեկան արտադրում էր 65 մլն կՎտժ էլեկտրական էներգիա:

Ղարաբաղում փոքր հիդրոէլեկտրակայաններ շահագործվել են նաև նախկինում: Սակայն էժան զնահատվող վառելիքի պայմաններում համարվել են անշահավետ և շահագործումից դուրս են եկել: Դրանց թվին է պատկանում Մատաղիսի հիդրոէլեկտրակայանը, որը հանվել է շահագործումից դեռևս 1966 թվականին: Հանրապետությունում հնարավոր է կառուցել փոքր հզորության 78 հիդրոէլեկտրակայան 175 ՄՎտ զումարային հզորությամբ: Այն հնարավորություն կտա տարեկան արտադրել 612 մլն կՎտժ էլեկտրա-էներգիա և խնայել ավելի քան 215 հազար տոննա վառելիք: Միայն Թարթառ գետի վրա հնարավոր է կառուցել 24 փոքր հիդրոէլեկտրակայան տարեկան մոտ 507 մլն կՎտժ էլեկտրական էներգիայի արտադրությամբ: Որպես առաջնահերթ երաշխավորվում էր 121 ՄՎտ զումարային հզորությամբ 22 հիդրոէլեկտրակայանների կառուցումը, որոնք կարող են տարեկան արտադրել մինչև 431 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Ներդրումներ լինելու պարագայում հնարավոր էր 4-5 տարում իրականացնել այդչափ էլեկտրական էներգիայի արտադրության ծրագիրը: Առաջնահերթ էր Կարասիի հիդրոէլեկտրակայանի կառուցումը: Հաջորդը կլինեք Թրեվե գետի վրա կառուցվելիք կասկաղը՝ երեք շէԿ-երով: Մյուսը Մատաղիսի շէԿ-ն է: Կկառուցվեն փոքր ջրամբարներ, և Մարսանգից բաց թողնվող ջուրը երկու անգամ կօգտագործվի էներգետիկ նպատակներով: Ծրագրվում է նաև Մատաղիսի ջրամբարի շինարարությունը: Այն կօգտագործվի նաև էներգետիկ նպատակներով:

Եվլախ-Աղղամ-Ստեփանակերտ-Գորիս-Նախիջևան գազամուղի կառուցումից հետո (1980-ական թվականների սկզբներին) մարզի բնակավայրերի զգալի մասը բնական գազ է ստանում: Դա նկատելի չափով բարելավել է բնակչության մի մասի (Մարտակերտի, Ասկերանի շրջանների, Ստեփանակերտ, Շուշի քաղաքների) կենցաղային պայմանները, ձեռնարկություններում օգտագործվող վառելիքի մատակարարման վիճակը:

Ասկերանի շրջան

Ասկերանը 1967 թվականից քաղաքատիպ բնակավայր է: Էլեկտրաֆիկացվել է 1955թ.: Գազիֆիկացված է:

Ավետարանոց (Չանախչի) գյուղը գտնվում է Ասկերանից՝ 38կմ, իսկ Ստեփանակերտից՝ 21 կմ հեռավորության վրա: Էլեկտրաֆիկացվել է 1963թ.:

Նորագյուղը գտնվում է Ասկերանից 5կմ, Ստեփանակերտից՝ 18կմ հեռավորության վրա: Գազիֆիկացված է: Էլեկտրաֆիկացվել է 1961թ.:

Խանաբաղը գտնվում է Ասկերանից 4.5 կմ դեպի հյուսիս-արևելք, հեռավորությունը Ստեփանակերտից 20 կմ է: Գազիֆիկացված է: Էլեկտրաֆիկացվել է 1958թ.:

Այգեստան գյուղը գտնվում է Ասկերանից 14 կմ, իսկ Ստեփանակերտից 7 կմ հեռավորության վրա: Էլեկտրաֆիկացվել է 1961թ.:

Արցախաշեն՝ 1961թ.:

Բաղարա՝ 1961թ.:

Շոշ գյուղը գտնվում է Ասկերանից 27 կմ դեպի հարավ (Շուշի քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա), հեռավորությունը Ստեփանակերտից 8 կմ է: Էլեկտրաֆիկացվել է 1931թ.:

Խրամորթ՝ 1958թ., Ղարաբուլաղ՝ 1963թ., Փրջամալ՝ 1959թ., Նախիջևանիկ՝ 1959թ., Խաչեն (Սեյդիշեն)՝ 1961թ., Կարմիր գյուղ՝ 1963թ., Դահրավ՝ 1967թ., Խանաձախ (Խնաձախ)՝ 1959թ., Ներքին Ազնեք՝ 1961թ., Վերին Ազնեք՝ 1981թ., Սդնախ՝ 1961թ., Սարդարաշեն՝ 1962թ., Խաչմաչ՝ 1963թ., Դադուշեն (Քարաշեն)՝ 1961թ., Հարավ՝ 1958թ., Ռն՝ 1961թ., Խանցք՝ 1962թ., Ղշլաղ՝ 1961թ., Մաղաթքենդ (Մաղաթաշեն)՝ 1961թ., Քոռանի՝ 1927թ., Սարաշեն (1952թ.), Ջրաղացներ (1951թ.), Աղբուլաղ (1961թ.), Մխիթարաշեն (1931թ.), Մեհտիշեն (1962թ.), Վարազաբուն (Արանզամին)՝ 1959թ., Դահրազ (1961թ.), Քյաթուկ (1960թ.), Մոշխմհատ (1962թ.), Փառուխ (1958թ.), Հիլխ (1961թ.):

Մարտակերտի շրջան

Մարտակերտ (1947թ.), Լենինավան (1951թ., գազ.), Մարոզյան Մարով (1951թ.), Լևոնարխ (1951թ.), Թալիշ (Թարիհնջ) 1958թ., Չալու (1954թ.), Մատադիս 1954թ., Տոնաշեն (1954թ.), Յարմջա (1967թ.), Ներքին Հոռաթաղ (1948թ.), Կուսապատ (1949թ.), Գյուլաթաղ (1966թ.), Մոխրաթաղ (1956թ.), Աղաբեկալինջ (1957թ.), Մաղավուզ (1950թ.), Հակոբ Կամարի (Լուլասագ) 1947թ., Մինգրեյսկ (1948թ.), Ջրաբերդ (1958թ.), Մեծ Շեն (1949թ.), Չլրան (1964թ.), Ղազարահող (1967թ.), Պողոսազումեր (1964թ.), Մեհմանա (1964թ.), Ղազանչի (1963թ.), Կիչան (1963թ.), Ծմակահող (1963թ.), Շահմասար (1963թ.), Վաղուհաս (1967թ.), Խունզուրալա (1967թ.), Հարությունազումեր (Կարմիր Քար) 1965թ., Վերին Հոռաթաղ (1964թ.), Կոճողոտ (Կճողոտ) 1964թ., Դրմբուն (1964թ.),

Չազիկ (1967թ.), Հաթերք (1965թ.), Զարդախաչ (1964թ.), Չափուր (1964թ.),
Գետավան (1967թ.), Չարեքտար (1964թ.)

Մարտունու շրջան

Մարտունի (1958թ.), Ճարտար (1959թ.), Բերդաշեն (Ղզղալա) 1961թ.,
Գիշի (1960թ.), Սոս (1960-ական թթ.), Հերիեր (1963թ.), Քերթ (1961թ.), Քար-
հունջ (1961թ.), Մաճկալաշեն (1961թ.), Մովստեղ (1968թ.), Խերխան (1963թ.),
Շեխեր (1960-ական թթ.), Սարգսաշեն (1960թ.), Կոլխոզաշեն (1964թ.), Մամա
(1964թ.), Ղավախան (1964թ.), Խնուշինակ (1960թ.), Ննզի (1960թ.), Հաղորտի
(1961թ.), Մուշկապատ (1961թ.), Սպիտակաշեն (1961թ.), Կաղարծի (1961թ.),
Աշան (1960թ.), Էմիշճան (1960թ.), Սյուրիշեն (1960թ.):

Հաղորտի շրջան

Հին Թաղլար (1964թ.), Տող (1957թ.), Տումի (1957թ.), Ազոխ (1961թ.),
Տրախտիկ (Դրախտիկ) 1958թ., Խծաբերդ (1969թ.), Խանձաձոր (Աղաջաքենդ)
1964թ., Առաքյուլ (Առաքյալ) 1928թ., Բանազուր (1939թ.), Քոչքեկ (1950-ական
թթ.), Թաղասեռ (Թաղասեր) 1958թ., Էդիլու (1961թ.), Արփազյաղուկ (1964թ.),
Աղբուլաղ (1960թ.), Բլուրան (Պլլթթան) 1962թ., Խրմանջուղ (1962թ.), Մամա-
տաձոր (1963թ.), Մելիքջանլու (1962թ.), Դոլունլար (1962թ.), Սյուկուրաղար
(1969թ.), Մամձոր (1962թ.), Հակակու (Հըկակու) 1957թ., Թաղոտ (1951թ.)

Շուշիի շրջան

Շրջակայքում կան պատմական հուշարձաններ, կամուրջներ, ջրաղաց-
ներ, քարանձավային շինություններ: Շրջապատում պահպանվել են հին
գյուղատեղիներ (15-17 դդ.), խաչքարեր (13դ.), Ս. Աստվածածին եկեղեցին
(19-րդ դ.), ջրաղացների փլատակներ, բազմաթիվ աղբյուրներ:

Բերդաձորը (1955թ.), Մեծ Շեն (1966թ.), Եղցահող (1966թ.):

Կլիման

Լեռնային Ղարաբաղի կլիմայական պայմանները ընդհանուր առմամբ
մեղմ ու չափավոր են: Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +10,5°C:
Ցածրադիր վայրերում՝ Մարտունու, Մարտակերտի շրջանների արևելյան
մասերում, միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է +13,5°C, իսկ բարձր
լեռնային վայրերում՝ +7,2°C:

Ամենացուրտ ամիսը հունվարն է, որի միջին ջերմաստիճանը կազմում է
-0,2°C: Փետրվարի միջին ջերմաստիճանը +0,9°C է:

ԼՂՀ-ի կլիմայական պայմաններին վերաբերող հիմնական ցուցանիշ-
ները բերված են աղյուսակում:

*Օդի միջին ամսական և միջին տարեկան ջերմաստիճանը
ԼՂՀ տարածքում ըստ գոտիների, °C*

<i>Ամիսը</i>	<i>Ցածրադիր գոտի (ծովի մակերևույթից մինչև 400մ բարձրությամբ)</i>	<i>Նախալեռնային գոտի (ծովի մակերևույթից 400մ մինչև 610մ բարձրությամբ)</i>	<i>Միջին լեռնային գոտի (ծովի մակերևույթից 700մ մինչև 1100մ բարձրությամբ)</i>	<i>Լեռնային գոտի (ծովի մակերևույթից 1300մ մինչև 1800մ բարձրությամբ)</i>	<i>Միջինը ԼՂՀ-ում</i>
Հունվար	1.8	1.0	0.0	-2.6	-0.2
Փետրվար	3.0	2.1	1.2	-1.9	0.9
Մարտ	6.5	4.9	4.0	0.9	3.8
Ապրիլ	12.0	9.7	9.3	5.8	8.9
Մայիս	17.5	16.1	14.6	10.7	14.3
Հունիս	22.1	20.5	18.6	14.0	18.3
Հուլիս	25.6	23.8	22.1	17.2	21.7
Օգոստոս	25.2	23.3	21.8	17.1C	21.4
Սեպտեմբեր	20.3	18.4	17.1	13.0	16.8
Հոկտեմբեր	14.9	12.9	11.9	8.8	11.7
Նոյեմբեր	8.5	7.4	6.2	3.5	6.1
Դեկտեմբեր	4.2	2.7	2.3	-0.1	2.0
Միջին տարեկանը	13.5	11.8	10.8	7.2	10.5

Ստեփանակերտում միջին տարեկան ջերմաստիճանը $+10,9^{\circ}\text{C}$ է: Հունվարի միջին ջերմաստիճանը -0.2°C է, իսկ հուլիսինը՝ $+22.4^{\circ}\text{C}$, որը միջին ամսական ամենաբարձր ջերմաստիճանն է այստեղ:

Անտառներն ու թփուտները զբաղեցնում են ավելի քան 160 հազ. հա տարածք: Անտառներում փայտանյութի ամբողջ պաշարը կազմում է ավելի քան 16 մլն մ³:

1923 թվականին Ստեփանակերտի Արմենավան թաղամասում տեղադրված 35 կՎտ հզորության դիզելային գեներատորը էլեկտրական լամպը վառեց Ստեփանակերտում: 1930 թվականին թողարկվեց Կարկառ գետի վրա կառուցված 480 կՎտ հզորության հիդրոէլեկտրակայանը: Նրանց հաջորդեցին փոքր հզորության դիզելային էլեկտրակայանների կառուցումը Ստեփանակերտում (այժմյան Քաղցանցի հարակից շուկայի շենքը) և շրջկենտրոններում:

1940 թվականին փոքր հիդրոէլեկտրակայանի (ՓՀԷԿ) շինարարություն սկսվեց Թարթառ գետի վրա՝ Մատաղիս գյուղին հարակից, որը գործարկվեց 1947 թվականին՝ էլեկտրական էներգիա մատակարարելով նաև հարևան հանրապետության Միր-բաշիր քաղաքին: 1954 թվականին շահագործման հանձնվեց Ադդամ-Ստեփանակերտ 35կՎ օդային գծը և 35/6 կՎ 2×1800 կՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայանը, որը ապահովեց Ստեփա-

նակերտի և իր արվարձանների էլեկտրամատակարարումը, ինչպես նաև Շուշի քաղաքը: Կառուցվեց Ասկերանի 35/10 կՎ ենթակայանը՝ ապահովելով էլեկտրամատակարարում Ասկերանին, քիչ անց նաև շրջակա գյուղերին՝ 10 կՎ օդային գծերով:

Հաղորդի շրջանի Իշխանագետի վրա 1955 թվականին սկսեցին կառուցվել միանգամից երեք փոքր ՀԷԿ-եր: 1957-ին գործարկեցին Տումի և Մեծ Թաղլար ՓՀԷԿ-երը 55 և 50 կՎտ հզորությամբ, 1958-ին 80 կՎտ հզորությամբ Տողի ՓՀԷԿ-ը:

1959-1963թթ. կառուցեցին

Մարտունու շրջանում՝

110/35/10 կՎ, Մարտունի և 35/10 կՎ Կարմիր Շուկա տրանսֆորմատորային ենթակայաններ, հետագայում՝ 35/10 կՎ, Գևորգավան տրանսֆորմատորային ենթակայանը՝ իրենց 10 կՎ օդային գծերով:

Հաղորդի շրջանում՝

35/10 կՎ, Հաղորդ, հետագայում՝ 35/10 կՎ, Հին Թաղլար և 35/10 կՎ, Առաքյալ տրանսֆորմատորային ենթակայանը իրենց 10 կՎ օդային գծերով:

Մարտակերտի շրջանում՝

110/10 կՎ, Կիչան, 35/10 կՎ, Մարտակերտ, հետագայում՝ 35/10կՎ, Մատաղիս, 35/10 կՎ, Կարմիրավան, 35/10կՎ, «Լևոն Արխ» տրանսֆորմատորային ենթակայանները՝ իրենց 35կՎ և 10կՎ օդային գծերով:

Ասկերանի շրջանում՝

35/10կՎ «Ասկերան» տրանսֆորմատորային ենթակայանը՝ իր 10կՎ օդային գծերով:

1964 թվականին շահագործման հանձնվեց 110 կՎ Աղդամ-Ստեփանակերտ-Շուշի-Լաչին-Շինուհայր օդային գիծը, միաժամանակ կառուցվեցին 110/35/10 կՎ «Ստեփանակերտ» 110/10կՎ «Շուշի» 110/10 կՎ «Լիսագոր» և 110/35/10 կՎ «Բերձոր» ենթակայանները, իրենց 35 և 10 կՎ օդային գծերով: Այս ամենի իրագործումը հնարավորություն ընձեռեց Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում ստեղծել համեմատաբար կայուն էներգետիկ համակարգ, որի բազայի վրա ստեղծվեց Ստեփանակերտի էլեկտրացանցը, այն 2005 թվականին վերանվանվեց «Արցախէներգո» ՓԲԸ:

1976 թվականին շահագործման հանձնվեց Թարթառ գետի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանը՝ 2x25ՄՎտ հզորությամբ, 63000 կՎԱ հզորության, 110/35/10 կՎ տրանսֆորմատորով: 1992 թվականին ավարտելով 110կՎ Թարթառ ՀԷԿ-Ստեփանակերտ օդային գիծը, կառուցվեցին նոր 110կՎ ենթակայաններ՝ 110/35/10 կՎ «Հաթերք» և 110/10 կՎ «Վանք» և «Թարթառ» ՀԷԿ-ը մտան Հայաստանի Հանրապետության էներգահամակարգ: 1960-1970թթ. գործարկվեցին նաև 110 ԿՎ լարման էլեկտրահաղորդման գծերը, որոնք

Հայաստանի էներգահամակարգը կապում էին Վրաստանի և Ադրբեջանի էներգահամակարգերի հետ: Դրանցից էին 110 ԿՎ լարման «Լավվար», «Շինուհայր» էլեկտրահաղորդման գծերը: Վերջինս հայկական էներգահամակարգը կապում էր Լեոնային Ղարաբաղի Հանրապետության էներգահամակարգի հետ: 110 կՎ լարման «Շինուհայր» էլեկտրահաղորդման գիծը աշխատում էր ճառագայթային ռեժիմով ԼՂՀ-ին հզորություն առաքելու համար: 1993թ. Թարթառի ՀԷԿ-ը վերականգնելուց հետո կայանը «Շինուհայր» էլեկտրահաղորդման գծի միջոցով սկսեց զուգահեռ աշխատել հայկական էներգահամակարգի հետ:

1.3. Արցախի էներգետիկայի զարգացումը անկախացումից հետո

Մինչև 1990-ական թվականները այստեղ տարեկան արտադրվել է առավելագույնը 80.9 մլն կՎտժ էլեկտրական էներգիա: Ղարաբաղում վերջին տարիների ընթացքում արտադրվել է.

							<i>մլն կՎտժ</i>	
1992թ.	1993 թ.	1994 թ.	1995 թ.	1996 թ.	1997 թ.	1998 թ.	1998 թ.	
8.2	12.5	136.5	81.6	58.7	-	64.5	82.8	

1999 թվականին էներգետիկայի բնագավառում գործում էր հայաստանյան մեխանիզմը: Այսինքն, յուրաքանչյուր շրջան ուներ առանձին բաշխիչ համակարգ: Ղարաբաղում գոյություն ուներ չորս բաշխիչ ցանց: Հանրապետությունը նախկինում էլեկտրական էներգիայի մեծ մասը ստանում էր Ադրբեջանից: Պատերազմից հետո էլեկտրացանցը քայքայված էր: Այն վերակառուցվեց այն ամենով, ինչ այդ պահին հնարավոր էր: Բաշխիչ ցանցերում կորուստները կազմում էին 40-45 տոկոս: Բնականոն գործող միակ ցանցը Ստեփանակերտինն էր, որը մեկուսացված էր մյուսներից:

Չորս շրջանների ցանցերը միացվեցին մեկ համակարգի մեջ: Յուրաքանչյուր տարի Հայաստանից Ղարաբաղը ստանում էր մոտ 100 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: 1999 թվականին ենթակայանները վերականգնելու համար հանրապետության բյուջեից ներդրվել է 30 միլիոն դրամ: Ավելացել է էլեկտրական էներգիայի վարձի հավաքագրման մակարդակը: Կորուստների մակարդակը 40-ից նվազել է 22 տոկոսի: Էլեկտրական էներգիան բնակչությանը վաճառվում էր 20 դրամով, իրավաբանական անձանց՝ 25 դրամով:

2000 թվականին ճշտվել է Լեոնային Ղարաբաղի հիդրոէներգետիկական պաշարների օգտագործման սխեման: Ըստ այդ սխեմայի՝ առաջարկվում էր

կառուցել 16 հիդրոէլեկտրակայան, 126.7 ՄՎտ զումարային հզորությամբ և տարեկան 431.4 միլիոն կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրությամբ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կառուցվելիք հիդրոէլեկտրակայանների հիմնական ցուցանիշները.

	Գետի անվանումը	Գետի երկարությունը, կմ	ՀէԿ-երի քանակը, հատ	Հզորությունը, ՄՎտ	Էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրությունը, մլն կՎտժ
1.	Թարթառ	200	8	114.2	372.1
2.	Խաչինգետ	119	1	3.3	18.7
3.	Կարկառ	109	4	6.4	29.5
4.	Վարանդա	81	1	0.34	2.1
5.	Իշխանագետ	74	2	2.56	9.0
	Գումարային		16	126.8	431.4

ԼՂՀ-ն տարածքը 1988թ. կազմում էր 4.4 հազար քառակուսի կիլոմետր: Գտնվում է Փոքր Կովկաս լեռնաշղթայի հարավարևելյան մասում: Մարզի մակերևույթը տիպիկ լեռնային է, այն ընդգրկում է Ղարաբաղի բարձրավանդակի արևելյան հատվածը և արևմուտքից թեքությամբ իջնում է դեպի արևելք՝ ձուլվելով Կուր-արաքսյան ընդարձակ հարթավայրի մեծ մասը կազմող Արցախի դաշտավայրին:

Մակերևույթի այդպիսի թեքության պատճառով էլ Լեռնային Ղարաբաղի համարյա բոլոր գետերը, սկիզբ առնելով արևմտյան և հարավարևմտյան ամբողջ երկարությամբ ձգվող լեռներից, հոսում են դեպի արևելք ու հարավ-արևելք, դեպի նշված դաշտավայրը: Լեռնային գետերը Ղարաբաղ լեռնաշխարհի մակերևույթը վեր են ածել անդնդախոր ձորերի ու գեղատեսիլ գետահովիտների: Նշանավոր են համեմատաբար ընդարձակ յոթ գետահովիտներ: Դրանք Իշխանագետ, Վարանդա, Խոնաշեն, Կարկառ, Խաչեն, Կավարտ՝ Կուսապատ վտակով, Թարթառ գետերի հովիտներն են: Հյուսիսային մասում զգալի տարածք է զբաղեցնում Ինջա գետի գեղատեսիլ հովիտը: Առավել ընդարձակը Թարթառ գետի հովիտն է՝ Մարտակերտի շրջան: ԼՂՀ տարածքն ունի խիստ կտրտված լեռնային մակերևույթ: Համեմատաբար հարթավայրային են Մարտունու և Մարտակերտի շրջանների ցածրադիր մասերը: Տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1100 մետր:

Հունվարյան միջին ջերմաստիճանը կազմում է -1.2°C , փետրվարյանը՝ -0.6°C : Ձմռան ամիսներին համեմատաբար ցուրտ գոտին ընդգրկում է բարձր լեռնային մասը, առավելապես հյուսիսային հատվածը՝ Մոռլի լեռնաշղթան:

Մթնոլորտային տեղումների քանակը տարեկան տատանվում է 250-830 մմ-ի սահմաններում:

Լեռնային Ղարաբաղում կան բազմաթիվ ոչ խոշոր, բայց արագահոս գետեր ու գետակներ: Դրանց մեծ մասը պատկանում է Կուր, իսկ փոքր մասը՝ Արաքս գետերի ավազաններին: Լեռնային Ղարաբաղի գետերը ջրառատ չեն, հատկապես ամռան ամիսներին խիստ սակավաջուր են դառնում: Մնման աղբյուրներն են ձնհալը և անձրևները: Բոլոր գետերն էլ լեռնային բնույթ ունեն, հոսում են մեծ թեքություններով, հետևաբար ունեն էներգետիկ նշանակություն:

Համեմատաբար խոշորը Թարթար (պատմական անցյալում կոչվում էր Տրսու) գետն է: Այն սկիզբ է առնում Ղարաբաղի լեռնաշղթայի հյուսիսային մասերում գտնվող աղբյուրներից ու, հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ անցնելով Մարտակերտի, Միր Բաշիրի ու Բարդայի շրջաններով, թափվում է Կուր գետը: Թարթարի վերին հոսանքի խոշոր վտակը Թուրազայ գետն է, որն սկիզբ է առնում Սոռվի լեռնաշղթայից և Մաղավուզ գյուղից հինգ կիլոմետր դեպի արևմուտք ընկած վայրում միանում Թարթարին: Այս գետն իր վտակներով մարզի տարածքում հոսում է մեծ թեքություն ունեցող, բայց անտառապատ լեռնալանջերով:

Թարթար գետի երկարությունը հասնում է 200 կմ, գետավազանի տարածությունը՝ ավելի քան 2650 քառ.կմ: Գարնան վերջերին ու ամռան սկզբներին առատ տեղումների և ձնհալքի հետևանքով Թարթարը հաճախակի խիստ վարարում է և դուրս է գալիս ափերից:

Սարսանգի հիդրոէլեկտրակայանի ջրամբարը կարգավորել է գետի ռեժիմը: Սարսանգի հիդրոէլեկտրակայանից բացի, որը շահագործման է հանձնվել 1970-ական թվականներին, Թարթարի վրա գործում է նաև Մատաղիսի ՀԷԿ-ը, որը շահագործման է հանձնվել 1940-ական թվականներին:

Իր մեծությամբ երկրորդը Խաչեն գետն է, որը նույնպես հոսում է Մարտակերտի շրջանի տարածքով, համարյա Թարթարին զուգահեռ ուղղությամբ: Խաչենը սկիզբ է առնում Ղարաբաղի լեռնաշղթայի հյուսիսային մասում գտնվող Կարմրասար (Ալադայա) լեռնազանգվածի լանջերից: Այն իր վտակներով հոսում է Վանք, Առաջաձոր, Քոլատակ, Ծմակահող, Շահմասուր գյուղերի տարածքով: Խաչեն գետի մեծ վտակը Քոլատակն է, որը, սկիզբ առնելով Կաչադակասարից, վերին հոսանքով հոսում է Ասկերանի շրջանի տարածքով: Խաչեն գետի երկարությունը 119 կմ է, ջրհավաք ավազանի տարածքը՝ շուրջ 660 քառ. կմ: Թարթարի նման՝ այս գետը նույնպես գարնան վերջերին հաճախակի հորդանում է և դուրս գալիս ափերից: Հարթավայրային մասում նրա ջրերը հավաքվում և հիմնականում օգտագործվում են Աղդամի շրջանի ռոտզման նպատակներով: Խաչենի հովիտը (միջին և վերին

հոսանքում) նույնպես անտառապատ է: Մարտակերտի շրջանի հյուսիսային մասով հոսում է Կուր գետի մյուս վտակը՝ Ինջա գետը, որը սկիզբ է առնում Մոռվի լանջերից:

Մյուսը Կարկառ գետն է, որը բազմաթիվ վտակներով սկիզբ է առնում Ղարաբաղի լեռնաշղթայի Շուշվա տարածքում գտնվող լեռնալանջերից: Այդ վտակներից մեկը՝ Քարին տակ գետը, անցնում է Շուշի քաղաքի արևմտյան և հարավային մասերով: Երկու վտակներից առաջացած գետը Ստեփանակերտի մոտ միանում է Կարկառին: Ասկերանի մոտ սրան միանում են նաև Բալլուջա և Բաղարա վտակները: Հարթավայրային այս հատվածում Կարկառի հովիտը զգալիորեն լայն է: Ընդհանուր առմամբ, նրա երկարությունը հասնում է 115 կմ, ավազանի տարածքը կազմում է 1490 քառ.կմ: Գետն ունի էներգետիկ և ոռոգման նշանակություն: Նրա վրա կառուցված են փոքր հիդրոէլեկտրակայաններ (Ստեփանակերտի, Ասկերանի): Հարթավայրային մասում նրա ջրերը մասամբ օգտագործվում են Ասկերանի, իսկ ավելի շատ Աղդամի շրջանների հողերի ոռոգման համար:

Մարզի մյուս գետերից նշանավոր են Վարանդան և Իշխանագետը, որոնք պատկանում են Արաքսի ավազանին: Իշխանագետն սկիզբ է առնում Քիրսի հարավահայաց լանջերից և հոսում է Հաղրութի շրջանի տարածքով, ունի ավելի քան 80 կմ երկարություն: Վարանդա գետը սկիզբ է առնում Քիրսի արևելյան լանջերից, երկարությունը՝ ավելի քան 100 կմ, հոսում է Մարտունու շրջանի Թաղավարդ, Սխտորաշեն, Կարմիր Շուկա բնակավայրերի մոտով և թափվում է արհեստական ջրամբարը:

Վարանդա գետի վտակն է Ամարաս գետը, որը սկիզբ է առնում Բովուրխանի լեռների հարավային լանջերից, հոսում է Մարտունու շրջանի Մամնա, Կոլխոզաշեն, Խերխան, Մաճկալաշեն գյուղերի և պատմական Ամարաս վանքի մոտով և Լեռնային Ղարաբաղի սահմանագլխին միանում Վարանդա գետին:

Խոնաշեն գետը սկիզբ է առնում Բովուրխանի լեռների հյուսիսային լանջերից և, հոսելով Մարտունու շրջանի Ննգի, Մայիտակաշեն գյուղերի մոտով և Մարտունի քաղաքի միջով, հասնում է Կուրապատկյիտ բնակավայրի մոտ գտնվող հարթավայրը: Սա սակավաջուր գետ է:

Համարյա թե բոլոր գյուղերում ջրաղաց կար: Իսկ 20-րդ դարի սկզբներին որոշ գյուղերում այրաղացները մեքենայացվել էին: Մասնավորապես, Գյունե ճարտար և Գյունե Կալեր գյուղերում կային մեքենաղացներ, որոնց արտադրողականությունն անհամեմատ շատ բարձր էր:

Մինչև 2020 թվականը ԼՂՀ-ում լայն թափ էր ստացել փոքր ՀԷԿ-երի շինարարությունը:

Կառուցվել և կառուցվում էին կասկադներ՝

Թրդի գետի վրա

- Թրդի-1 ՓՀԷԿ – 3 × 1.0 ՄՎտ հզորությամբ,
- Թրդի-2 ՓՀԷԿ – 2 × 2.96 ՄՎտ հզորությամբ,
- Թրդի-3 ՓՀԷԿ – 2 × 2.1 ՄՎտ հզորությամբ:

Մատաղխում

- թիվ 1 – 3 × 1.6 ՄՎտ հզորությամբ,
- թիվ 2 – 3 × 1.0 ՄՎտ հզորությամբ:

Աղավն գետի վրա

- «Սյունիք-1» ՓՀԷԿ - 3 × 1 ՄՎտ հզորությամբ,
- «Սյունիք-2» ՓՀԷԿ - 4 × 1 ՄՎտ հզորությամբ ,
- «Սյունիք-3» ՓՀԷԿ:

Մինչև 2020թ. պատերազմը ԼՂՀ-ի տարածքում գործում էին **110 կՎ**

տրանսֆորմատորային ենթակայաններ

1. 110/35/10կՎ 1 × 63000կՎԱ «Թարթառ» ՀԷԿ,
2. 110/35/10կՎ 2 × 25000կՎԱ «Ստեփանակերտ»,
3. 110/35/10կՎ 1 × 16000կՎԱ + 1 × 25000կՎԱ «Շուշի»,
4. 110/35/10կՎ 1 × 6300կՎԱ + 1 × 10000կՎԱ «Հաթեբք»,
5. 110/10կՎ 1 × 6300կՎԱ «Վանք»,
6. 110/35/10կՎ 1 × 5600կՎԱ «Բերձոր»:

35 կՎ տրանսֆորմատորային ենթակայաններ

1. 35/10կՎ 1 × 6300կՎԱ + 1 × 10000կՎԱ «Մետաքսագործ»
2. 35/10կՎ 1 × 4000կՎԱ + 1 × 5600կՎԱ «Բերդ»
3. 35/10կՎ 1 × 4000կՎԱ «Իվանյան»
4. 35/10կՎ 1 × 1000կՎԱ «Վրեժավան»
5. 35/10կՎ 1 × 1600կՎԱ «Մխնադ»
6. 35/10կՎ 1 × 6300կՎԱ + 1 × 10000կՎԱ «Մարտունի»
7. 35/10կՎ 1 × 1600կՎԱ + 1 × 2500կՎԱ «Կարմիր Շուկա»
8. 35/10կՎ 2 × 4000կՎԱ «Հաղբուր»
9. 35/10կՎ 1 × 1800կՎԱ + 1 × 2500կՎԱ «Ծակուտի»
10. 35/10կՎ 1 × 1800կՎԱ «Առաքյալ»
11. 35/10կՎ 2 × 6300կՎԱ «Մարտակերտ»
12. 35/10կՎ 1 × 2500կՎԱ + 1 × 4000կՎԱ «Մաղավուզ»
13. 35/10կՎ 1 × 6300կՎԱ «Գետավան»
14. 35/10կՎ 1 × 2500կՎԱ «Երիցվանք»
15. 35/10կՎ 1 × 2500կՎԱ «Կովսական»
16. 35/10կՎ 1 × 1600կՎԱ «Դիցմայրի»
17. 35/10կՎ 1 × 6300կՎԱ «Դրմբոն»
18. 35/10կՎ 1 × 4000կՎԱ «Թրդի-1»
19. 35/10կՎ 1 × 4000կՎԱ «Սյունիք-1»:

Օգտագործվող էլեկտրաէներգիայի դիմաց սակագներն անփոփոխ կմնան: 2015թ. հոկտեմբերից բարձրացված նոր սակագները բնակչության համար չեն փոխվել: Օգտագործված յուրաքանչյուր կՎտժ էլեկտրաէներգիայի դիմաց բնակչությունը շարունակում էր վճարել 25 դրամ: Դա նշանակում է, որ կառավարությունը սուբսիդավորման ծախսերը վերցնելով իր վրա, նախորդ տարիների օրինակով, ձգտում էր թեթևացնել բաժանորդների բեռը: Միայն 2017թ. պետական բյուջեով բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի սուբսիդավորման համար պետությունը շուրջ 2 մլրդ 600 մլն դրամ է նախատեսել:

ԼՂՀ-ում լավ նախապայմաններ կան օգտագործելու գազատուրբինային կայանքներ: Կարելի է ստեղծել փոքր և միջին հզորության գազատուրբինային ջեռուցման ջերմային էլեկտրակայաններ, որոնք հնարավորություն կտան միաժամանակ արտադրել ինչպես էլեկտրական, այնպես էլ ջերմային էներգիա: Այսպիսի կայանների աշխատանքի արդյունավետությունը բարձր է:

«Արցախի ՀԷԿ» ԲԲԸ

Իր դրվածքային հզորությամբ ԼՂՀ խոշորագույն հիդրոէլեկտրաէներգիա արտադրող ընկերությունն է, որը արտադրության գործընթացում օգտագործում է բացառապես վերականգնվող աղբյուրներ՝ մատակարարելով մաքուր և անվտանգ էներգիա:

Ներկայումս «Արցախի ՀԷԿ» ԲԲԸ դրվածքային հզորությունը կազմում է 71.7 ՄՎտ՝ ներառելով «Մարսանգ ՀԷԿ»-ինը՝ 50 ՄՎտ (2 տուրբին, 25-ական ՄՎտ հզորության), «Թրդի-1» ՓՀԷԿ-ինը՝ 3 ՄՎտ (3 տուրբին, 1-ական ՄՎտ հզորության), «Թրդի-2» ՓՀԷԿ-ինը՝ 5.9 ՄՎտ (2 տուրբին, 3-ական ՄՎտ հզորության), «Թրդի-3» ՓՀԷԿ-ինը՝ 5.0 ՄՎտ (2 տուրբին, 3-ական ՄՎտ հզորության): «Մատաղիս-1» ՓՀԷԿ-ինը 4.8 ՄՎտ (3 տուրբին 1.6 մվտ հզորության) և «Մատաղիս-2» ՓՀԷԿ-ինը 3.0 ՄՎտ հզորության (3 տուրբին 1-ական ՄՎտ հզորության):

Քանի, որ Մարսանգի հիդրոկայանը ԼՂՀ տարածքում ամենահզորն է, հետևաբար նա հանդիսանում է հանրապետության հուսալի ու անխափան էլեկտրաէներգիայի մատակարարման հիմքը:

Ելնելով դրանից, հաշվի առնելով կայանի հիդրոագրեգատների գործարանային ճնշումաձախսային բնութագրերը, ավելի քան 37 տարվա շահագործման վերլուծությունը էլեկտրաէներգիայի ամենարդյունավետ արտադրությունը ապահովում է տարվա կտրվածքով ջրամբարում ջրի վերին մակարդակի նիշը 692-718 մ տատանումների դեպքում:

Նոր կայանների շահագործման հետ զուգահեռ, վերացնելով իհայտ եկած թերացումներն ու բացթողումները, տարեցտարի ավելանում են նրանցից յուրաքանչյուրում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները:

«Մարսանգ» ՀԷԿ-ի ավելի արդյունավետ աշխատելու (ջրի տեսակարար ծախսը նվազեցնելու), նրանում ավելի մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա արտադրելու համար նախանշվել է, որպես հիմնական անցումային տարի, 2015թ.-ին, ինչպես նաև Մարսանգի ջրամբարում ջրի վերին մակարդակի նիշը բարձրացնելով կուտակել հետագայի համար անհրաժեշտ համապատասխան ջրային պաշարներ: 2015թ.-ի վերջին Մարսանգի ջրամբարում ջրի վերին մակարդակի նիշը եղել է 706,65 մ ու 327,90 մ-ն մ³ ջուր, նախորդ տարվա 699,72 մ ու 262 մ-ն մ³-ի փոխարեն կամ 65.9 մ-ն մ³ ջուր ավել է դա այն դեպքում, երբ 2013թ. Թարթառ գետի ջրհոսքը ամենացածրերից է եղել վերջին 15 տարիների ընթացքում:

2016թ. նախատեսվում էր Մարսանգի ջրամբարում լրացուցիչ կուտակել 8.0 մ-ն մ³ ջուր, տարեվերջին ջրամբարում ջրի մակարդակի վերին նիշը հասցնելով 707.48 մ-ին:

2016թ. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն հիդրոկայաններում նախատեսում էր արտադրել 184.50 մ-ն կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որից 104.89 մ-ն կՎտ ժամ «Մարսանգ» ՀԷԿ-ում, 10.53 մ-ն կՎտ ժամ «Թրդի-1» ՓՀԷԿ-ում, 17.93 մ-ն կՎտ ժամ «Թրդի-2» ՓՀԷԿ-ում, 14.34 մ-ն կՎտ ժամ «Թրդի-3» ՓՀԷԿ-ում, 23.69 մ-ն կՎտ ժամ «Մատաղիս-1» ՓՀԷԿ-ում և 13.11 մ-ն կՎտ ժամ «Մատաղիս-2» ՓՀԷԿ-ում:

Նշենք, որ 2016թ. հունվար-ապրիլ ամիսներին նախատեսվում էր բոլոր հիդրոկայաններում արտադրել 69.23 մ-ն կՎտ էլեկտրաէներգիա, սակայն փաստացի արտադրվել է 70.86 մ-ն կՎտ էլեկտրաէներգիա:

Բացի գործող հզորությունների շահագործումից «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն ԼՂՀ տարածքում շարունակում է իրականացնել նոր փոքր ՀԷԿ-երի շինարարության աշխատանքներ: «Թրդի-1» ՓՀԷԿ-ի գլխամասային հանգույցից վերև կառուցվում է «Թրդի-4» ՓՀԷԿ-ը 0.76 ՄՎտ հզորությամբ ու 3.46 մ-ն կՎտ ժամ միջին տարեկան արտադրանքի ենարավորությամբ: «Թրդի-4» ՓՀԷԿ-ի գործարկումից հետո Թրդի-1.2.3 ՓՀԷԿ-երում լրացուցիչ կարտադրվի տարեկան 11.94 մ-ն կՎտ ժամ էլեկտրաէներգիա:

Սկսվել է նաև «Լև-1» ՓՀԷԿ-ի շինարարությունը, որի դրվածքային հզորությունը կազմում է 7.0 ՄՎտ, իսկ էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքը կլինի 37.0 մ-ն կՎտ ժամ:

Նշված ՓՀԷԿ-երի գործարկումից հետո «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ հիդրոկայանների ընդհանուր դրվածքային հզորությունը կկազմի 79,46 ՄՎտ և նրանցում տարեկան կարտադրվի մինչև 235 մ-ն կՎտ էլեկտրաէներգիա:

ՀԷԿ-երի շինարարության ծրագրերը ֆինանսավորվում են բաժնետոմսերի տեղաբաշխումից ներգրավված միջոցների և փոխառությունների հաշվին: Ընկերությունը առաջին անգամ իր բաժնետոմսերը հանրությանն առաջարկել է 2009թ.-ին:

Ընդհանուր առմամբ, ընկերությունը կազմակերպել է բաժնետոմսերի 3 հրապարակային տեղաբաշխում:

I – Բաժնետոմսերի առաջին հրապարակային առաջարկի միջոցով 2009 թվականին ընկերությունը տեղաբաշխել է 862.074 հատ բաժնետոմսեր, ֆինանսական շուկայից ներգրավելով 905.177.700 ՀՀ դրամ ծավալով դրամական միջոցներ:

II – երկրորդ հրապարակային առաջարկը տեղի է ունեցել 2010 թվականին, արդյունքում տեղաբաշխվել է 1.400.000 հատ բաժնետոմս, ներգրավված դրամական միջոցների ծավալը կազմել է 1.554.000.000 ՀՀ դրամ:

III – 2011 թվականին բաժնետոմսերի երրորդ առաջարկի միջոցով տեղաբաշխվել է թվով 3.287.926 հատ բաժնետոմս, արդյունքում ընկերության կողմից ներգրավված միջոցների ծավալը կազմել է 3.649.597.860 ՀՀ դրամ

Նշված բաժանորդագրումների արդյունքում ընկերության կանոնադրական կապիտալն աճել է 5 մլրդ 550 մլն դրամով՝ և այսօր կազմում է 10 մլրդ 650 մլն դրամ:

Կանոնադրական կապիտալի կառուցվածքը 31.12.18թ. դրությամբ ունի հետևյալ տեսքը՝


- «Մ. Էներգոհիմվեստ» ՓԲԸ 3 856 834 բաժնետոմս, որը կազմում է ընկերության կանոնադրական կապիտալի 36,2%-ը,
- «Մուլտիկոնտինենտալ դիստրիբյուշն» ՍՊԸ 1 781 348 բաժնետոմս, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 16,7%-ը,
- Ուղուտյան Ժոզեֆ 1 262 901 բաժնետոմս, որը կազմում է ընկերության կանոնադրական կապիտալի 11,9%-ը,
- «ԿԳԱԼ Նյու Ֆրոնթայրս» ՍՊԸ 1 069 125 բաժնետոմս, որը կազմում է ընկերության կանոնադրական կապիտալի 10%-ը,
- այլ բաժնետերեր 2 679 792 բաժնետոմս, որը կազմում է ընկերության կանոնադրական կապիտալի 25,2%-ը:

Այսպիսով, ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխմանն ընդհանուր առմամբ մասնակցել է 1200 և ավելի բաժնետեր՝ աշխարհի 10 երկրներից:


Ընկերության բոլոր բաժնետոմսերը շրջանառվում են Հայաստանի ֆոնդային բորսայի երկրորդային՝ B ցուցակում: Ընկերության բաժնետոմսերի իրացվելիությունն ապահովում է «Արմսվսիբանկ» ՓԲԸ-ն, որն ապահովում է բաժնետոմսերի առուվաճառքի ամենօրյա գնանշումները: «Արմսվսիբանկ»-ը հանդիսանում է նաև «Արցախ ՀԷԿ»-ի բաժնետոմսերի տեղաբաշխողն ու հաշվարկային բանկը:

**Արցախի ՀԷԿ» ԲԲԸ-ի դրվածքային հոգրություն՝ 79.5 ՄՎտ
այդ թվում՝**

«Սարսանգ ՀԷԿ»	50 ՄՎտ
«Թղրի 1 ՀԷԿ»	5.9 ՄՎտ
«Թղրի 2 ՀԷԿ»	59 ՄՎտ
«Թղրի 3 ՀԷԿ»	5.0 ՄՎտ
«Թղրի 4 ՀԷԿ»	0.8 ՄՎտ
«Մատաղիս-1 ՀԷԿ»	4.8 ՄՎտ
«Մատաղիս-2 ՀԷԿ»	3.0 ՄՎտ
«Լև-1 ՀԷԿ»	7.0 ՄՎտ



**«Արցախի ՀԷԿ»-ի և նրա կազմի մեջ մտնող ՀԷԿ-երի
դրվածքային հոգրությունները 2015թ., ՄՎտ**



«Արցախի ՀԷԿ»-ի ԲԲԸ արտադրության ծավալն ըստ տարիների

Գայանի էներգատնտեսական հիմնական ցուցանիշները

<i>Ցուցանիշ</i>	<i>Չափ. միավոր</i>	<i>Քանակ</i>
Էներգետիկ օգտագործվող հոսք	մլն մՊ	6.79
Հաշվարկային էլք	մՊ/վրկ	0.45
Հաշվարկային ճնշում	մ	212.9
Դրվածքային հզորություն	ՄՎտ	0.8
Հաշվարկային հզորություն	ՄՎտ	0.76
Էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանք Թրդի ՓՀԷԿ-ում	մլն կՎտժ	3.46
Էլեկտրաէներգիայի լրացուցիչ արտադրանք Թրդի-1, 2, 3 ՓՀԷԿ-երի կասկադում	մլն կՎտժ	11.94

Թրդի-1, Թրդի-2 և Թրդի-3 ՓՀԷԿ-երի կասկադի նոր էներգետիկական ցուցանիշները

<i>Ցուցանիշ</i>	<i>Չափ. միավոր</i>	<i>Թրդի-1</i>	<i>Թրդի-2</i>	<i>Թրդի-3</i>
Էներգետիկ օգտագործվող հոսք	մլն.մՊ	33.99	31.36	32.74
Հաշվարկային էլք միջին տարում	մՊ/վրկ	1.65	1.85	1.79
Հաշվարկային էլք ջրառատ տարում	մՊ/վրկ	1.65	2.0	1.86
Հաշվարկային ճնշում	մ	243.8	357.4	306.3
Հաշվարկային հզորություն միջին տարում	ՄՎտ	3.0	5.42	4.49
Հաշվարկային հզորություն ջրառատ տարում	ՄՎտ	3.0	5.85	4.63
Լրացուցիչ էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանք	մլն կՎտժ	1.92	5.38	4.63
Ընդամենը էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանք	մլն կՎտժ	17.87	26.72	22.07

Աշխատանքային նախագիծը կատարվել է «Եվրոհիդրոէներգո» ՍՊԸ կողմից, «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ պատվերով: Իրականացվել է «Թրդի -1», «Թրդի -2» և «Թրդի -3» ՓՀԷԿ-երի կասկադի սակավաջուր ամիսներին լրացուցիչ էլքի ապահովման նպատակով Միջնագետ և Ավազագետ գետերի հոսքի տեղափոխման և նոր՝ «Թրդի» ՓՀԷԿ-ի կառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքները:

Այն կապահովի լրացուցիչ էկոլոգիապես մաքուր էլեկտրաէներգիայի արտադրանք, հիմնված ԼՂ Հանրապետության սեփական էներգառեսուրսների՝ տվյալ դեպքում հիդրոռեսուրսների վրա: ՓՀԷԿ-ը իրականացրել է ԼՂՀ Մարտակերտի շրջանի հյուսիսում օգտագործելով Միջնագետ և Ավազագետ գետերի հիդրոէներգետիկ պոտենցիալը: Այն դերիվացիոն տիպի է՝ դերիվա-

ցիայի երկարությունը մոտ 8 կմ է, ինչն իրականացվում է երկու գետերից ելքի տեղափոխման համար անհրաժեշտ ընդհանուր մոտ 9.2 կմ երկարությամբ ճնշումային խողովակաշարերով: ՓՀԷԿ-ի շենքի և վերոհիշյալ գետերի գլխային հանգույցների (ջրառների) հատվածում նիշերի տարբերությունը կազմում է 250մ՝ 1970 բացարձակ նիշից մինչև 1720 մ նիշը:

«Թրդի» ՓՀԷԿ-ը շահագործումից հետո կունենա 0.76 ՄՎտ հաշվարկային հզորություն և տարեկան կարտադրի միջինը 3.46 մլն. կՎտժ էլեկտրաէներգիա: Բացի այդ, ՓՀԷԿ-ի ագրեգատների աշխատած ելքը կապահովի Թրդի-1, Թրդի-2 և Թրդի-3 ՓՀԷԿ-երի կասկադում լրացուցիչ էլեկտրաէներգիայի արտադրանք, մոտ 11.94 մլն կՎտժ քանակով, կրճատելով կասկադի թերբեռնվածությունը:

Կասկադում արտադրվող լրացուցիչ էլեկտրաէներգիայից և նոր ՓՀԷԿ-ի շահագործումից ստացված շահույթը նախատեսվում է ներդնել նոր ՓՀԷԿ-երի կամ նոր արտադրական հզորությունների կառուցման համար:

Քննարկման կան պայմանների համառոտ նկարագրությունը

Ուսումնասիրվող գետերից առավել ջրառատը՝ Միջնագետ գետը հանդիսանում է Թրդի գետի ձախափնյա վտակը և թափվում է վերջինիս մեջ գետաբերանից 15կմ տարածության վրա: Գետը սկիզբ է առնում Մրովդաղի լեռնաշղթայից: Ջրհավաք ավազանի մակերեսը հավասար է 26.0կմ², գետի երկարությունը՝ 3.05կմ, ջրավազանի միջին բարձրությունը՝ 2500մ, գետի միջին թեքությունը՝ 127‰, անտառապատվածությունը 13% է:

Վարչական տեսանկյունից Միջնագետ գետի ավազանը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանում:

Հողային ծածկույթը ջրավազանում խայտաբղետ է: Ավազանի վերին հոսանքները լրիվ զբաղված են մերձալպիական, լեռնամարգագետնային դարչնագույն հողերով: Ավազանի միջին մասը զբաղված է լեռնային սևահողերով, խոնավ տափաստանների սևահողերով, որոնք տեղ-տեղ տարրալուծված են և հաստ, որտեղ հանդիպում են նաև մարգագետնա-ճահճային հողեր:

Ջրավազանի բուսականությունը հարուստ է: Վերին հոսանքներում տարածված են ներքին ալպիական մարգագետիններ, խալիների և խիտ ճիմանային գոյացումների համալիրով: Ավազանի միջին մասերում շատ տեղ է գրավում մարգագետնային տափաստանը և տեղ-տեղ ճահճներն ու ճահճացված մարգագետինները: Ավազանի ստորին մասերում տարածված են հացահատիկային և բազմախոտ-հացազգի տափաստաններ՝ տեղ-տեղ տրազանտային տարրերով: Որոշ տեղերում տարածված են հաճարային անտառներ:

Գետի հոսքը ձևավորվում է ստորգետնյա աղբյուրների և մակերեսային ջրերով: Առաջին խումբը մշտական է և մասնակցում է հոսքի ձևավորման մեջ ամբողջ տարի և մի փոքր պակասում է ձմռային ժամանակաշրջանում: Ձևակալյալ ջրերը սնում են գետը զարնանային վարարումների ժամանակաշրջանում, իսկ անձրևային ջրերը՝ զարնանային և ամառային ժամանակաշրջանում՝ հեղեղումների տեսքով: Ողողադաշտը բացակայում է:

Ափերը և գետի հուները կազմված են ժայռային ապարներից: Գլաբարերի կուտակումները հունում ստեղծում են զլորումներ: Հունը ենթարկվում է դեֆորմացիաների: Գետերի վրա լինում են սառցային երևույթներ:

Ավազագետ գետը հանդիսանում է Միջնագետի ձախակողմյան ամենախոշոր վտակը և միախառնվում է նրա հետ գետաբերանից մոտ 2.5կմ հեռավորության վրա:

Գլխամասային հանգույցների ուղղահաստվածքների նիշերն են՝ Միջնագետ գետի վրա՝ 1970մ, ջրհավաք մակերեսը՝ 8.81կմ², Ավազագետ գետի վրա՝ 1970մ, ջրհավաք մակերեսը՝ 4.64կմ²:

Գլխմայական տեսակետից գետերի ավազանը հատում է 3 կլիմայական գոտի, սկսած չոր մերձարևադարձային կլիմայից մինչև լեռնային տունդրաների գոտի: Նախատեսվող ՓՀԷԿ-ը տեղադրվում է հետևյալ գոտիներում՝

- բարեխառը-տաք գոտի՝ մեղմ ձմեռ, շոգ ամառ,
- բարեխառը գոտի՝ մեղմ ձմեռ, տաք ամառ,
- բարեխառը գոտի՝ տաք ամառ, ցուրտ ձմեռ:

Ըստ Մարտակերտ օդերևութաբանական կայանի տվյալների, օդի բազմատարյա միջին ջերմաստիճանը կազմում է 5.9°C, բացարձակ նվազագույնը՝ (-41°C), բացարձակ առավելագույնը՝ (+36°C):

Ըստ Մարտակերտ օդերևութաբանական կայանի հաղորդած տվյալների հողի սառչելու առավելագույն խորությունը 104սմ է:

Տեղումների քանակը ուղղակի կախվածության մեջ է տեղանքի բարձրությունից և լանջերի էքսպոզիցիայից: Միջին բազմատարյա տեղումների քանակը Մարտակերտում 528մմ է: Տարեկան տեղումների առավելագույն քանակը Մարտակերտում 770 մմ է, ամսական տեղումների առավելագույն քանակը՝ 207 մմ է, իսկ օրականը՝ 64մմ: Օդի տարեկան հարաբերական խոնավությունը՝ 70%:

Ձյան ծածկույթի տասնօրյակային բարձրությունը ձմեռվա ընթացքում 61սմ է:

Քամու միջին տարեկան արագությունը հավասար է 1.9 մ/վրկ, իսկ 2% ապահովության քամու առավելագույն արագությունը կազմում է 29 մ/վրկ:

Հիդրոլոգիական ուսումնասիրվածություն

Միջնագետ և Ավազագետ գետերը իրենցից ներկայացնում են տիպիկ ևնոնային գետեր՝ ջրային ռեժիմի սեզոնային բնույթով:

Գետերի հոսքի բաշխումը տարեկան կտրվածքով բնութագրվում է լավ արտահայտված գարնանային ջրառատությամբ և հաստատուն սակավաջրությամբ:

Միջնագետ և Ավազագետ գետերի հաշվարկային ուղղահատվածքների տարեկան հոսքի բնութագրման համար օգտագործվել են Թրդի-Մաղավուզ ջրաչափական կայանի հոսքային տվյալները: Թրդի գետի ջրհավաքի հաշվարկային հատվածքի տարեկան հոսքի մեծությունը հավասար է 3.35 մ³/վրկ:

Միջին հոսքի ցուցանիշների և հոսքի ներտարեկան բաշխման ստացման համար օգտագործված է վերը նշված շարքը, վերականգնելով հոսքի բնական վիճակը:

Միջնագետ և Ավազագետ գետերի գլխային հանգույցների հաշվարկային ուղղահատվածքների ելքերի նորմաները հավասար են 0.18 մ³/վրկ և 0.10 մ³/վրկ: Միջին ամսական և տարեկան տվյալները ներկայացված են դիտարկումների 42 տարվա շարքերով: Ներտարեկան միջին հոսքերի բաշխումը ստացվել են գործակիցներով՝ $k_1=0.054$ և $k_2=0.029$, որոնք հավասար են հաշվարկային ուղղահատվածքների և Թրդի-Մաղավուզ կայանի ուղղահատվածքի ջրհավաք մակերեսների հարաբերությանը:

Հիդրոտեխնիկական կառուցվածքներ

Թրդի ՓՀԷԿ-ի կառուցվածքների համալիրը բաղկացած է հետևյալ հիմնական հանգույցներից.

- գլխային հանգույցներ Միջնագետ և Ավազագետ գետերի վրա,
- ճնշումային դերիվացիոն խողովակաշարեր միացման ճնշումային հանգույցով,
- կայանային հանգույց,
- հեռացնող դոտացիոն համակարգ:

Գլխային հանգույցներ Միջնագետի և Ավազագետի վրա

Գլխային հանգույցներում ստեղծվող ջրավազանները նախատեսված են վերոհիշյալ գետերից ջրառի համար անհրաժեշտ դիմհարային մակարդակ ստեղծելու նպատակով:

Յուրաքանչյուր գլխային հանգույց իր մեջ ներառում է՝

- մոտ 2.0 մ մաքուր բարձրություն ունեցող բետոնային ջրթափային պատվար, որը նախատեսված է ջրընդունման համար անհրաժեշտ դիմհարային մակարդակի ստեղծման և հեղեղային ելքերի բաց թողման համար: Նորմալ դիմհարային մակարդակը ՆԴՄ գլխամասային հանգույցներում կազմում է 1970.0 մ,

- ջրընդունիչ՝ համատեղված պարզարանի հետ, որը նախատեսված է յուրաքանչյուր գետի հաշվարկային ելքի ընդունման և կախյալ բերուկներից ջրի պարզեցման համար (երկու գետի գումարային հաշվարկային ելքը կազմում է 0.45մ³/վրկ),
- լվացիչ, որը պարբերաբար մաքրում է ջրընդունիչի մուտքը հեղեղային ելքերի ժամանակաշրջանում, կանխելով մուտքի խցանումը և խոշոր քարերի մուտքը: Բացի այդ, լվացիչը համագործակցում է ջրթափի հետ՝ հեղեղային շրջանում ավելցուկային ելքերը գետի ներքին բյեֆ նետելու համար, որով ցածրանում է գլխային հանգույցի դիմհարային մակարդակը, պաշտպանելով ավերը ողողումից, ինչպես նաև մեծացնելով պատվարի ֆիլտրացիոն կայունությունը:

Միջնագետ և Ավազագետ գետերի բնապահպանական ելքերը դեպի ներքին բյեֆ, համապատասխանաբար 0.045 և 0.025 մ³/վրկ մեծությամբ, բաց են թողնվում գլխամասային հանգույցներում տեղակայված հատուկ ջրթող խողովակների միջոցով:

Դերիվացիոն ջրատարներ

Թրդի ՓՀԷԿ-ի դերիվացիան բաղկացած է հետևյալ ճնշումային խողովակաշարերից.

- 530 մ տրամագծով, 0.987 կմ երկարությամբ ճնշումային խողովակաշար Միջնագետ գետից մինչև միացման հանգույց,
- 426 մ տրամագծով, 1.146 կմ երկարությամբ ճնշումային խողովակաշար Ավազագետ գետից մինչև միացման հանգույց,
- 630մ տրամագծով, 7.182 կմ երկարությամբ ճնշումային խողովակաշար միացման հանգույցից մինչև ՓՀԷԿ-ի շենք:

Դերիվացիոն խողովակաշարերի ուղեգծերը սկիզբ են առնում Միջնագետ և Ավազագետ գետերի գլխային հանգույցներից, գետերի աջափնյա լանջերով ձգվում մինչև միացման ճնշումային եռաբաշխիկ հանգույց, որը տեղակայված է Միջնագետ և Ավազագետ գետերի միախառնման մասից մոտ 500մ վերև, 1854 նիշում: Եռաբաշխիկը տվյալ կետում տեղակայված է խարսխային հենարանի մեջ: Այնուհետև 630մ տրամագծով խողովակաշարը 7.18կմ երկարությամբ, գրունտային գոյություն ունեցող ճանապարհի կողքով բարձրանալով կից լանջը և թեքվելով աջ, կից բլուրի լանջով ձգվում է մինչև Թրդի-1,2,3 ՓՀԷԿ-երի կասկադի գլխամասային հանգույցի տեղամաս, որտեղ էլ տեղակայվում է ՓՀԷԿ-ի շենքը:

Խողովակաշարերը նախատեսված են տեղակայել 1.5-2 մետր խորությամբ խրամուղում, 1-1.2 մ հատակի լայնությամբ: Խրամուղին խողովակաշարի մոնտաժումից և փորձարկումից հետո ծածկվում է հակադարձ լիցքով, ըստ որում խողովակի վրա 1.0 մ-ից ոչ պակաս խորությամբ՝ ելնելով սառեցման պայմանից:

Կայանային հանգույց

Կայանային հանգույցը իր մեջ ներառում է ՓՀԷԿ-ի շենք և բաց բաշխիչ սարքավորումներ:

- ՓՀԷԿ-ի շենքում տեղակայված է 2 տեղական արտադրության ակտիվ տիպի հիդրոագրեգատներ, գումարային 8 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 0.45 մ³/վ հաշվարկային ելքով, 212.9մ հաշվարկային ճնշումով:
- Նախնական սխեմայով նախատեսվում էր կայանում տեղակայել երկու գեներատոր, յուրաքանչյուրի սեղմակների վրա 10կՎ լարումով, և կայանի հզորությունը բարձր լարման գծերով տեղափոխել մոտակա ենթակայան:

Հեռացնող համակարգ

Հեռացնող ջրանցքը նախատեսվում էր իրականացնել մոնոլիտ ուղղանկյուն կտրվածքով երկաթբետոնից կամ 630մմ խողովակաշարից, որի միջոցով կայանում աշխատած ջուրը տրվում է Թրդի-1, 2, 3 կասկադի գլխային հանգույցին՝ կասկադում օգտագործման համար:

«Ջերմաջուր» ՓՀԷԿ-ը կառուցվել էր ԼՂՀ-Ի Շահումյանի մարզում Թարթառ գետի վերին հատվածում:

«Ջերմաջուր» ՓՀԷԿ-ը կառուցվել էր 3 փուլով՝

1 փուլ. Կառուցվել էր պատվարային ջրընդունիչ Թարթառ գետի 2156.0 նիշում, խողովակաշարի առաջին ճյուղը, երբ $d=1.0$ մ,

ՀԷԿ-ի գլխային հանգույցը կառուցվել էր Թարթառ գետի 2156.0մ նիշի գետահատվածքում: Այն իրենից ներկայացնում էր բետոնային ջրթափային պատվար ջրընդունիչով, տղմագտարանով և հատակային ջրթողով ու ձկնանցարանով: Ջրընդունիչից սկիզբ էր առնում դերիվացիոն պողպատյա ճնշումային խողովակաշարը 6970.0մ երկարությամբ և 1.0 մ տրամագծով խողովակից (հաշվային ելքը՝ $Q_2=2.0$ մ³/վ), որն ավարտվում էր տուրբինային փականի մոտ: ՓՀԷԿ-ի նիշը կազմում էր 1732.0մ:

Այս դեպքում ՓՀԷԿ-ի հիմնական պարամետրերը կլինեն՝

խողովակաշարի երկարությունը՝ $L=6970$ մ,

խողովակաշարի տրամագիծը՝ $d=1.0$ մ,

ստատիկ ճնշումը՝ $H_0=424,0$ մ,

հաշվարկային ճնշումը՝ $H=378.7$ մ,

հաշվարկային ելքը՝ $Q=2.0$ մ³/վ,

դրվածքային հզորությունը՝ $N=6147$ կՎտ,

ագրեգատների թիվը՝ $n=2$,

միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝

47.42մլն. կՎտժ:

2 փուլ. Կառուցվել էր պատվարային ջրընդունիչը Թարթառ գետի ձախակողմյան վտակի վրա 2175.0 մ նիշում, խողովակաշարի երկրորդ ճյուղը, երբ $d=0.7$ մ,

ՀԷԿ-ի գլխային հանգույցը կառուցվել էր Թարթառ գետի 2175.0 մ նիշի գետահատվածքում: Այն իրենից ներկայացնում էր բետոնային ջրթափային պատվար ջրընդունիչով, տղմագտարանով և հատակային ջրթողով ու ձկնանցարանով: Ջրընդունիչից սկիզբ էր առնում դերիվացիոն պողպատյա ճնշումային խողովակաշարը 5850.0 մ երկարությամբ և 0.80 մ տրամագծով խողովակից /հաշվային ելքը՝ $Q_2=1.1$ մ³/վ/, որն ավարտվում է տուրբինային փականի մոտ: ՓՀԷԿ-ի նիշը կազմում էր 1732.0 մ:

Այս դեպքում ՓՀԷԿ-ի հիմնական պարամետրերը կլինեն՝

խողովակաշարի երկարությունը՝ $L = 5850,0$ մ,

խողովակաշարի տրամագիծը՝ $d = 0.80$ մ,

ստատիկ ճնշումը՝ $H_0 = 443,0$ մ,

հաշվարկային ճնշումը՝ $H = 405.2$ մ,

հաշվարկային ելքը՝ $Q = 1.1$ մ³/վ/,

դրվածքային հզորությունը՝ $N = 3617,0$ կՎտ,

ազդեցատների թիվը՝ $n = 1$,

Միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝

22.25 մլն.կՎտժ:

3 փուլ. Կառուցվում է պատվարային ջրընդունիչը Թարթառ գետի ձախակողմյան վտակի վրա 1992.0 նիշում, խողովակաշարի երրորդ ճյուղը, երբ $d=0.7$ մ,

ՀԷԿ-ի գլխային հանգույցը կառուցվել էր Թարթառ գետի 1992.0 մ նիշի գետահատվածքում: Այն իրենից ներկայացնում էր բետոնային ջրընդունիչ, տղմագտարանով և հատակային ջրթողով: Ջրընդունիչից սկիզբ էր առնում դերիվացիոն ճնշումային պողպատյա խողովակաշարը 3900.0 մ երկարությամբ և 0.70 մ տրամագծով (հաշվային ելքը՝ $Q_2=0.80$ մ³/վ/), որն ավարտվում է տուրբինային փականի մոտ: ՓՀԷԿ-ի նիշը կազմում էր 1732.0 մ:

Այս դեպքում ՓՀԷԿ-ի հիմնական պարամետրերը կլինեն՝

խողովակաշարի երկարությունը՝ $L = 3900,0$ մ,

խողովակաշարի տրամագիծը՝ $d = 0.70$ մ,

ստատիկ ճնշումը՝ $H_0 = 260.0$ մ,

հաշվարկային ճնշումը՝ $H = 234.4$ մ,

հաշվարկային ելքը՝ $Q = 0.70$ մ³/վ/,

դրվածքային հզորությունը՝ $N = 1522,0$ կՎտ,

ազդեցատների թիվը՝ $n = 1$,

միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝

8.41 մլն.կՎտժ:

ՓՀԷԿ-ի հիմնական պարամետրերը երեքճյուղ խողովակի առկայության դեպքում կլինի՝

Երվածքային հզորությունը N = 11286 կՎտ:

Միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝
78.08 մլն. կՎտժ:

«Ջերմաջուր» ՓՀԷԿ-ում արտադրված ամբողջ էլեկտրական էներգիան նախատեսվում էր վաճառել ԼՂՀ էներգահամակարգին կամ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին:

«Ռիվեր Էներջի» ՓՀԷԿ-ը նախատեսվում էր կառուցել ԼՂՀ Քելրաջարի շրջանի վարչական տարածքում Թարթառ գետի վտակ հանդիսացող Կարախան վտակի վրա:

ՀԷԿ-ի գլխային հանգույցը նախատեսվում է կառուցել Կարախան գետի 2090.0 մ միջի վրա: Այն իրենից ներկայացնում է բետոնային ջրթափ կառուցվածք, ջրընդունիչով: Ջրընդունիչից սկիզբ է առնելու դերիվացիոն ճնշումային խողովակաշարը 2950մ երկարությամբ և 1.0մ տրամագծով (հաշվային ելքը՝ $Q_z = 1.60 \text{մ}^3/\text{վ}$), որն ավարտվում է տուրբինային փականի մոտ:

ՀԷԿ-ի շենքում տեղադրվելու են երկու հիդրոագրեգատ: Այն ունենալու է հետևյալ հիմնական ցուցանիշները.

1. դրվածքային հզորություն՝ Nդր = 4000 կՎտ,
2. հաշվարկային ելք՝ $Q_z = 1.60 \text{մ}^3/\text{վ}$,
3. ստատիկ ճնշում՝ $h_0 = 330.0 \text{մ}$,
4. հաշվարկային ճնշում՝ $h = 315.0 \text{մ}$,
5. միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝
 $13.53 \times 10^6 \text{կՎտժ}$:

«Ռիվեր Էներջի» ՓՀԷԿ-ում արտադրված ամբողջ էլեկտրական էներգիան նախատեսվում է վաճառել էներգահամակարգին: Հաշվարկները ցույց են տալիս, որ ՀԷԿ-ի շինարարության ֆինանսավորումն արդյունավետ է:

«Ռիվեր Էներջի» ՀԷԿ-ի մեջ են մտնում հետևյալ հիմնական կառուցվածքները՝

1. ջրընդունիչ հանգույցը,
2. ճնշումային դերիվացիոն խողովակաշարը,
3. ՀԷԿ-ի շենք:

Ջրընդունիչ

ՀԷԿ-ի գլխային ջրընդունիչ հանգույցը նախատեսվում է կառուցել գետի 2090.0 մ նշահատվածքում: Այն իրենից ներկայացնում է 2.6 մ բարձրության բետոնային ջրթափային պատվար, որի ձախ կողմում նախատեսված է 25.0 մ երկարության և 5.0 մ լայնության երկխցանի տղմագտարան, որտեղից սկիզբ է առնում դերիվացիայի խողովակաշարը:

Ճնշումային դերիվացիոն խողովակաշար

Նախատեսվում է կառուցել ճնշումային դերիվացիոն խողովակաշար (խողովակի տրամագիծը 1.0 մ, երկարությունը՝ 2950մ): Այն սկսվում է ջրընդունիչից և ավարտվում է տուրբինային փականի մոտ: Խողովակաշարը հիմնականում ծածկված է բնահողով:

ՀԷԿ-ի շենք

Կայանային հանգույցը գտնվելու է Կարախան գետի ձախ ափին: ՀԷԿ-ի շենքը վերգետնյա տիպի է, որտեղ նախատեսվում է տեղադրել երկու հիդրոագրեգատ 4000 կՎտ ընդհանուր հզորությամբ:

ՀԷԿ-ի շենքի չափերը որոշված են ըստ ագրեգատի չափերի և նրանց օժանդակ սարքավորումների դասավորության:

ՀԷԿ-ի շենքում տեղադրվելու է էլեկտրական կամրջային ամբարձիչ 5.0 տ բեռնաբարձությամբ: Հիդրոագրեգատի հիմքերը արվում են երկաթբետոնից: Մեքենայական շենքի պատերը արվում են քարի մեղիսային շարվածքով, իսկ ծածկը՝ հավաքովի երկաթբետոնե սալերից:

Հիդրոագրեգատը կազմված է

- տուրբինից. մակնիշը՝ Ա-330-Հ-80, հզորությունը՝ 2000 կՎտ, օ.գ.գ.-ն՝ 0.87,
- պտուտաթվերը. 1000 պտ/րոպե, գեներատորից, հզորությունը՝ 2000 կՎտ, օ.գ.գ.՝ 0,93,
- պտուտաթվերը. 1000պտ/րոպե, էլքի լարումը՝ 400 Վ,
- ՀԷԿ-ի օգտագործած ջրերը հեռացվում են դեպի գետ:

«Թարթառ» ՓՀԷԿ-1 նախատեսվում էր կառուցել ԼՂՀ-ի Շահումյանի մարզում Թարթառ գետի վերին հատվածում:

ՀԷԿ-ի գլխային հանգույցը նախատեսվում էր կառուցել Թարթառ գետի 1762.0մ նիշի գետահատվածքում: Այն իրենից ներկայացնելու էր բետոնային ջրթափային պատվար ջրընդունիչով, տղմագտարանով և հատակային ջրթողով ու ձկնանցարանով: Ջրընդունիչից սկիզբ էր առնելու դերիվացիոն ճնշումային խողովակաշարը 7000.0մ երկարությամբ և 1.60 մ տրամագծով խողովակից /հաշվային էլքը՝ $Q_z=6.0$ մ³/վ/, որն ավարտվելու էր տուրբինային փականի մոտ: ՓՀԷԿ-ի նիշը կազմում է 1610.0 մ:

ՓՀԷԿ-ի շենքում տեղադրվելու էին չորս հիդրոագրեգատներ և այն ունենալու էր հետևյալ հիմնական ցուցանիշները.

1. դրվածքային հզորություն՝ $N_{դր} = 5161$ ԿՎտ,
2. հաշվարկային էլք՝ $Q_z = 6.0$ մ³/վ,
3. ստատիկ ճնշում՝ $h_u = 152.0$ մ,
4. հաշվարկային ճնշում՝ $h = 108.3$ մ,
5. միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝ 31.44 մլն. ԿՎտժ,
6. բնապահպանական էլքը՝ $Q = 0.831$ մ³/վ:

Հաշվարկները ցույց են տալիս, որ «Թարթառ» ՓՀԷԿ-1 շինարարության ֆինանսավորումն արդյունավետ է:

ՀԷԿ-ի կառուցվածքների հիմնական բնութագրերը

«Թարթառ» ՓՀԷԿ-1 մեջ են մտնում հետևյալ հիմնական կառուցվածքները՝

1. Գլխային հանգույցը,
2. Ճնշումային դերիվացիոն խողովակաշարը,
3. ՀԷԿ-ի շենքը:

Գլխային հանգույցը կառուցվելու է Թարթառ գետի 1762.0 մ նշահատվածքում: Այն իրենից ներկայացնում է բետոնային ջրթափային պատվար, որի ձախ կողմում նախատեսված է տղմագտարան և ջրհոր, որտեղից սկիզբ է առնում մեկճյուղանի դերիվացիայի խողովակաշարը: Կուտակվող կոշտ բերվածքների լվացման համար ջրհորից աջ նախատեսվում է հարթ փակա-նով կանոնավորվող հատակային բացվածք:

Ճնշումային դերիվացիոն խողովակաշար

Թարթառ գետի ձախ ափին նախատեսվում է կառուցել ճնշումային դերիվացիոն խողովակաշար (խողովակների տրամագիծը 1.60մ, երկարությունը՝ 7000մ): Այն սկսվում է ջրընդունիչի ջրհորից և ավարտվում է տուրբինային փականների մոտ: Խողովակաշարերը հիմնականում ծածկված են բնահողով:

ՀԷԿ-ի շենք

Կայանային հանգույցը գտնվելու է գետի 1610.0 մ նշահատվածքում: ՀԷԿ-ի շենքը վերգետնյա տիպի է, որտեղ նախատեսվում է տեղադրել չորս հիդրոագրեգատներ 5161կՎտ հզորությամբ: ՀԷԿ-ի շենքի չափերը որոշված են ըստ ագրեգատների չափերի և նրանց օժանդակ սարքավորումների դասավորության 8.0 × 24.0 × 7.5 մ: ՀԷԿ-ի շենքում տեղադրվելու է էլեկտրական կամրջային ամբարձիչ 5.0 տ բեռնաբարձությամբ: Հիդրոագրեգատների հիմքերը արվում են երկաթբետոնից: Մեքենայական շենքի պատերը արվում են բարի մեղիսային շարվածքով, իսկ ծածկը՝ հավաքովի երկաթբետոնե սալերից:

ՀԷԿ-ի օգտագործած ջրերը հեռացվում են դեպի գետ ուղղանկյուն կտրվածքի հեռացնող ջրանցքով:

«Թարթառ» ՓՀԷԿ-2 նախատեսվում է կառուցել ԼՂՀ-Ի Շահումյանի մարզում Թարթառ գետի վերին հատվածում:

ՀԷԿ-ի գլխային հանգույցը նախատեսվում է կառուցել Թարթառ գետի 1597.0մ նիշի գետահատվածքում: Այն իրենից ներկայացնում է բետոնային ջրթափային պատվար ջրընդունիչով, տղմագտարանով և հատակային ջրթորով ու ձկնանցարանով: Ջրընդունիչից սկիզբ է առնելու դերիվացիոն ճնշումային խողովակաշարը 5900.0մ երկարությամբ և 1.60 մ տրամագծով խողովակից (հաշվային ելքը՝ $Q_z=6.0$ մ³/վ), որն ավարտվում է տուրբինային փակակի մոտ: ՓՀԷԿ-ի նիշը կազմում է 1474.0 մ:

ՓՀԷԿ-ի շենքում տեղադրվելու էին չորս հիդրոագրեգատներ և այն ունենալու էր հետևյալ հիմնական ցուցանիշները.

1. դրվածքային հզորություն՝ $N_{դր} = 4107$ կՎտ,
2. հաշվարկային ելք՝ $Q_z = 6.0$ մ³/վ,
3. ստատիկ ճնշում՝ $h_u = 123.0$ մ,
4. հաշվարկային ճնշում՝ $h = 86.2$ մ,
5. միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝
 25.25 մլն կՎտժ,
6. բնապահպանական ելքը՝ $Q = 0.83$ մ³/վ:

Հաշվարկները ցույց են տալիս, որ «Թարթառ» ՓՀԷԿ-2 շինարարության ֆինանսավորումն արդյունավետ է:

ՀԷԿ-ի կառուցվածքների հիմնական բնութագրերը «Թարթառ» ՓՀԷԿ-2 մեջ են մտնում հետևյալ հիմնական կառուցվածքները՝

1. Գլխային հանգույցը,
2. Ճնշումային դերիվացիոն խողովակաշարը,
3. ՀԷԿ-ի շենքը:

Գլխային հանգույցը կառուցվելու է Թարթառ գետի 1597.0մ նշահատվածքում: Այն իրենից ներկայացնում է բետոնային ջրթափային պատվար, որի ձախ կողմում նախատեսված է տղմագտարան և ջրհոր, որտեղից սկիզբ է առնում մեկճյուղանի դերիվացիայի խողովակաշարը: Կուտակվող կոշտ բերվածքների լվացման համար ջրհորից աջ նախատեսվում է հարթ փականով կանոնավորվող հատակային բացվածք:

Ճնշումային դերիվացիոն խողովակաշար

Թարթառ գետի ձախ ափին նախատեսվում է կառուցել ճնշումային դերիվացիոն խողովակաշար (խողովակների տրամագիծը 1.60 մ, երկարությունը՝ 5900 մ): Այն սկսվում է ջրընդունիչի ջրհորից և ավարտվում տուրբինային փականների մոտ: Խողովակաշարերը հիմնականում ծածկված են բնահողով:

ՀԷԿ-ի շենք

Կայանային հանգույցը գտնվելու է գետի 1474.0 մ նշահատվածքում: ՀԷԿ-ի շենքը վերգետնյա տիպի է, որտեղ նախատեսվում էր տեղադրել չորս հիդրոագրեգատներ 4107 կՎտ հզորությամբ: ՀԷԿ-ի շենքի չափերը որոշված էին ըստ ագրեգատների չափերի և նրանց օժանդակ սարքավորումների դասավորության 8.0×24.0×7.5 մ: ՀԷԿ-ի շենքում տեղադրվելու էր էլեկտրական կամրջային ամբարձիչ 5.0տ բեռնաբարձությամբ: Հիդրոագրեգատների հիմքերը արվելու էին երկաթբետոնից: Մեքենայական շենքի պատերը արվում են քարի մեդիսային շարվածքով, իսկ ծածկը՝ հավաքովի երկաթբետոնյա սալերից:

ՀԷԿ-ի օգտագործած ջրերը հեռացվում են դեպի գետ ուղղանկյուն կտրվածքի հեռացնող ջրանցքով:

«Թարթառ» ՓՀԷԿ-3 նախատեսվում էր կառուցել ԼՂՀ-ի Շահումյանի մարզում Թարթառ գետի վերին հատվածում:

ՀԷԿ-ի գլխային հանգույցը նախատեսվում էր կառուցել Թարթառ գետի 1467.0մ նիշի գետահատվածքում: Այն իրենից ներկայացնում էր բետոնային ջրթափային պատվար ջրընդունիչով, տղմագտարանով և հատակային ջրթողով ու ձկնանցարանով: Ջրընդունիչից սկիզբ էր առնելու դերիվացիոն ճնշումային խողովակաշարը 5500.0մ երկարությամբ և 1.60 մ տրամագծով խողովակից (հաշվային ելքը՝ $Q_z=6.0$ մ³/վ), որն ավարտվում է տուրբինային փականի մոտ: ՓՀԷԿ-ի նիշը կազմում է 1380.0մ

ՓՀԷԿ-ի շենքում տեղադրվելու էին չորս հիդրոագրեգատներ և այն ունենալու է հետևյալ հիմնական ցուցանիշները.

1. դրվածքային հզորություն՝ $N_{\text{դր}} = 2391.0$ կՎտ,
2. հաշվարկային ելք՝ $Q_z = 6.0$ մ³/վ,
3. ստատիկ ճնշում՝ $h_0 = 87.0$ մ,
4. հաշվարկային ճնշում՝ $h = 50.2$ մ,
5. միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝ 16.40 մլն. կՎտժ,
6. բնապահպանական ելքը՝ $Q = 0.83$ մ³/վ:

Հաշվարկները ցայց են տալիս, որ «Թարթառ» ՓՀԷԿ-3 շինարարության ֆինանսավորումն արդյունավետ է:

ՀԷԿ-ի կառուցվածքների հիմնական բնութագրերը «Թարթառ» ՓՀԷԿ-3 մեջ են մտնում հետևյալ հիմնական կառուցվածքները՝

1. գլխային հանգույցը,
2. ճնշումային դերիվացիոն խողովակաշարը
3. ՀԷԿ-ի շենքը:

Գլխային հանգույցը կառուցվելու էր Թարթառ գետի 1467.0 մ նշահատվածքում: Այն իրենից ներկայացնում էր բետոնային ջրթափային պատվար, որի ձախ կողմում նախատեսված էր տղմագտարան և ջրհոր, որտեղից սկիզբ էր առնելու մեկձյուղանի դերիվացիայի խողովակաշարը: Կուտակվող կոշտ բերվածքների վացման համար ջրհորից աջ նախատեսվում էր հարթ փականով կանոնավորվող հատակային բացվածք:

Ճնշումային դերիվացիոն խողովակաշար

Թարթառ գետի ձախ ափին նախատեսվում էր կառուցել ճնշումային դերիվացիոն խողովակաշար (խողովակների տրամագիծը 1.60մ, երկարությունը՝ 5500մ): Այն սկսվում էր ջրընդունիչի ջրհորից և ավարտվում տուր-

բինային փականների մոտ: Խողովակաշարերը հիմնականում ծածկված են բնահողով:

ՀԷԿ-ի շենք

Կայանային հանգույցը գտնվելու էր գետի 1380.0 մ նշահատվածքում: ՀԷԿ-ի շենքը վերգետնյա տիպի է, որտեղ նախատեսվում էր տեղադրել երկու հիդրոագրեզատներ 2391 կՎտ հզորությամբ: ՀԷԿ-ի շենքի չափերը որոշված էին ըստ ագրեզատների չափերի և նրանց օժանդակ սարքավորումների դասավորության 8.0 × 20 × 7.5 մ: ՀԷԿ-ի շենքում տեղադրվելու էր էլեկտրական կամրջային ամբարձիչ 5.0 տ բեռնաբարձությամբ: Հիդրոագրեզատների հիմքերը արվելու էին երկաթբետոնից: Մեքենայական շենքի պատերը արվում են քարի մեղիսային շարվածքով, իսկ ծածկը՝ հավաքովի երկաթբետոնյա սալերից:

ՀԷԿ-ի օգտագործած ջրերը հեռացվելու էին դեպի գետ ուղղանկյուն կտրվածքի ջրանցքով:

«Հոչանց» ՓՀԷԿ-ը կառուցվել և շահագործման է հանձնվել 2015 թվականին Լեռնային Ղարաբաղի Քաշաթաղի շրջանում Հազարա գետի աջակողմյան Հոչանց վտակի աջ ափին:

Կառուցվել է պատվարային ջրընդունիչ 1274.0 մ նիշում, որն իրենից ներկայացնում էր գործնական պրոֆիլով բետոնային ջրթափ կառուցվածք, որի աջ կողմում կառուցվել էր ջրընդունիչ: Դերիվացիայի ընդհանուր երկարությունը կազմում էր 7230.0 մ, իրականացվում էր 1.62 մ տրամագծով խողովակներից: Դերիվացիայի թողունակությունը կազմում է 6.0 մ³/վրկ: ՀԷԿ-ի շենքը վերգետնյա տիպի է, որտեղ նախատեսվում է տեղադրվել է 4 հիդրոագրեզատ:

ՀԷԿ-ի շենքի չափերը որոշված են ըստ ագրեզատի չափերի և նրանց օժանդակ սարքավորումների դասավորության 10,0 × 30,0 × 10.2 մ: ՀԷԿ-ի շենքում տեղադրվել է էլեկտրական կամրջային ամբարձիչ 15,0 տ բեռնաբարձությամբ: Հիդրոագրեզատների հիմքերը արվել են երկաթբետոնից: Մեքենայական շենքի պատերը քարի մեղիսային շարվածքով են, իսկ ծածկը՝ հավաքովի երկաթբետոնյա սալերից: ՀԷԿ-ի օգտագործած ջրերը հեռացվում են գետ ուղղանկյուն կտրվածքի հեռացող ջրանցքով:

«Հոչանց» ՓՀԷԿ-ը ուներ հետևյալ հիմնական ցուցանիշները.

դրվածքային հզորություն՝ $N_{\text{դր}} = 6.078 \text{ ՄՎտ,}$

հաշվային էլք՝ $Q = 6.0 \text{ մ}^3/\text{վ,}$

ստատիկ ճնշում՝ $h_{\text{ս}} = 165.0 \text{ մ,}$

հաշվային ճնշում՝ $h = 128.30 \text{ մ,}$

միջին տարեկան արտադրած էլեկտրաէներգիայի քանակ՝
30.77 մլն. ԿՎտժ:

«Հոչանց» ՓՀԵԿ-ում արտադրված ամբողջ էլեկտրական էներգիան վաճառվում է ԼՂՀ էներգահամակարգին:

Պատվարային ջրընդունիչ

Պատվարային ջրընդունիչը կառուցվել է Հոչանց գետի 1274.0 մ նիշի վրա, որն իրենից ներկայացնում է բետոնային ջրթափ կառուցվածք, որի աջ կողմում նախատեսված է տղմագտիչ և ջրընդունիչ: Տղմագտիչի և ջրընդունիչի մուտքամասում տեղադրվել են հարթ փականներ:

Ճնշումային դերիվացիոն խողովակաշար

Կառուցվել էր ճնշումային դերիվացիոն խողովակաշար, որի տրամագիծը 1620 մմ է, երկարությունը՝ 7230.0մ: Այն սկսվում է ջրընդունիչի ջրհորից և անցնելով հիմնականում գոյություն ունեցող ճանապարհի եզրով ավարտվում է տուրբինային փականի մոտ: Խողովակաշարը հիմնականում ծածկված է բնահողով:

ՀԵԿ-ի շենք

ՀԵԿ-ի շենքը կառուցվել է Հոչանց գետի աջ ափին: ՀԵԿ-ի շենքը վերգետնյա տիպի է, որտեղ տեղադրվել է չորս հիդրոտուրբին:

ՀԵԿ-ի շենքի չափերը որոշված են ըստ ազդեցատների չափերի և նրանց օժանդակ սարքավորումների դասավորության: ՀԵԿ-ի շենքում տեղադրվել է էլեկտրական կամրջային ամբարձիչ 15,0 տ բեռնաբարձությամբ: Հիդրոագրեզատների հիմքերն արված են երկաթբետոնից: Մեքենայական շենքի պատերը քարի մեդիսային շարվածքով են, իսկ ծածկը՝ հավաքովի երկաթբետոնն սալերից:

ՀԵԿ-ի օգտագործած ջրերը հեռացվում են դեպի գետ ուղղանկյուն կտրվածքի հեռացնող ջրանցքով:

ՀԵԿ-ի շենքում տեղակայված չորս հիդրոագրեզատները ունեն ավտոմատ կարգավորման և ղեկավարման համակարգ: Ղեկավարման, ավտոմատացման և հսկողության կայանային սարքավորումները ապահովում են կայանի նորմալ աշխատանքը ավտոմատ ռեժիմով:

Հիդրոէլեկտրակայանի ղեկավարման բոլոր վահանակների համար նախատեսվում էր առանձին տեղամաս ՀԵԿ-ի շենքի ներսում: Տուրբինների փականները նույնպես տեղավորված էին շենքի մեջ:

Քանի որ ՀԵԿ-ը նախատեսվում է շահագործել պատվիրատուի (ՀԵԿ-ի տիրոջ) կողմից, ապա շահագործող անձնակազմը գտնվելու էր շենքում, և ՀԵԿ-ի չափիչ-փոխակերպիչների ցուցմունքներն ու ազդանշանները կհաղորդվեն կայանի դիսպետչերական վահանակ:

ՀԵԿ-ի շենքում նախատեսված են հակահրդեհային միջոցառումներ:

Հոչանց գետն ունի խառը սնուցում, որի հիմնական աղբյուրը առաջանում է ձնհալքից և աղբյուրներից, իսկ որոշ տարիների՝ նաև անձրևներից: Առավելագույն ելքերը դիտվում են ապրիլ-հունիս ամիսներին:

Բնապահպանական նվազագույն ելքը 1050 լ/վրկ է:

ՀԷԿ-ի հաշվային ելքը վերցվում է պատվարային ջրընդունիչից սկիզբ առնող ճնշումային խողովակաշարից, որը տեղադրվում է գոյություն ունեցող ճանապարհին զուգահեռ և ՀԷԿ-ի շենքից հետո վերադարձվում է գետ, առանց որակի ու քանակի փոփոխության: Չի խախտվում գոյություն ունեցող ջրապատողների ռեժիմը:

1.4. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ իր դրվածքային հզորությամբ ԼՂՀ խոշորագույն հիդրոէլեկտրակենտրոնի արտադրող ընկերությունն է, որը արտադրության գործընթացում օգտագործում է բացառապես վերականգնվող աղբյուրներ՝ մատակարարելով մաքուր և անվտանգ էներգիա:

- «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի դրվածքային հզորությունը կազմում է 71.7 ՄՎտ,
- «Մարսանգ» ՀԷԿ-ինը՝ 50 ՄՎտ (2 տուրբին, 25-ական ՄՎտ հզորության),
- «Թրդի-1» ՓՀԷԿ-ինը՝ 3 ՄՎտ (3 տուրբին, 1-ական ՄՎտ հզորության),
- «Թրդի-2» ՓՀԷԿ-ինը՝ 5.9 ՄՎտ (2 տուրբին, 3-ական ՄՎտ հզորության),
- «Թրդի-3» ՓՀԷԿ-ինը՝ 5.0 ՄՎտ (2 տուրբին, 3-ական ՄՎտ հզորության),
- «Մատաղիս-1» ՓՀԷԿ-ինը՝ 4.8 ՄՎտ (3 տուրբին 1.6 ՄՎտ հզորության),
- «Մատաղիս-2» Փ ՀԷԿ-ինը՝ 3.0 ՄՎտ հզորության (3 տուրբին 1-ական ՄՎտ հզորության),
- «Թրդի-4» ՓՀԷԿ-ինը՝ 0.8 ՄՎտ (2 տուրբին),
- «Լև-1» ՓՀԷԿ-ինը՝ 7.0 ՄՎտ (2 տուրբին):

Մարսանգի հիդրոէլեկտրակայանը ԱՀ տարածքում ամենահզորն է: Նա հանդիսանում է հանրապետության հուսալի ու անխափան էլեկտրակենտրոնի մատակարարման հիմքը:

Հաշվի առնելով կայանի ավելի քան 40 տարվա շահագործման փորձը էլեկտրակենտրոնի արդյունավետ արտադրությունը ապահովվում է տարվա կտրվածքով ջրամբարում ջրի վերին մակարդակի նիշը 692-718 մ տատանումների դեպքում:

Նոր կայանների շահագործման հետ զուգահեռ, վերացնելով ի հայտ եկած թերացումներն ու բացթողումները, տարեցտարի ավելանում են նրանցից յուրաքանչյուրում էլեկտրակենտրոնի արտադրության ծավալները:

«Մարսանգ» ՀԷԿ-ի արդյունավետ աշխատելու (ջրի տեսակարար ծախսը նվազեցնել), նրանում ավելի մեծ քանակությամբ էլեկտրակենտրոնի արտադրելու համար 2015թ. նախանշվել է Մարսանգի ջրամբարում ջրի վերին մակարդակի նիշը բարձրացնելով կուտակել անհրաժեշտ ջրային պաշար: 2015թ. վերջին Մարսանգի ջրամբարում ջրի վերին մակարդակի նիշը եղել է

706,65 մ ու 327,90 մլն մ³ ջուր, նախորդ տարվա 699,72 մ ու 262 մլն մ³-ի փոխարեն կամ 65.9 մլն մ³ ջուր ավել: 2013թ. Թարթառ գետի ջրհոսքը ամենացածրերից է եղել վերջին 15 տարիների ընթացքում:

Ընկերության ռազմավարական նպատակն է՝ ժամանակակից սարքավորումներով հագեցած նոր հիդրոէլեկտրակայանների շահագործման և միավոր էլեկտրաէներգիայի արտադրության համար ջրի տեսակարար ծախսի իջեցման ճանապարհով արտադրական հնարավորությունների ընդլայնումը:

Ընկերությունը հիմնադրվել է ԱՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի N 484 որոշմամբ (պետական գրանցում է ստացել 2007թ.-ի դեկտեմբերի 12-ին «Արցախի ՀԷԿ» անվանումով և «փակ բաժնետիրական ընկերություն» կազմակերպախրավական ձևով), որի համաձայն ընկերության 100% բաժնետոմսերի սեփականատեր էր ԱՀ-ը՝ ի դեմս կառավարության:

«Արցախի ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է «Արցախ-էներգո» ՓԲԸ-ի (գրանցված՝ ԱՀ-ի արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 28.02.2005թ. (գրանցման համար՝ 443.120.20892, վկայական՝ 001350) առանձնացման միջոցով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան:

ԱՀ կառավարության 2008թ. մայիսի 13-ի «Արցախի ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» թիվ 360 որոշման համաձայն «Արցախի ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված՝ ԱՀ-ի արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 12.12.2007թ., գրանցման համար՝ 443.120.11328, վկայական՝ 02 Ա 001980) վերակազմավորման միջոցով վերակազմակերպվել է «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության: 2008թ.-ի հունիսի 9-ից ընկերությունը կրում է «Արցախի ՀԷԿ» ԲԲԸ ֆիրմային անվանումը և կազմակերպախրավական ձևը:

Ընկերության հիմնական ակտիվը Սարսանգի հիդրոէլեկտրակայանն է, որը կառուցվել է 1976թ. ԱՀ հիմնական գետի՝ Թարթառի վրա և համարվում է նախկին ԽՍՀՄ լավագույն և սարքավորումներով առավելագույնս հագեցած ՀԷԿ-երից մեկը: Սարսանգի ՀԷԿ-ը հագեցած է երկու հիդրոտուրբիններով՝ յուրաքանչյուրը 25 ՄՎտ դրվածքային հզորությամբ և վայրկյանում 33.2 մ³ ջրի օգտագործման ծավալներով:

Սարսանգի ջրամբարը նախատեսված է Թարթառ ՀԷԿ-ի միջին բազմատարյան 558մլն մ³ ջրհոսքը կուտակելու համար: Ջրամբարի լրիվ ծավալը կազմում է 565 մլն մ³, իսկ օգտակար ծավալը 495 մլն մ³ ու հայելու մակերեսը կազմում է 14,2 կմ²: Ջրամբարից հաշվարկային ջրթողը 840 մ³/վրկ է, որից 740 մ³/վրկ-ը վթարային ջրթողով, 70 մ³/վրկ-ը դերիվացիոն համակարգով ու 30 մ³/վրկ-ը ոռոգման փականներով: Ամբարտակի երկարությունը կազմում է

550մ, մաքսիմալ ճնշումը 126 մ է, իսկ հաշվարկային ճնշումը 87,5մ: Ջրամբարի աջ ափին գետի հունի մակարդակին կառուցված է շինարարական թունել 430մ:

Վթարային ջրթողի երկարությունն է 254 մ, իսկ դերիվացիոն ջրթողի երկարությունը՝ 280 մ:

2007թ. նոյեմբեր ամսից Սարսանգի ջրամբարն ու ՀԷԿ-ը շահագործվում են «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն կողմից:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ ստեղծմամբ 2008թ. ԱՀ կառավարությունը, որպես առաջնահերթ կանխանշել էր 5 փոքր հիդրոկայանների շինարարությունը Թ-1, Թ-2, Թ-3, Մ-1 և Մ-2:

2010թ. շահագործման է հանձնվել «Թրդի-1» ՓՀԷԿ-ը՝ 3,0 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 13,0 մլն. կՎտժ միջին տարեկան արտադրանքով:

«Թրդի-2» ՓՀԷԿ-ը շահագործման է հանձնվել 2011թ. 5,9 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 22,0 մլն կՎտժ միջին տարեկան արտադրանքով:

2012թ. ընկերության կողմից շահագործման է հանձնվել «Մատաղիս-1» և «Մատաղիս-2» ՓՀԷԿ-ը՝ համապատասխանաբար 4,8 և 3,0 ՄՎտ դրվածքային հզորություններով և 22,0 և 13,0 մլն կՎտժ միջին տարեկան արտադրանքով:

2015թ. շահագործման է հանձնվել «Թրդի-3» ՓՀԷԿ-ը, որի դրվածքային հզորությունը 5,0 ՄՎտ է, իսկ միջին տարեկան արտադրանքը 18մլն կՎտժ:

2018թ. սեպտեմբերի 28-ին շահագործման է հանձնվել «Թրդի-4» ՓՀԷԿ-ը 0.8 ՄՎտ դրվածքային հզորությամբ:

2018թ. հոկտեմբերի 18-ին շահագործման է հանձնվել «Լև-1» ՓՀԷԿ-ը 5.0 ՄՎտ դրվածքային հզորությամբ:

Ցուցանիշները:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն ՀԷԿ-երի տեխնիկական և ջրաէներգետիկ բնութագրերը

Բնութագրեր	Չափի միավոր	Սարսանգ	Թ-1	Թ-2	Թ-3	Մ-1	Մ-2	Ընդ.
Դրվածքային հզորություն	ՄՎտ	50.0	3.0	5.9	5.0	4.8	3.0	71.7
Էլ.էներգիայի միջին բազմատարյան արտադրանք	մլն կՎտժ	105.38	10.3	18.03	14.42	20.92	12.19	181.24
Մտատիկ ճնշում	մ	55-111	257.0	401.2	331.3	21	13.8	
Հաշվարկային էլք	մ³/վրկ	66.5	1.65	1.96	1.9	30	30	
Տուրբինների քանակը	հատ	2	3	2	2	3	3	15
Ճնշումային խողովակաշարի երկարությունը	մ	280	5880	4750	2*2500	202.5	25.5	
Ճնշումային խողովակաշարի տրամագիծը	մմ	3200	1220	1000	2*720	1600 2500	2500	
Տեղադրման կիշը	մ	607	1458.8	1058.0	727.09	397.63	384.7	

«Արցախի ՀԷԿ» ԲԲԸ-ն ստեղծումից հետո, ընկերության հիդրոէլեկտրակայաններում էլեկտրաէներգիայի արտադրության տարեկան ծավալները հետևյալն են.

մլն կՎտժ

ՀԷԿ-ի անվանում	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
«Սարսանգ» ՀԷԿ	24.6	97	119.3	175.85	93.99	97.91	82.78	103.72	81.93
Թրդի-1 ՓՇԷԿ				1.75	8.71	11.3	11.78	9.69	9.22
Թրդի-1 ՓՇԷԿ					1.51	18.28	20.48	17.01	15.85
Թրդի-1 ՓՇԷԿ									3.14
Մատաղիս -1 ՓՇԷԿ						0.21	16.48	23.17	19.12
Մատաղիս -1 ՓՇԷԿ						5.49	11.11	12.82	11.03
Ընդամենը	24.6	97	119.3	177.64	104.21	133.19	142.63	166.41	140.28

2016թ. «Արցախի ՀԷԿ» ԲԲԸ-ն հիդրոէլեկտրակայաններում արտադրվել է 184.50 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որից 104.89 մլն կՎտժ «Սարսանգ» ՀԷԿ-ում, 10.53 մլն կՎտժ «Թրդի-1» ՓՇԷԿ-ում, 17.93 մլն կՎտժ «Թրդի-2» ՓՇԷԿ-ում, 14.34 մլն կՎտժ «Թրդի-3» ՓՇԷԿ-ում, 23.69 մլն կՎտժ «Մատաղիս-1» ՓՇԷԿ-ում և 13.11 մլն կՎտժ «Մատաղիս-2» ՓՇԷԿ-ում:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10,650,000,000 ՀՀ դրամ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր թիվը՝ 1200:


Ընկերության ռազմավարական նպատակն է՝ ժամանակակից սարքավորումներով հագեցած նոր հիդրոէլեկտրակայանների շահագործման և միավոր էլեկտրաէներգիայի արտադրության համար ջրի տեսակարար ծախսի իջեցման ճանապարհով արտադրական հնարավորությունների ընդլայնումը, որն ուղղված կլինի ԱՀ-ն էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկի լրիվ բավարարմանը և հետագայում էլեկտրաէներգիայի արտահանմանը:

2018թ դրությամբ «Արցախի ՀԷԿ» ԲԲԸ-ն ունի 221 աշխատակիցներ, որոնցից վարչական՝ 53, արտադրական և սպասարկման ոլորտում ընդգրկված՝ 168:

«Արցախի ՀԷԿ» ԲԲԸ կորպորատիվ կառավարումը ուղղված է ոչ միայն բաժնետերերի աչքերում ընկերության դրական պատկերի ձևավորմանը, այլև ռիսկերի նվազեցմանը, ընկերության բնականոն գործունեության և ֆինանսական ցուցանիշների կայուն աճի ապահովմանը: Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կարգավորվում է ընկերության կողմից հաստատված առանձին կանոնակարգերով, որի մշակման հիմքում հաշվի են առնվել ոչ միայն ԼՂՀ-ում և ՀՀ-ում սահմանված կորպորատիվ կառավարման սկզբունքները, այլ նաև զարգացած արժեթղթերի շուկա ունեցող

երկրներում ձևավորված կորպորատիվ կառավարման սկզբունքները և էներգետիկ ոլորտում գործող օտարերկրյա հայտնի ընկերությունների փորձը:

Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որն էլ հանդիսանում է շահույթի ստացման միակ աղբյուրը: Էլեկտրաէներգիայի արտադրությունն ընկերությունն իրականացնում է Սարսանգի, Թրդե-1, Թրդի-2, Թրդի-3, Սատադիս-1, Սատադիս-2, Լև-1, Թրդի-4 հիդրոէլեկտրակայանների միջոցով: Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է ներքին շուկայում: Արտադրված էլեկտրաէներգիան ընկերությունը վաճառում է «Արցախէներգո» ՓԲԸ-ին: Վաճառքը իրականացվում է համաձայն առքուվաճառքի համապատասխան պայմանագրերի, որոնք գրանցված են ԱՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից: Վաճառքի գները որոշվում են հանձնաժողովի կողմից սահմանված սակագների հիման վրա:



«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ, առաջին հայկական բաց բաժնետիրական ընկերությունը հիմնադրվել է Արցախի կառավարության՝ 2007 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ: Ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխմանը մասնակցել է 1265 բաժնետեր՝ աշխարհի 10 երկրներից: «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի գործունեության հիմնական ուղղությունն էլեկտրաէներգիայի արտադրությունն է: 2015 թվականի հուլիսի դրությամբ՝ «Արցախ ՀԷԿ»-ն ունի վեց հիդրոէլեկտրակայան՝ 71,7 ՄՎտ դրվածքային հզորությամբ:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն իր գործունեության ընթացքում կազմակերպել է բաժնետոմսերի 3 հրապարակային տեղաբաշխում՝ 2009, 2010 և 2011 թվականներին:

2015 թվականի հուլիսի դրությամբ՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի դրվածքային հզորությունը կազմել է 71,7 ՄՎտ: Ընկերության կազմի մեջ մտնում էին հետևյալ ՀԷԿ-երը՝

- Սարսանգի ՀԷԿ՝ 50 ՄՎտ հզորություն,
- Թրդի-1 ՓՀԷԿ՝ 3 ՄՎտ հզորություն,

- Թրդի-2 ՓՇԷԿ՝ 5,9 ՄՎտ հզորություն,
- Թրդի-3 ՓՇԷԿ՝ 5 ՄՎտ հզորություն,
- Մատադիս-1 ՓՇԷԿ՝ 4,8 ՄՎտ հզորություն,
- Մատադիս-2 ՓՇԷԿ՝ 3 ՄՎտ հզորություն:

2015 թվականի հուլիսի դրությամբ նախատեսվում էր կառուցել Թրդի-4 ՓՇԷԿ-ը: 2012 թվականին ընկերության կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալը կազմել է 133,2 միլիոն կՎտժ:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի գործունեության հիմնական ուղղությունն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որն էլ հանդիսանում է շահույթի ստացման միակ աղբյուրը: Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է ներքին շուկայում: Արտադրված էլեկտրաէներգիան ընկերությունը վաճառում է «Արցախէներգո» ՓԲԸ-ին և «ԷՅ-Ի-ՋԻ» ՍՊԸ-ին, որոնք ունեն Արցախի Հանրապետության տարածքում էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման լիցենզիա: Վաճառքն իրականացվում է համաձայն առքուվաճառքի համապատասխան պայմանագրերի, որոնք գրանցված են Արցախի Հանրապետության Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից: Վաճառքի գները որոշվում են հանձնաժողովի կողմից սահմանված սակագների հիման վրա:

ՀԷԿ-երի շինարարության ծրագրերը ֆինանսավորվում են բաժնետոմսերի տեղաբաշխումից ներգրավված միջոցների և փոխառությունների հաշվին: Ընդհանուր առմամբ, ընկերությունը կազմակերպել է բաժնետոմսերի երեք հրապարակային տեղաբաշխում:

1. 2009 թվականի հունվար-մայիս, որի արդյունքում տեղաբաշխվել է 862,074 բաժնետոմս՝ յուրաքանչյուր բաժնետոմսի համար 1,000 դրամ անվանական արժեքով,
2. 2010 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր, որի արդյունքում տեղաբաշխվել է 1,400,000 բաժնետոմս՝ յուրաքանչյուր բաժնետոմսի համար 1000 դրամ անվանական արժեքով,
3. 2011 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր, որի արդյունքում տեղաբաշխվել է 3,287,926 բաժնետոմս, յուրաքանչյուր բաժնետոմսի համար 1000 դրամ անվանական արժեքով:

Նշված բաժանորդագրումների արդյունքում ընկերության կանոնադրական կապիտալն աճել է 5 մլրդ 550 մլն դրամով և 2012 թվականի ապրիլի 1-ի դրությամբ կազմել է 10 մլրդ 650 մլն դրամ:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը շրջանառվում են NASDAQ OMX Armenia ֆոնդային բորսայի երկրորդային B ցուցակում: Ընկերության բաժնետոմսերի իրացվելիությունն ապահովում է «Արմսվիխբանկ» ՓԲԸ-ն, որն ապահովում է բաժնետոմսերի առքուվաճառքի ամենօրյա գնանշումները:

«Արմավիսբանկ»-ը հանդիսանում է նաև «Արցախ ՀԷԿ»-ի բաժնետոմսերի տեղաբաշխողն ու հաշվարկային բանկը:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալի կառուցվածքը բաժնետոմսերի 3-րդ տեղաբաշխումից հետո ընդունել է հետևյալ տեսքը՝

- 47.89%, կամ՝ 5,100,000,000 դրամ – Արցախի կառավարություն,
- 35.0%, կամ՝ 3.726.863.000 դրամ - թվով 4 խոշոր բաժնետեր,
- 17.11%, կամ՝ 1,823,137,000 դրամ - 1261 փոքր բաժնետերեր:

Ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխմանը մասնակցել է 1265 բաժնետեր՝ աշխարհի 10 երկրներից: «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի երրորդ լրացուցիչ տեղաբաշխման արդյունքներով ավելացել է ընկերության խոշոր բաժնետերերի թիվը:

Ստորև ներկայացվում են «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 5 խոշոր բաժնետերերը՝ իրենց գրանցման վայրերով, հասարակ բաժնետոմսերի քանակով և ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասով:

Խ/Խ	Բաժնետերը	Գրանցման վայրը	Բաժնետոմսերի քանակը	Տոկոսը
1.	Արցախի կառավարություն	Արցախ	5,100,000 հատ	47.89%
2.	«Մ. Էներգոինվեստ» ՓԲԸ	Արցախ	1,274,057 հատ	11.96%
3.	Ժոզեֆ Ուղուտյան	ԱՄՆ	1,262,901 հատ	11.86%
4.	«Մուլտիկոնտինինտալ դիտրիբյուշն» ՍՊԸ	Միացյալ թագավորություն	868,270 հատ	8.15%
5.	«Զանգեզուրի պղնձամուխիբեկ-նային կոմբինատ» ՓԲԸ	Հայաստան	657,933 հատ	6.18%

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի կառավարումը կատարվում է կորպորատիվ սկզբունքով, որն ուղղված է ոչ միայն բաժնետերերի աչքերում ընկերության դրական պատկերի ձևավորմանը, այլև՝ ռիսկերի նվազեցմանը, ընկերության բնականոն գործունեության և ֆինանսական ցուցանիշների կայուն աճի ապահովմանը: Հաշվի առնելով, որ ընկերությունը հիմնադրվել է ԼՂՀ-ում, իսկ Արցախում կորպորատիվ կառավարման ընդունված սկզբունքները սահմանվում են հիմնականում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքով և այլ օրենքներով՝ ուստի, ընկերության կառավարման համակարգը կառուցված է այդ օրենսդրության պահանջների շրջանակներում: Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կարգավորվում է նաև ընկերության կողմից հաստատված առանձին կանոնակարգերով, որոնց մշակման հիմքում հաշվի են առնվել ոչ միայն ԼՂՀ-ում և ՀՀ-ում

սահմանված, այլ նաև՝ արժեթղթերի զարգացած շուկա ունեցող երկրներում ձևավորված կորպորատիվ կառավարման սկզբունքները և էներգետիկ ոլորտում գործող օտարերկրյա հայտնի ընկերությունների փորձը:

«Արցախյա ՀԷԿ» ԲԲԸ-ի կառավարման մարմիններն են՝

- բաժնետերերի տարեկան ժողով,
- տնօրենների խորհուրդ,
- գլխավոր տնօրեն,
- վերստուգող հանձնաժողով,
- կորպորատիվ քարտուղար,
- գլխավոր հաշվապահ:

2012 թվականի դրությամբ՝ «Արցախյա ՀԷԿ» ԲԲԸ-ն ունի 160 աշխատակից, որոնցից վարչական՝ 44, իսկ արտադրական և սպասարկման ոլորտում ընդգրկված՝ 116 աշխատակից:

Հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկի 60 %-ը ապահովում է Մարսանգի ջրամբարի վրա կառուցված ՀԷԿ-ը: Ջրերն օգտագործվում են ոռոգման և էներգետիկ նպատակներով: Ձմռանը չի սառցակալում: Կա ձկնաբուծություն: Շրջակայքը անտառածածկ է: Ամբարտակը ծառայել է ոչ միայն էլեկտրաէներգիա ստանալու, այլ նաև դաշտերը ոռոգելու համար: Ազատագրական պատերազմի ժամանակ Մարսանգի ջրամբարի շրջակայքում կատաղի մարտեր են տեղի ունեցել, որոնց ժամանակ կասեցվել է աղբբեջանական բանակի 1992 թվականի ամառային հարձակումը, և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի կողմից վերականգնվել է Մարսանգի ջրամբարի նկատմամբ վերահսկողությունը:

Ներկայումս էլեկտրաէներգիայի արտադրությունն ընկերությունն իրականացնում է Մարսանգի և Թրդե-1 ՀԷԿ-երի միջոցով:

2010թ.-ի ապրիլին շահագործման է հանձնվել Թրդե-1 ՀԷԿ-ը, և ընկերությունը իրականացնում էր լայնածավալ ներդրումներ երեք ՀԷԿ-երի՝ Մատաղիս-1, Մատաղիս-2, Թրդե-2, կառուցման ուղղությամբ:

Թրդե-1 ՀԷԿ-ի շինարարության ծրագրի արժեքը կազմել է շուրջ 832.5 մլն ՀՀ դրամ, որն իրականացվել է բաժնետոմսերի առաջին տեղաբաշխումից ներգրավված սեփական միջոցների հաշվին:

Ստորև ներկայացվում են Թրդե-1, Թրդե-2, Մատաղիս-1 և Մատաղիս-2 ՀԷԿ-երի տեխնիկական ցուցանիշները:

Թրդե-1, Թրդե-2, Մատաղիս-1 և Մատաղիս-2 ՀԷԿ-երի տեխնիկական ցուցանիշները

<i>Բնութագրեր</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Թրդե ՀԷԿ-1</i>	<i>Թրդե ՀԷԿ-2</i>	<i>Մատաղիս ՀԷԿ-1</i>	<i>Մատաղիս ՀԷԿ-2</i>
Դրվածքային հզորություն	ՄՎտ	3	5.9	4.8	3
Էլեկտրաէներգիայի միջին բազմամյա արտադրանք	մլն կՎտժ	16.5	24.82	22.4	13.2
Հաշվարկային ճնշում	մ	210	355.5	19.5	11.7
Հաշվարկային ելք	մ ² /վրկ	2	2	30	30
Տարեկան ջրհոսքի ծավալ	մլն մ ³	33.76	28.54	632.4	632.4
Հիդրոազրեգատների թիվ	հատ	3	2	3	3
Դերիվացիոն խողովակաշարի երկարություն	կմ	5	5	0.24	0.03
Դերիվացիոն խողովակաշարի տրամագիծ	հատ/մմ1/1220	1/1220	1/1220	3*1600/3*2520	3*2520

Արցախի Հանրապետությունում կար 24 ջրամբար, որոնցից 22-ն ունեին մեկտրատիվ (ոռոգման), իսկ 2-ը՝ էներգետիկ նշանակություն:

Մեկտրատիվ ջրամբարները Արցախի գյուղնախարարության տիրույթում են: Այն զբաղվում է երկրի ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և քաղաքականության մշակման խնդիրներով, իսկ հիդրոէներգետիկան (այսինքն՝ էներգետիկ նշանակության ջրամբարները) ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության ոլորտն է:

Էներգետիկ երկու ջրամբարներն են Մարսանգի և Մատաղիսի ջրամբարները: Մրանք օգտագործվում էին համապատասխանաբար «Մարսանգ» (50 ՄՎտ) և «Մատաղիս-1» (4,8 ՄՎտ), «Մատաղիս-2» (3 ՄՎտ) ՀԷԿ-երի համար, որոնք շահագործում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն. սրա շուրջ 48 տոկոս բաժնետոմսերը պետական են, իսկ մնացած 52 տոկոսը բաշխված է ավելի փոքր մասնավոր սեփականատերերի միջև:

Սա ոչ միայն Արցախի, այլև հայկական երկու հանրապետությունների տարածքում ամենամեծ ջրամբարն է: ՀՀ ամենախոշոր՝ Ախուրյանի ջրամբարը, որը համատեղ օգտագործվում է Թուրքիայի հետ, ունի 525 մլն խմ ծավալ, որից օգտակար է համարվում 510 մլն խմ-ն (ընդհանուր ծավալը բաժանվում է օգտակարի և մեռյալի. առաջինը ջրի այն ծավալն է, որը հաշվարկված է օգտագործել, իսկ մեռյալ ծավալը ժամանակի ընթացքում տիղմով և ջրաբերուկներով ծածկվող ու անօգտագործելի դարձող մասն է): Դերիվացիոն համակարգով ջրամբարից դեպի «Մարսանգ» ՀԷԿ վայրկյանում կարող է մղվել շուրջ 70 խմ ջուր: Բացի դրանից՝ ջրամբարն ունի նաև ոռոգման փականներ և մեկտրատիվ նպատակներով դրանից վայրկյանում կարող է դուրս բերվել 30 խմ ջուր:

Մարսանգից արևելք՝ Թարթառի համեմատաբար ստորին հոսանքի վրա է գտնվում Մատաղիսի ջրամբարը (Մարտակերտի շրջան), որը, ինչպես և կից ՀԷԿ-ը, նույնպես խորհրդային տարիներին է կառուցվել: Այն ժամանակ ջրամբարն օգտագործվել է նաև ոռոգման նպատակով: 2012-ին Մատաղիսում շահագործման են հանձնվել «Մատաղիս-1» և «Մատաղիս-2» փոքր ՀԷԿ-ը: Մատաղիսի ջրամբարի ընդհանուր ծավալը 5 մլն խմ է:

Մարսանգից ու Մատաղիսից գատ՝ մյուսները ոռոգման ջրամբարներ են: Դրանք հիմնականում ներհամայնքային լճակներ են: Խաչենի ջրամբարն ունի 15 մլն խմ ծավալ: Խաչենագետի միջին հոսանքում գտնվող այս ջրամբարը ևս կառուցվել է խորհրդային տարիներին, ընդ որում՝ նախկին ԼՂԽ տարածքից դուրս՝ Ադդամի շրջանում, սակայն այսօր գտնվում է ԱՀ Ասկերանի և Մարտակերտի շրջանների սահմանազլխին:

Խաչենից բացի՝ ոռոգման համար կարևոր նշանակություն ունի նաև Վարանդա-1 ջրամբարը, որը գտնվում է հանրապետության հարավային հատվածում՝ նախկին Ֆիզուլի բնակավայրի հարևանությամբ:

Հաշվի առնելով մի շարք գործոններ, ինչպիսիք են՝ ընդհանուր պայմանները, պատվարի նախագիծը, ներքին բյեֆի մակարդակը, սոցիալ-տնտեսական պայմանները, ջրամբարների պատվարները խմբավորվում են ըստ շահագործման բարձր, միջին և ցածր ռիսկայնության: Մյուս կողմից՝ դրանք տարբերակվում են նաև ըստ սեյսմիկ ազդեցության նկատմամբ բարձր, միջին և ցածր խոցելիության:

Մարսանգի ջրամբար


«Մարսանգի ջրամբարը, հանդիսանալով Եվրոպա աշխարհամասի ամենաբարձր գրունտային պատվարը և հանդիսանալով ինժեներական տեսակետից համապարփակ մի կառույց՝ իրականացված բարդ ինժեներական պայմաններում, իր ռիսկայնությամբ համարվում է առաջին աստիճանի կառույց: Մատաղիսի ջրամբարի ընդհանուր ծավալը 5,2 մլն խմ է, Խաչենինը՝ մոտ 22 մլն խմ, Վարանդա-1-ինը՝ 10-12 մլն խմ: Մտացվում է, որ Մարսանգի շնորհիվ հնարավորություն կա Արցախի տարածքում կուտակել առնվազն 604 մլն խմ ջուր (ներառյալ ջրամբարների մեռյալ ծավալները):

Վարանդա գետի վրա երեք ջրամբար կա՝ Վարանդա-1, Վարանդա-2, Վարանդա-3, բոլորն էլ կառուցվել են խորհրդային տարիներին: Առաջինը գտնվում է ամենացածր նիշում և այս պահին կուտակում է մյուսներում չկուտակվող-դուրս եկող ջրերը: Ընդ որում՝ Վարանդա-1-ն ու Վարանդա-2-ն անմիջական հարևանությամբ են կառուցված: 2015-ին սկսվել էին դեռևս 1962-ին կառուցված Վարանդա-3-ի վերանորոգման աշխատանքները, որի պատվարը տուժել էր Արցախյան պատերազմի տարիներին: Մոտ 3 մլն ընդհանուր ծավալ ունեցող ջրամբարը առաջին երկուսի պես կառուցվել է ԼՂԽՄ

տարածքից դուրս Ֆիզուլու շրջանում, ավելի կոնկրետ՝ Վարանդայի և դրավտակ Ամարասի միախառնման հատվածում: Ջրամբարի օգտակար ծավալը շուրջ 2,5 մլն խմ է, ինչը հնարավորություն կտա ոռոգել 500-1000 հա հողատարածք. տարբերությունը կախված է ոռոգման եղանակից:

«Արցախի ՀԷԿ» ԲԲԸ կողմից արտադրված էլեկտրական էներգիայի քանակությունները ներկայացվում են ըստ տարիների


<i>Արտադրության տարին</i>	<i>Արտատրված էլեկտրական էներգիայի քանակությունը, կՎտժ</i>
2008թ.	97 108 400
2009թ.	119 224 000
2010թ.	177 638 900
2011թ.	104 209 700
2012թ.	133 196 800
2013թ.	142 624 400
2014թ.	166 416 600



Ինչպես երևում է բերված թվերից, տարեցտարի էլեկտրական էներգիայի արտադրությունը ավելացել է:

Ընկերության շահույթը ներկայացվում է ըստ տարիների


<i>Արտադրության տարին</i>	<i>Շահույթը, հազ. ՀՀ դրամ</i>
2008թ.	390 080
2009թ.	1 111 990
2010թ.	1 694 510
2011թ.	1 056 225
2012թ.	1 518 170
2013թ.	2 170 691
2014թ.	2 795 361



Ինչպես երևում է բերված թվերից, տարեցտարի շահույթն ավելացել է:

Հնկերության ակտիվները ներկայացվում են ըստ տարիների

Արտադրության տարին	Ակտիվները, հազ. ՀՀ դրամ
2008թ.	6078707
2009թ.	8898927
2010թ.	12886756
2011թ.	15445223
2012թ.	16059759
2013թ.	16702356
2014թ.	17335800




Ինչպես երևում է բերված թվերից, տարեցտարի ակտիվներն ավելացել են:

Ընկերության սեփական կապիտալը ներկայացվում է ըստ տարիների

<i>Արտադրության տարին</i>	<i>Սեփական կապիտալը, հազ. ՀՀ դրամ</i>
2008թ.	5186047
2009թ.	6661348
2010թ.	8717995
2011թ.	11795535
2012թ.	11615864
2013թ.	11876861
2014թ.	12427253


Ինչպես երևում է բերված թվերից, տարեցտարի սեփական կապիտալը ավելացել է:



Ընկերության աշխատողների միջին ամսական աշխատավարձը ներկայացվում է ըստ տարիների

<i>Արտադրության տարին</i>	<i>միջին ամսական աշխատավարձը, ՀՀ դրամ</i>
2008թ.	83 072
2009թ.	120 247
2010թ.	117 181
2011թ.	135 778
2012թ.	133 651
2013թ.	143 422
2014թ.	186 662

Ինչպես երևում է բերված թվերից աշխատակիցների տարեց տարի միջին ամսական աշխատավարձը ավելացել է:



ԳԼՈՒԽ 2

ԱՐՑԱԽԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ջերմամատակարարման համակարգերի զարգացման հիմնահարցերը Արցախի Հանրապետությունում

Արցախի Հանրապետության տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի էներգետիկայի արդյունավետ զարգացումը: Արցախում հետագա տնտեսության զարգացմանը զուգընթաց անհրաժեշտություն կառաջանա ունենալ արդիական սարքավորումներով կահավորված ջերմամատակարարման համակարգեր բնակչությանը տաք ջուր և բնակելի և հասարակական շենքերին ջեռուցում մատակարարելու համար: Կարևոր հարց է նաև Ստեփանակերտ քաղաքում գազատուրբինային ջեռուցման ջերմային էլեկտրակայանի ստեղծումը: Այն հնարավորություն կտա համատեղ ցիկլով արտադրել էլեկտրական և ջերմային էներգիա, ինչպես մեծ քանակությամբ վառելիքաէներգետիկ ռեսուրսներ: Բացի դրանից Արցախի էներգահամակարգում ներկայումս աշխատում են միայն հիդրոէլեկտրակայաններ, որոնք հուսալի ձևով չեն կարող փակել առկա պիկային բեռնվածությունները: Գազային տուրբինները այդպիսի հնարավորություն ունեն: Նրանք չեն պահանջում ջուր հովացման համար, կարող են աշխատել նաև պիկային ռեժիմների դեպքում: Աշխատանքի սկզբունքը հետևյալն է:

Բնական գազը այրվելով գազային տուրբինի այրման խցում ուղղվում է գազային տուրբին: Արտադրվում է էլեկտրական էներգիա: Այնուհետև աշխատած գազերը բավական բարձր ջերմաստիճանով կարելի է օգտագործել ջերմամատակարարման համար գնացող ցանցային ջրի տաքացման համար:

Առաջարկվում է կառուցել 12 ՄՎտ հզորությամբ ջեռուցման ՋԷԿ: Այն համեմատվել է անջատ եղանակով էլեկտրական և ջերմային էներգիա արտադրող կայանների հետ: Տեղադրվում է 2 հատ 6 ՄՎտ հզորությամբ գազային տուրբին և ջերմօգտագործիչ:

6 ՄՎտ հզորությամբ գազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-ի հիմնական պարամետրերը ներկայացված են ստորև.

Հզորությունը, ՄՎտ	6.0
Օ.Գ.Գ. %	23
Գազի ջերմաստիճանը տուրբինից առաջ, °C	760
Գազի ջերմաստիճանը օգտագործելուց հետո, °C	410
Գազի ծախսը, կգ/վ	45
Գազի ծախսը, կգ/վ (Q=48610 կՋու/կգ)	1930
Պայմանական վառելիքի տեսակարար ծախսը, կգ/կՎտժ	0.54
Հեռացող գազերի ջերմաստիճանը, °C	120
Վառելիքի ջերմության օգտագործման գործակից	0.76
Վառելիքի հարաբերական ծախսը վերագրած բացթողնված ջերմության	0.56
Պայմանական վառելիքի տեսակարար ծախսը բացթողնված էլեկտրաէներգիայի, կգ/կՎտժ	0.24
Պայմանական վառելիքի տեսակարար ծախսը, կգ/Հկալ	145.7
Տուրբինի զանգվածը, տ	50

Գազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-երի արդյունավետությունը գնահատելու համար այն համեմատենք նույն հզորությամբ շոգետուրբինային ջեռուցման ՋԷԿ-ի հետ:

Գազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-երի արդյունավետությունը գնահատելու համար այն համեմատենք նույն հզորությամբ շոգետուրբինային ջեռուցման ՋԷԿ-ի հետ: Հաշվարկները կատարվել են 12 ՄՎտ էլեկտրական հզորությամբ ՋԷԿ-ի համար հաշվի առնելով Ստեփանակերտի կլիմայական պայմանները:

Դրա համար անհրաժեշտ է այն ներկայացնել տարեկան բերված ծախսերի տեսքով: Այսինքն՝

$$3_{տ} = U_{տ} + E_{տ}K \quad (1)$$

որտեղ K -ն՝ կայանի կապիտալ ներդրումներն են, դրամ, $E_{տ}$ -ն՝ արդյունավետության նորմատիվային գործակիցն է, ընդունվում է հավասար 0.12-ի,

$U_{տ}$ -ն՝ տարեկան շահագործման ծախսերն են, դրամ/տարի:

Տարեկան շահագործման ծախսերի մեջ մտնում են՝ ամորտիզացիայի և ընթացիկ նորոգման, շահագործող անձնակազմի աշխատավարձը, ընդհանուր կայանային և վառելիքի հետ կապված ծախսերը:

$$U_{տ} = U_{ամ} + U_{աշխ} + U_{ը.կ.} + U_{վ}, \quad (2)$$

Որոշենք կայանի կապիտալ ներդրումները

$$K = \bar{K} N_{կ}, \quad (3)$$

որտեղ՝

\bar{K} -ն՝ էլեկտրակայանի կառուցման տեսակարար կապիտալ ներդրումներն են՝ դրամ/կՎտ,

N_k -ն՝ կայանի էլեկտրական հզորությունը, ՄՎտ:

Այժմ հաշվարկենք տարեկան օգտագործված վառելիքի ծախսերը էլեկտրական և ջերմային էներգիաների արտադրման համար:

Էլեկտրական էներգիայի արտադրման համար կարող ենք գրել

$$B_{qm} = \omega_2 Q_m b_m \times 10^{-6}, \quad (4)$$

որտեղ

ω_2 -ն՝ գազատուրբինային կայանքում էլեկտրական էներգիայի տեսակարար արտադրությունն է ջերմային սպառման բազայի վրա կՎտժ/ԳՋ,

Q_m -ն՝ տարեկան արտադրված ջերմային էներգիայի քանակությունն է,

B_{qm} -ն՝ գազային տուրբինում մեկ կՎտժ էլեկտրական էներգիա արտադրելու համար վառելիքի տեսակարար ծախսն է գրամ/կՎտժ:

Գազատուրբինային կայանքում ստացված ջերմային էներգիայի տարեկան օգտագործված վառելիքի քանակը կարող ենք որոշել հետևյալ ձևով

$$B_m = Q_m b_2 10^{-3}, \text{ տոննա,}$$

որտեղ

b_2 -ն՝ վառելիքի տեսակարար ծախսն է ջերմային էներգիայի արտադրման համար:

Լավագույն տարբերակի ընտրման համար որպես չափանիշ ծառայող բերված ծախսերի (1) բանաձևի մեջ մտնող բաղադրիչների նշանակությունները որոշվում են տեխնիկատնտեսական հաշվարկներ կատարելու հայտնի մեթոդիկայի համաձայն:

Անհրաժեշտ է նշել, որ տարեկան բերված ծախսերով հաշվարկներ կատարելիս առավելությունը տրվում է այն տարբերակին, որի դեպքում ծախսերը նվազագույնն են ստացվում:

Հետևաբար՝ նպատակահարմար է նախագծել և կառուցել գազատուրբինային կայանքներով կահավորված ջեռուցման ՋԷԿ-եր, քանի որ տարեկան բերված ծախսերը զգալիորեն փոքր են ստացվում:

Շուկայական հարաբերությունների պայմաններում վառելիքի արժեքը փոփոխության միտում ունի՝ կախված մի շարք գործոններից: Այդ պատճառով կատարված է տարեկան բերված ծախսերի հաշվարկները վառելիքի տարբեր արժեքների դեպքում:

Ստորև ներկայացված է երկու տարբերակների դեպքում տարեկան բերված ծախսերի հաշվարկը և համեմատությունը, որոնց արդյունքները ամփոփված են աղյուսակներում:

Աղյուսակից երևում է, որ գազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-երի դեպ-


քում տեխնիկատնտեսական ցուցանիշները ավելի գերադասելի են, քան շոգետուրիկային ՋԷԿ-ինը: Տարեկան բերված ծախսերի արժեքները տարբեր վառելիքի գների դեպքում բերված են աղյուսակում:

<i>Վառելիքի արժեքը, դրամ/տոննա</i>	<i>I Տարբերակ դրամ/տարի $\times 10^9$</i>	<i>II Տարբերակ դրամ/տարի $\times 10^9$</i>	<i>Տարբերությունը, դրամ/տարի $\times 10^9$</i>
140 հազար ՀՀ դրամ	8.5	10.3	1.8
150 հազար ՀՀ դրամ	9.4	11.3	1.9
160 հազար ՀՀ դրամ	10.2	12.5	2.3

Վառելիքի տարբեր արժեքների դեպքում հետզնման ժամանակահատվածը կկազմի

<i>Վառելիքի արժեքը, դրամ/տոննա</i>	<i>I տարբերակ հետզնման ժամանակահատվածը, տարի</i>	<i>II տարբերակ հետզնման ժամանակահատվածը, տարի</i>	<i>Տարբերությունը, հետզնման ժամանակահատվածը, տարի</i>
140 հազ. ՀՀ դրամ	6.1	7.5	1.4
150 հազ. ՀՀ դրամ	6.5	8.03	1.53
160 հազ. ՀՀ դրամ	7.0	8.1	1.1

Առաջարկվում է նաև տեղական նշանակության ջերմամատակարարման համակարգերում օգտագործել արևային էներգիան համատեղելով կենսազանգվածով կամ արևային էներգիան համակցել թափոններից ստացված էներգիայով: Այսպիսի հիբրիդ համակարգերի արդյունավետությունը կավելանա առնվազն 20 տոկոսով: Համակարգերում կարող է օգտագործվել նաև ջերմային պոմպեր, ինվերտորներ, կաթսաներ: Միայն կենսազանգվածով աշխատող համակարգերը ունեն դժվարություններ: Ջեռուցման անջատման դեպքում տաք եղանակի ժամանակ կաթսայի հզորությունը էականորեն նվազում է, որի հետևանքով աշխատանքի արդյունավետությունը ընկնում է: Այս դեպքում կարելի է օգտագործել ջերմային կուտակիչներ:



Նկար 1. Գազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-ի սկզբունքային սխեման

Մանրություն 1՝ կոմպրեսոր, 2՝ օդատաքացուցիչ, 3՝ այրման խուց, 4՝ գազային տուրբին, 5՝ էլեկտրազենեքատոր, 6՝ օգտահանման կաթսա, 7՝ ցանցային պոմպ:

Աշխատանքի սկզբունքը հետևյալն է: Արևային մարտկոցներից ստացված ջերմային էներգիան տրվում է ջերմափոխանակիչ ապարատ, որտեղ տաքացվում է ջուրը: Տաք ջուրը տրվում է կաթսա, որտեղ ստացվում է գերտաք գոլորշի: Այնուհետև այն տրվում է շոգետուրբին, որտեղ արտադրվում է էլեկտրական էներգիա: Կոնդենսատորում հովանալուց հետո, նորից տրվում է տաքացուցիչ: Գազը ստացվում է գազազենեքատորում. կենսազանգվածի ջերմաքիմիական գազաֆիկացիայի արդյունքում:

2.2. Արցախի էներգետիկայի առօրյան

2020 թվականի Արցախի Հանրապետությանը պարտադրված պատե-րազմի հետևանքով էլեկտրաէներգետիկական համակարգը զգալի կորուստ-ներ է կրել: Բավականին աշխատանք էր պահանջվում կրկին բնակավայրերն անխափան էլեկտրականությամբ ապահովելու համար: Օրինակ, 2020թ. նոյեմբերի 22-ի դրությամբ հիմնականում վերականգնվել է Բերդաշեն, Աշան, Նորշեն, Եմիշճան, Հացի, Գիշի, Սպիտակաշեն, Մուշկապատ, Հաղորտի, Կա-ղարծի, Պառավաթումբ գյուղերի էլեկտրականությունը, իրականացվել են էլեկտրագծերի վերականգնման ու այլ աշխատանքներ:

2020թ. նոյեմբերի 16-ի դրությամբ հոսանքազրկված են եղել Մարտունու շրջանի Ճարտար, Սոս, Մաճկալաշեն, Քարահունջ, Քերթ, Կոլխոզաշեն, Կա-վահան, Մամնա, Խերխան, Ծովատեղ, Հերհեր, Կարմիր շուկա, Թաղավարդ, Կալեր, Մխտորաշեն և Ասկերանի շրջանի Սզնեք, Մխիթարաշեն, Խաչմաչ, Կարմիր գյուղ բնակավայրերը:

Պատերազմական գործողությունների հետևանքով այդ բնակավայրերը սնող ենթակայանները և էլեկտրալարերը լրջորեն վնասվել էին, և աշխա-տանքներ են կատարվել էլեկտրականությունն վերականգնելու ուղղությամբ:

Ներկայումս Ստեփանակերտ քաղաքը սնվում է 110 ԿՎ ենթակայանից: Սպառվող էլեկտրական հզորությունը կազմում է մոտ 17 ՄՎտ: Բարձր բեռի հետևանքով առաջանում են դժվարություններ: Մասնավորապես, 2020թ. դեկտեմբերի 7-ին վթարավերականգնողական աշխատանքներ կատարելու նպատակով՝ ժամը 12:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում հոսան-քազրկվել են մայրաքաղաք Ստեփանակերտն ու Ասկերանի շրջանը: Այս օրերի ընթացքում Արցախի էներգետիկներն աշխատում էին 24 ժամ:

Պարտադրված պատերազմի հետևանքով «ազերիների» կողմն անցած հայկական բնակավայրերում գործում էին մի շարք հիդրոէլեկտրակայաններ, որոնք պատկանում էին գործարար մարդկանց: Հաշված օրերի ընթացքում այդ կայանները ապամոնտաժվել են, և հիմնական սարքավորումների մի մասը տեղափոխել Հայաստան: Մակայն, ցավոք, այդ ՀԷԿ-երի սարքավո-րումների (ճնշումային խողովակաշար, ենթակայաններ և այլն) մի զգալի մասը մնացել են այնտեղ: Ստորև ներկայացնում են լուսանկարներ առանց մեկնաբանության:

Առաջարկում են հետագա բանակցությունների ընթացքում հարց բարձ-րացնել, որպեսզի դեռևս չապամոնտաժված էներգետիկական սարքավո-րումները, որոնք նյութական մեծ արժեք ունեն, վերադարձվեն մեր գործա-րարներին:

Հարկ է նշել, որ Հայաստան տեղափոխված հիդրոուժային էներգետիկա-

կան սարքավորումները պատկանում են գործարար մարդկանց: Թերևս ճիշտ կլիներ ստեղծել անկախ պետական մասնագիտական հանձնաժողով, որ պետքի գտնվեն այդ սարքավորումների արդյունավետ օգտագործման հնարավոր տարբերակները:

Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի Արցախում

2020թ. 44-օրյա պատերազմից առաջ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանը սնվում էր Շուշի-Կարմիր Շուկա-Մարտունի էլեկտրահաղորդման գծից: Պատերազմից հետո գծի զգալի մասը մնացել է հակառակորդի վերահսկողության տակ:

Կառուցվել է Ստեփանակերտ-Մարտունի բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը, որի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 41 կիլոմետր, հզորությունը՝ մինչև 10 ՄՎտ: Ներկայումս Մարտունու ենթաշրջանը օգտագործում է մինչև երեք ՄՎտ հզորություն: Նախորդ ամիսների ընթացքում, որպես ժամանակավոր լուծում, 10ԿՎ օդային գծով որոշ սահմանափակումներով էլեկտրական էներգիա է տրվել Մարտունու շրջանին:

Անհրաժեշտ է նշել, որ նոր 35կՎ օդային գիծը կառուցվել է Ստեփանակերտից մինչև Մարտունի և շարունակվելու է մինչև Կարմիր շուկա ենթակայան: Բարձրավոլտ նոր գծի կառուցման համար տեղադրվել է 443 հեկտայուն: Աշխատանքները կատարվել են «Արցախէներգո» ՓԲԸ մասնագետների կողմից և միջոցներով: Ընդհանուր առմամբ կատարվել է մոտ 1,5 միլիարդ դրամի աշխատանքներ:

Մարտունին արդեն ունի գիշերային լուսավորություն: Առաջիկա օրերին Մարտունու մյուս բնակավայրերը նույնպես կունենան գիշերային լուսավորություն: Նորոգվել է նաև Մարտունու 35/10 ԿՎ լարման ենթակայանը:

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունը 2017թ.-ին արտադրել է 181 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: 2021 թ. նախնական էներգետիկ հաշվեկշռով նախատեսված էր, որ ՀՀ-ն Արցախի Հանրապետությունից կներկրի 330 մլն կՎտժ էլեկտրաէներգիա:

2.3. Զեռուցման հիբրիդային համակարգերի զարգացման հեռանկարները Արցախի Հանրապետությունում

Արցախում վառելիքաէներգետիկ ռեսուրսների խնայողության, շրջակա միջավայրի պաշտպանության տեսակետից կարևոր նշանակություն ունի ջեռուցման հիբրիդային համակարգերի նախագծումը և կառուցումը: Այն հնարավորություն կտա խնայել վառելիքաէներգետիկ ռեսուրսներ, լուծել ռազմավարական և բնապահպանական բազմաթիվ խնդիրներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջարկվող տարբերակների դեպքում կարող ենք արդյունավետ օգտագործել այլընտրանքային էներգիայի աղբյուրները այն համակցելով օրգանական վառելիքով աշխատող տեղակայանքների հետ:

Առաջարկվում է տեղական նշանակության ջեռուցման համակարգերում օգտագործել արևային էներգիան համատեղելով կենսազանգվածով կամ արևային էներգիան համակցել թափոններից ստացված էներգիայով: Հնարավոր է նաև օգտագործել ջերմային կուտակիչ և ջերմային պոմպ: Այս դեպքում կարող ենք տնտեսել վառելիքի առնվազն 20 տոկոսը:

Հիբրիդային ջեռուցման համակարգերը սովորաբար անվանում են այն համակարգերը, որոնցում ջերմությունը գոյանում է համակցված՝ ելնելով մի քանի էներգիայի աղբյուրներից:

Արտերկրում և, առաջին հերթին, Եվրամիության երկրներում, շենքերի օդորակման հիբրիդային համակարգերը, որոնք համատեղում են ջեռուցումը, տաք ջրամատակարարումը և օդափոխումը, լայն տարածում են գտել: Դրանց իրականացմանը նպաստում են ընդունված մի շարք ծրագրեր և կանոնակարգեր ջերմամատակարարման էներգաարդյունավետությունը բարելավելու և դրա համար վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը բարելավելու համար:

Վերականգնվող էներգիայի աղբյուրները գործնականում անսպառ բնական պրոցեսների էներգետիկ ռեսուրսներ են, որոնք անընդհատ գոյություն ունեն մեր մոլորակի վրա: Բացի այդ, վերականգնվող էներգիայի աղբյուրները ներառում են բուսական և կենդանական ծագման արտադրանքներ, որոնք առաջացել են կենսոցնեոզների կենսագործունեության արդյունքում և ունեն հնարավորություն օգտագործելու իրենց ներուժը համեմատաբար կարճ ժամանակահատվածում մարդկանց մեկ սերնդի կյանքի ընթացքում վերականգնելու ունակություն:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ներմուծեց «նոր և վերականգնվող էներգիայի աղբյուրներ» հասկացությունը: Վերականգնվող էներգիայի աղբյուրների հիմնական տեսակներն են՝ արևը, քամին, ծովային ալիքի էներգիան,

ովկիանոսի մակընթացային էներգիան, կենսազանգվածը: Այս հիմնական տեսակներից բացի, այստեղ կարելի է ներառել երկրի ջերմային էներգիան, երկրաջերմային ստորերկրյա ջրերի էներգիան:

Աշխարհում վերականգնվող էներգիայի աղբյուրների ներուժը բավականին մեծ է: Այն մի քանի անգամ գերազանցում է ներկայումս օգտագործվող վերականգնվող էներգիայի ներուժը: Բացի այդ, ԵՄ-ում վերականգնվող էներգիայի օգտագործման կարգավորումն ու զարգացումը իրականացվում է ազգային մակարդակով: Այս մոտեցման արդյունքում ԵՄ-ն այս ոլորտում ունի մշակված իրավական և կարգավորիչ դաշտ:

ԵՄ-ում վերականգնվող էներգիայի կարգավորումը բարդ է և իրականացվում է հետևյալ փաստաթղթերի միջոցով. Կանոնակարգեր (ամբողջությամբ պարտադիր, կիրառվում են բոլոր անդամ երկրներում), դիրեկտիվներ (անդամ պետությունների համար պարտադիր են ձեռք բերվելիք արդյունքների մասով, ենթակա են արտացոլման ազգային իրավական շրջանակներում), որոշումներ (պարտադիր են միայն այն սուբյեկտների համար, որոնց հասցեագրված են), առաջարկություններ և եզրակացություններ (պարտադիր չէ և հռչակագրային է) ստանդարտները (կիրառվում են կամավոր հիմունքներով, բայց ԵՄ-ն խրախուսում է դրանց կիրառումը):

ԵՄ անդամ երկրների ազգային մակարդակում մշակված նորմատիվ փաստաթղթերը կարգավորում են վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործմանը խթանող տնտեսական մեխանիզմները. Դրանք են՝ «կանաչ» սակագները, «կանաչ» սերտիֆիկատները, կենսավառելիքի արտադրության պարտավորությունները, հարկային խթանները, դրամաշնորհները: Նաև ձևավորվում է «վերականգնվող» էներգիայի արտադրության և վերականգնվող էներգիայի աղբյուրներից ջերմություն առաջացնելու պարտավորությունների վճարման համակարգ:

Վերականգնվող էներգիայի աղբյուրների մասնաբաժինը ԵՄ էներգետիկ հաշվեկշռում արագորեն աճում է: Աշխարհի էներգետիկ հաշվեկշռում վերականգնվող էներգիայի օգտագործման այդպիսի տեսակ նախատեսվում է մինչև 2030 թվականը: Մասնավորապես, ցրտի և ջերմության մատակարարման ոլորտում վերականգնվող էներգիայի աղբյուրների մասնաբաժինը տարեկան աճում է բոլոր երկրներում՝ առանց բացառության:

Ռուսաստանում վերականգնվող էներգիայի կարգավորումն իրականացվում է պետական մարմինների կողմից ինչպես դաշնային, այնպես էլ ֆեդերացիայի սուբյեկտների մակարդակով: Վերականգնվող էներգիայի օգտագործման բնագավառում պետական կարգավորման համակարգը ներառում է իրավական կարգավորում, որը ներառում է վերականգնվող էներգիայի օգտագործման հետ կապված օրենսդրական և այլ նորմատիվ իրավական

ակտերի և ծրագրերի մշակում. վերականգնվող էներգիայի օգտագործման զարգացման կառավարումը Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից հատուկ լիազորված մարմնի միջոցով. վերականգնվող էներգիայի օգտագործման լիցենզավորման, վերահսկողության և վերահսկողության իրականացում. վերականգնվող էներգիայի աղբյուրների ոլորտում ստանդարտացման, սերտիֆիկացման, գրանցման համակարգի իրականացում. վերականգնվող էներգիայի աղբյուրների ոլորտում միջազգային գործունեության իրականացում:

Ռուսաստանում վերականգնվող էներգիայի ներուժը կազմում է ավելի քան 270 մլն տոննա վառելիքի համարժեք, որը կազմում է էներգետիկ ռեսուրսների ընդհանուր առաջնային մատակարարման մոտ 30%-ը:

Հիբրիդային ջեռուցման համակարգերի առավելությունները կայանում են հետևյալում:

Հիբրիդային ջեռուցման համակարգերը բարդ լուծումներ են՝ ջեռուցման, տաք ջրի և օդափոխության և հովացման համակարգերի ջերմության պահանջը բավարարելու համար, որոնք օգտագործում են մի քանի էներգիայի կրիչներ մեկ կամ մի քանի ջերմային գեներատորներում: Այս մոտեցման առավելությունն է «էներգակիրների ի սկզբանե տարբեր գնի պատճառով ջեռուցման ծախսերը նվազեցնելու հնարավորությունը»:

Վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը հետագայում մեծացնում է հիբրիդային համակարգերի խնայողական արդյունավետությունը, քանի որ այդ աղբյուրներից ստացված էներգիայի արժեքը որոշվում է միայն սարքավորումների աշխատանքը ապահովելու համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքով: Արևային կոլեկտորի դեպքում սա պարզապես շրջանառության պոմպի աշխատանքն է. երկրաջերմային ջերմային պոմպի (հողից ջուր, ջուր-ջուր) դեպքում էլեկտրաէներգիան սպառում է, բացի շրջանառության պոմպից, նաև կոմպրեսորի շահագործման համար և օդային ջերմային պոմպի դեպքում (օդ-ջուր, օդ-օդ)՝ կոմպրեսորի, շրջանառության պոմպի և օդափոխիչի շահագործման համար: Այս ամենը շատ փոքր ծախսեր են:


Սովորական դեպքում նման համակարգերի հիմնական բեռները փակվում են ջեռուցման շրջանի մեծ մասի համար՝ ջերմային պոմպի (նկար 3), արևային կոլեկտորի կամ դրանց համադրման միջոցով, ինչը, համապատասխանաբար, էժան է սպառողի համար, իսկ պիկային ռեժիմներում, երբ վերականգնվող աղբյուրներից ստացված ջերմությունը բավարար չէ ջեռուցման համար, կաթսան ավտոմատ կերպով միացված է:

Հիբրիդային համակարգերի և տեղակայանքների օգտագործման մեկ այլ առավելություն համակարգի կայունության զգալի աճն է: Գեներատորներից

մեկի խափանման կամ էլեկտրաէներգիայի կրիչներից մեկի մատակարարման ընդհատումների դեպքում մյուսը մնում է 'պահելով պահուստային ֆունկցիան:

Էլ չենք ասում այն փաստը, որ այդպիսի համակարգերի ստեղծումը շատ դեպքերում ենթադրում է դրանցում ջերմային կուտակիչների ներառում: Նրանք ոչ միայն թույլ են տալիս այն ռացիոնալ կերպով ծախսել օգտագործողի կարիքներին համապատասխան, այլև որոշակի ռեզերվ ապահովել կրիտիկական իրավիճակի դեպքում:

Հիբրիդային համակարգերի կարևոր և ընդհանուր իմաստով հիմնական առավելությունը դրանց էկոլոգիապես մաքուր լինելն է: Վերականգնվող էներգիայի աղբյուրների և բնական ածխաջրածինների վրա հիմնված վառելիքի ռացիոնալ այրման օգտագործումը թույլ է տալիս մի քանի անգամ նվազեցնել մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումները CO և NOx, ներառյալ վառելիքի այրման վերջնական արտադրանքը CO₂, ի տարբերություն ավանդական ջեռուցման համակարգերի: Բացի այդ, հիբրիդային համակարգերում օգտագործվող սարքավորումների գործառնական ռեժիմները (մասնավորապես, ջերմային պոմպերը) իդեալական են ցածր ջերմաստիճանի ջեռուցման համակարգեր ստեղծելու համար, որոնք ավելի մեծ ժողովրդականություն են վայելում:



Նկար 2. Ջեռուցման համակարգ ջերմային պոմպով և արևային կոլեկտորներով

Հիբրիդային ջեռուցման համակարգերի կոնֆիգուրացիան կախված է բազմաթիվ գործոններից՝ սկսած տարածաշրջանի կլիմայական պայմանների

բնութագրերից, որտեղ նախատեսվում է օգտագործել հիբրիդային ջեռուցման համակարգը, և առկա մատչելի ավանդական էներգետիկ ռեսուրսները, մինչև օգտագործողի պահանջները հավասարակշռության վերաբերյալ:


Համաշխարհային մակարդակով երկրաջերմային էլեկտրակայանների հզորությունը կարող է կազմել մոտ 20 մլն կՎտ, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը 120 միլրդ կՎտժ: Ներկայումս աշխարհում էլեկտրաէներգիայի մասնաբաժինը կազմում է մոտ 0.5 տոկոս: Լայն թափով երկրաջերմային էներգետիկան զարգանում է Մեքսիկայում, Կենտրոնական Ամերիկայի երկրներում, Իսլանդիայում:

Երկրաջերմային էներգիան ամբողջությամբ բավարարում է Իսլանդիայի մայրաքաղաք Ռեյկյավիկին ջերմությամբ: Կամչատկայում դեռևս 1966 թվականին կառուցվել է Ռուսաստանում առաջին երկրաջերմային էլեկտրակայանը:

Հայաստանում երկրաջերմային էլեկտրակայան կառուցելու համար սկսվել են հետազոտական աշխատանքները: Երկրաբանական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ կարելի է ենթադրել 2500-3000 մետր խորության վրա մինչև 250 աստիճան տաք ջրերի գոյություն 20-25 մթնոլորտ ճնշման տակ ՀՀ Սյունիքի մարզում «Ջերմաղբյուր» կոչվող տարածքում: Եթե այս տվյալները հաստատվեն, ապա հնարավոր կլինի այդ վայրում կառուցել երկրաջերմային էլեկտրակայան 25 ՄՎտ հզորությամբ: Տարեկան առնվազն 4000 ժամ աշխատելու դեպքում կարող ենք արտադրել մոտ 100 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսքան էներգիա ջերմային էլեկտրակայաններում արտադրելու դեպքում կոնտեսվի ավելի քան 40 հազար տոննա օրգանական վառելիք: Շրջակա միջավայր չի արտանետվի մոտ 190 տոննա ազոտի օքսիդներ, այլ թունավոր նյութեր:

Ներդրումներ կատարել այս բնագավառում անշուշտ շահեկան է և բխում է մեր երկրի ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմավարական շահերից: Կարելի է բնագավառը զարգացնել մասնավոր ներդրումների հաշվին: Բաժնետոմսերի շուկան մեր երկրում զարգացած չէ: Կարելի է մտածել այս ուղղությամբ: Օգտագործել նաև բնակչության խնայողությունները, ստեղծել բաժնետիրական ընկերություն պետության մասնաբաժնով և խիստ հսկողությամբ: Կարելի է մտածել լիզինգի օգտագործման հնարավորությունների մասին:

Հայաստանն ունի արևային էներգիայի օգտագործման մեծ հնարավորություն: 1մ² հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կՎտժ/մ²: Հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կՎտժ/մ² ինտենսիվությամբ արևային էներգիայի պաշարներով:



Նկար 3. Հիբրիդային ջեռուցման համակարգի դասական սխեմա

Ներկայումս Հայաստանում արտադրվում են արևային ջերմային կոլեկտորներ (ջրատաքացուցիչներ) 1.38-4.12 մ² չափերով: Ջրատաքացուցիչ 2.75 մ² մակերեսով կարող է օրական արտադրել 120-160 լիտր տաք ջուր: Հայաստանի Ամերիկյան համալսարանում տեղադրված են հովացման և օդափոխման արևային համակարգեր, որոնց արևային մասի հզորությունը կազմում է 50 կՎտ, իսկ ֆոտոէլեկտրական մասի հզորությունը, որն ապահովում է ամբողջ համակարգի անխափան աշխատանքը, 5 կՎտ:

Նման համակարգերի ամենատարածված («դասական») կազմաձևումը ներառում է.

- բարձր արդյունավետ կաթսայատան սարքավորումներ, որոնք օգտագործում են ավանդական էներգիայի աղբյուրներ (գազ, դիզելային վառելիք, էլեկտրաէներգիա, ածուխ) կամ աշխատում են վերականգնվող կոշտ վառելիքներով (փայտ), (գործընթացի ավտոմատացման առումով ամենահաջող տարբերակը փայտի վառելիք օգտագործելն է),
- ջերմային պոմպ (օդային կամ երկրաջերմային),
- արևային կոլեկտոր,
- պահեստային ջրատաքացուցիչ անուղղակի ջեռուցման համար,
- ջեռուցման սարքեր (ռադիատորներ, կոնվեկտորներ), ջերմային վահանակներ, հատակի տաքացման համակարգեր, բաշխիչ սարքեր, պոմպային սարքավորումներ, խողովակաշարեր,
- ընդհանուր կառավարման համակարգ:

Սկզբունքորեն, ջերմային մատակարարման հիբրիդային համակարգերը կարող են հավաքվել տարբեր նպատակների համար նախատեսված առանձին սարքավորումների հիման վրա կամ նույնիսկ մատակարարվել որպես մեկ միավոր, որը ներառում է հիմնական սարքավորումները, բացառությամբ հեռավոր մոդուլների, ջեռուցման սարքերի և խողովակաշարերի:

Վառելիքաէներգետիկ ռեսուրսների խնայողության տեսակետից կարևոր նշանակություն ունի Արցախի Հանրապետությունում այլընտրանքային էներգիայի օգտագործումը:

Առաջարկվող էլեկտրակայանը տեղակայված է լինելու երկու հեկտար տարածքի վրա: ԱՖԷԿ-ը էլեկտրաէներգետիկական համակարգին միանալու է սեփական տրանսֆորմատորային 0.4/10 կՎ ենթակայանի միջոցով: Ենթակայանը բաղկացած կլինի 2 հատ 630 կՎԱ 0.4/10 կՎ տրանսֆորմատորներից, որոնցից մեկը՝ պահեստային: Ենթակայանից 10 կՎ էլեկտրահաղորդման գծով էլեկտրաէներգիան տրվում է բաշխիչ ցանց:

2018 թվականին Հայաստանում արտադրվել է 7 մլրդ 776 մլն 900 հազար կՎտժ էլեկտրաէներգիա, ինչը 2017 թվականի համեմատ աճել է 0,2 տոկոսով: 2018 թվականին Հայաստանում արևային էլեկտրակայաններն արտադրել են 5 մլն 100 հազար կՎտժ էլեկտրաէներգիա: Այսքան էներգիա ՋԷԿ-երում արտադրելու դեպքում կօգտագործվեր ավելի քան 15×00 տոննա վառելիք:

2018 թվականին աշխարհում կառուցվել է 104.1 ԳՎտ ընդհանուր հզորությամբ արևային էլեկտրակայաններ, այսինքն՝ 5% ավելի, քան 2017 թվականին (99,1 ԳՎտ): 2018 թվականին շուկան արձանագրել է աճ: Չինաստանում, որը համարվում է ոլորտի գերագույն ներկայացուցիչը, հետադարձ զարգացում չի արձանագրվել, թեպետ շոշափելի քանակով ավելի քիչ է արտադրվել 2017 թվականի համեմատ (44,1 ԳՎտ), ինչն էլ ընդհանուր առմամբ չէր կարող բացասաբար անդրադառնալ շուկայի վրա:

Անհրաժեշտ է իրականացնել գեոդեզիական և երկրաբանական ուսումնասիրություններ: Նրանց արդյունքները հաշվի են առնվելու կրող կառուցվածքների ընտրության և բետոնային հիմքերի շինարարության իրականացման ժամանակ: Էլեկտրակայանը տարեկան կարող է արտադրել ավելի քան 1.5 մլն կՎտժ էլեկտրական էներգիա: Այսքան էներգիա ջերմային էլեկտրակայաններում արտադրելու դեպքում կծախսվեր ավելի քան 400 տոննա օրգանական վառելիք:

ԱՖԵԿ-ի անխափան աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ է նախագծել նաև հողանցման ցանց: Կարելի է նախատեսել ԱՖԵԿ-ի պաշտպանիչ հողանցում առանձին ՀՑ-1 և ՀՑ-2 հողանցման ցանցերով: ՀՑ-1 հողանցման ցանցը 2 կետով թակցմամբ միանում է ենթակայանի հողանցման կոնտուրին: Որպես հեղանցիչ կարող է ընտրվել 40×4մմ շերտապողպատ,

որը միանում է հողանցման կոնտուրին եռակցմամբ: Հողանցման կոնտուրի դիմադրությունը տարվա ցանկացած պահին չպետք է գերազանցի 4 Օհմը: Կայանը կունենա տրանսֆորմատորային ենթակայան, որի միջացով կմիանա էլեկտրահաղորդման գծին:

Վառելիքի այրման հետևանքով շրջակա միջավայր է արտանետվում հսկայական քանակությամբ վտանգավոր նյութեր, ազոտի և ծծմբի օքսիդներ և այլն: Հայաստանն աղքատ է վառելիքաէներգետիկ պաշարներով, այն բերվում է դրսից հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ:

Արևային կայանի առավելությունները ավելի ակնառու ցույց տալու համար այն համեմատենք Հայաստանում շահագործվող Երևանի ՋԷԿ-ի հետ: Արևի կայանի շահագործման ժամանակ Երևանի ՋԷԿ-ում չի այրվի մոտ 400 տոննա վառելիք: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Երևանի ՋԷԿ-ում այդ քանակի գազային վառելիքի այրման ժամանակ շրջակա միջավայր կարտանետվեր 2 կգ ծծմբի և 1880 կգ ազոտի օքսիդներ:

Մթնոլորտի գազային բաղադրության փոփոխությունը հաշվի առնելով թթվածնի սպառման մեծացումը, այդ թվում էներգիայի ստացման համար կրում է համընդհանուր բնույթ և ունի տարածքային նշանակություն: Թթվածնի կորուստների վերականգնման համար անհրաժեշտ է կամ կտրուկ բարձրացնել տարածքի կենսաբանական արդյունավետությունը կամ էլ թթվածին ստանալ ջրի էլեկտրոլիզի միջոցով: Առաջին տարբերակի դեպքում պահանջվում է մեծացնել անտառի մակերեսը, միաժամանակ փոքրացնելով գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողերի չափերը: Երկրորդը՝ տեխնիկապես և տնտեսապես հնարավոր է իրականացնել ջրածնային էներգետիկայի բարձր մակարդակի զարգացման դեպքում:

Անտառի կարևոր գործոններից է համարվում թթվածնի արտադրությունը և ածխաթթու գազի կլանումը: Մթնոլորտ արտանետվող թթվածնի քանակը կախված է մի շարք գործոններից՝ անտառի տեսակից, տարիքից, տնկման խտությունից, տարածաշրջանից:

Հելիոկայանը կարող է արտադրել 1.5 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիա: Եթե գնահատելու լինենք նաև այրման համար անհրաժեշտ թթվածնի փոխհատուցման ծախսերը, որը կարող է կազմել մոտ 150 հազար դրամ յուրաքանչյուր տոննա վառելիքի այրման համար, ապա կարող ենք ստանալ. $400 \times 150 \times 10^3 = 60 \times 10^6$ դրամ:

Ստորև ներկայացվում է տարբեր վառելիքով աշխատող ջերմային էլեկտրակայանների կողմից մեկ տարում շրջակա միջավայր արտանետվող վտանգավոր նյութերի քանակությունները, տոննա, երբ ՋԷԿ-ն արտադրում է արևային կայանին համարժեք էլեկտրական էներգիա

Վտանգավոր կյուրք / Վտնելիքի տեսակը	Քարածուխ	Գորշ ածուխ	Մազուք	Բնական գազ
SO ₂	6.0	7.6	7.2	0.0018
Կոշտ մասնիկներ	1.4	2.6	0.68	-
NO _x	20.8	3.4	2.4	1.8
Ֆտորային միացություններ	0.06	1.2	0.0036	-

Արևային էներգետիկայի կայացման համար պետք է նաև համապատասխան պայմաններ ստեղծել տնտեսական գործունեություն ծավալելու համար: Դա ենթադրում է, որ վերականգնվող էներգետիկայի զարգացումը պետք է հիմնվի էներգիայի արտադրության խթանման, ներդրումների խթանման և օրենսդրական դաշտի գրավչության ապահովման վրա: Արտադրության խթանման միջոցառումներից կարող են հանդիսանալ հաստատուն սակագների կիրառումը մեկ կՎտժ-ի համար, երաշխիքներ պետության կողմից էլեկտրաէներգիայի որոշակի քանակի գնման համար, որոշակի արտոնությունների հաստատումը, գնաճից ապահովագրումը, ինչպես նաև զեղչերի և տարբերակված ճկուն սակագների կիրառումը սպառողների համար:

Ներդրումային խթաններ կարող են հանդիսանալ հարկային արտոնությունները, ներդրումների հետզնման փուլում հարկերից ազատումը, ավելացված արժեքի հարկի ազատումը կամ հետաձգումը, դրամաշնորհների տրամադրումը, ցածր տոկոսադրույթով վարկերի տրամադրումը, հիմնադրամների և քանկերի կողմից արտադրողին տրված վարկերի երաշխավորումը պետության կողմից, զենեքատրների, պահեստամասերի, սարքավորումների ազատումը մաքսատուրքերից:

1. Արցախի Հանրապետությունում կառուցվելիք 1000 կՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանը հնարավորություն կտա տարեկան արտադրել ավելի քան 1,5 մլն կՎտժ էլեկտրական էներգիա, ինչպե՛լ վառելիքաէներգետիկ ռեսուրսներ և որոշ չափով լուծել բնապահպանական խնդիրներ:
2. Կայանի շահագործմամբ CO₂-ի կրճատումը կկազմի տարեկան մոտ 724 տոննա: Կապիտալ ներդրումները կկազմեն ավելի քան 300 միլիոն դրամ:
3. Արցախի արևային կայանի շահագործման ժամանակ Երևանի ՋԷԿ-ում չի այրվի մոտ 400 տոննա վառելիք: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Երևանի ՋԷԿ-ում այդ քանակի գազային վառելիքի այրման ժամանակ շրջակա միջավայր կարտանետվեր 2 կգ ծծմբի և 1880 կգ ազոտի օքսիդներ:

2.4. Արցախի գազամատակարարման սկզբնավորումը

1960թ. ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում, առաջին անգամ, ստեղծվեց հեղուկ գազի մատակարարման տեղամաս: 1970թ. տեղամասը վերափոխվեց հեղուկ գազի մատակարարման շրջանային կազմակերպության, իսկ 1973թ.՝ Ստեփանակերտի գազի շրջանային արտադրական ընկերության: Վերջինս ուներ 10 արտադրաշահագործման տեղամաս: Արդեն 1979թ.-ին ԼՂԻՄ-ն ապահովված էր հեղուկ գազով:

1976թ. սկսվեց բնական գազով գազաֆիկացումը ք. Ստեփանակերտում և շրջկենտրոններում:

1992թ. պատերազմական գործողությունների հետևանքով գազամատակարարումը Լեռնային Ղարաբաղում ամբողջությամբ դադարեցվեց: Գազատարների, գազաբաշխիչ կայանների մոտ 80%-ը ենթարկվեց վթարի:

Գազամատակարարումը Արցախում վերսկսվեց 1997թ.: Պատերազմից հետո գրեթե ամեն ինչ պետք էր սկսել զրոյից:

Պաշտպանության պետական կոմիտեի թիվ 227 առ 15.06.1993թ. որոշման համաձայն Ստեփանակերտի գազի շրջանային արտադրական ընկերությունը վերանվանվեց «Արցախգազ» արտադրական ընկերության:

ԼՂՀ կառավարության թիվ 29 առ 02.03.1999թ. որոշմամբ ստեղծվեց «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերությունը, որի հիմնադիրն է ԼՂՀ կառավարությունը:

Ընկերությունն ունեցել է ութ արտադրաշահագործման տեղամաս՝ Ստեփանակերտի, Շուշիի, Մարտակերտի, Մարտունու, Հաղրութի, Տոզի և Խաչենի: 2016թ.-ի փոփոխություններից հետո, պատերազմից առաջ շրջաններում «Արցախգազ» ՓԲԸ-ն բաժանորդներին է ներկայանում 5 ԱՇՏ-ներով:

2017 թվականից «Արցախգազ» ՓԲ ընկերության սեփականատերն է հանդիսանում «Ջի Էմ Հոլդինգ» ՍՊԸ-ն: «Արցախգազ» ՓԲԸ հանդիսանում է «Արցախգազ» ՊՓԲԸ իրավահաջորդը:

«Արցախգազ» ՓԲ ընկերությունը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տրված լիցենզիաների հիման վրա զբաղվում է գործունեության հետևյալ տեսակներով.

- բնական գազի ներկրում, փոխադրում, բաշխում
- բնական գազի փոխադրման ցանցի կառուցում
- բնական գազի բաշխման ցանցի կառուցում
- գազահամակարգի օպերատորի ցանցի կառուցում
- գազահամակարգի ցանցի ծառայություն
- գազահամակարգի ցանցի շինարարություն
- ներտնային ցանցի սպասարկման ծառայություն:

Միասնական ջանքերով ընկերությունը ձեռնամուխ է եղել ԼՂՀ 67.1 տոկոսով գազիֆիկացմանը, որից քաղաքները՝ 93, իսկ գյուղերը՝ 43.1 տոկոսով:

«Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, տրամադրված հատուկ լիցենզիայի հիման վրա զբաղվում է բնական գազի ներկրմամբ, փոխադրմամբ և բաշխմամբ:

Արցախի Հանրապետությունում բնական գազից օգտվողների թիվը ընդհանուր առմամբ կազմում է 30000 բաժանորդ, որից 1000-ը՝ տարբեր հիմնարկ-ձեռնարկություններ:

Արցախի Հանրապետության «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի» 18.05. 2018 թ., թիվ 23 N որոշման համաձայն, «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերությունը մատուցում է ներտնային ցանցի սպասարկման ծառայություն:

«Բնական գազի մատակարարման մատակարար-բաժանորդ բնակիչ» պայմանագրում ներկայացված «Համաձայնագիր», որտեղ հստակ ներկայացված է «Արցախգազ» ՓԲԸ և բաժանորդների փոխադարձ պարտավորությունները: «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերությունը իրականացնում է նաև ավտոտրանսպորտային միջոցների համար նախատեսված սեղմված բնական գազի վաճառք Արցախի Հանրապետության տարածքում տեղակայված ԱԳԼՃԿ-ների միջոցով:

2.5. Արցախի գազամատակարարման իրավական պայմանները

Գազամատակարարման համակարգի գործունեությունը կարգավորող հիմնական իրավական ակտը՝ «Էներգետիկայի մասին» ԼՂՀ Օրենքն է (ընդունված 29.12.99թ., լրացումները և փոփոխությունները կատարվել են 2002թ.), որը արտացոլում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական մարմինների էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և բնական գազ սպառողների փոխհարաբերությունները, և որի նպատակն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների և դրանց իրագործման մեխանիզմների սահմանումը:

Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

- Էներգետիկայի բնագավառում մրցակցության և արդյունավետ գործունեության խթանումն ու մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը.
- Էներգետիկայի բնագավառի գործունեության կարգավորումը.

- տնտեսական գործունեության, պետական կառավարման և կարգավորման գործառույթների տարանջատումը.
- սպառողների և էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության ապահովումը և շահերի հավասարակշռումը.
- տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործումը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը.
- էներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսումը.
- էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեության թափանցիկության ապահովումը.
- էներգետիկայի բնագավառի անվտանգության ապահովումը.
- հանրապետության էներգետիկական անկախության խթանումը, այդ թվում՝ ներկրվող և տեղական էներգետիկ պաշարների տարատեսականացման և արտադրական հզորությունների առավելագույնս օգտագործման ապահովումը.
- շրջակա միջավայրի պահպանման ապահովումը.
- գիտատեխնիկական առաջընթացի և նոր էներգաարդյունավետ ու էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման, կադրերի պատրաստման ու վերապատրաստման խրախուսումը.

Ընկերության գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերից կարելի է նշել՝

- ԼՂ Օրենքը «էներգետիկային բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» (ընդունված 05.10.2007թ.)
- ԼՂ Օրենքը «Հրդեհային անվտանգության մասին» (ընդունված 03.06.2002թ.)
- ԼՂ Օրենքը «ԼՂ-ում չափումների միասնականության ապահովման մասին» (ընդունված 11.06.2001թ.)
- ԼՂ Օրենքը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» (ընդունված 20.01.2007թ.)
- ԼՂ Օրենքը «Շրջական միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» (ընդունված 14.09.2001թ.)
- ԼՂ Օրենքը «Գնումների մասին» (ընդունված 29.12.2010թ.)
- ԼՂ կառավարության «Գազի տնտեսությունում տարրերի տեխնիկական շահագործման կանոնները և աշխատանքի անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 528 որոշում (ընդունված 20.12.2005թ.)
- ԼՂ կառավարության «Անվտանգության կանոնները գազի՝ տնտեսու-

թյունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 565 որոշում (ընդունված 28.11.2005թ.)

- ԼՂՀ կառավարության «Միջին և Բարձր Ճնշման զագամատակարարման համակարգերի նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացությունը տալու կարգը հաստատելու մասին» թիվ 18 որոշում (ընդունված 30.01.2007թ.)
- ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 27.11.2007թ. թիվ 12Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին»
- Քաղաքացիական, քրեական, աշխատանքային և վարչական օրենսգրքեր:

ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Անհրաժեշտ է մշակել Արցախի Հանրապետության էներգետիկայի զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ գիտականորեն հիմնավորված ծրագրեր՝ հաշվի առնելով բոլոր մարտահրավերները: Այն անխզելիորեն պետք է կապված լինի ՀՀ-ում մշակված համանման ծրագրի հետ:
2. ԱՀ-ում անհրաժեշտ է կառուցել հիդրոէլեկտրայաններ մինչև 100 կՎտ հզորությամբ: Հիդրոէլեկտրակայաններին կից պետք է կառուցել հիդրոակումյացիոն կայան: Այն հնարավորություն կտա զիջերային ժամերին պոմպերի միջոցով ջուրը ստորին ավազանից մղել վերին ավազան: Առավոտյան և երեկոյան պիկային ժամերին այդ լրացուցիչ ջրի հաշվին արտադրել պիկային էլեկտրական էներգիա: Այս դեպքում բարձրանում է էներգահամակարգի հուսալիությունը և միաժամանակ հնարավոր է լուծել բազմաթիվ էներգետիկ հիմնահարցեր:
3. Ստեփանակերտ քաղաքում կառուցել զազատուրբինային ջեռուցման ՋԷԿ: Վառելիքի այրման հետևանքով ստանալ էլեկտրական և ջերմային էներգիա տաք ջրամատակարարման և ջեռուցման համար: Խաղաղ պայմաններում կայանը կաշխատի արդյունավետ ռեժիմով՝ արտադրելով էլեկտրական և ջերմային էներգիա: Մյուս դեպքերում կարող է հուսալի ձևով էներգիայով ապահովել ռազմական և քաղաքացիական բնակչության անհրաժեշտ կարիքները՝ կախված չլինելով էներգահամակարգից:
4. Անհապաղ սկսել փոքր և միջին հզորությամբ ջրամբարների նախագծման և կառուցման աշխատանքները: Ջարգացնել ռոզման համակարգերը, դրանք օգտագործել նաև էներգետիկ նպատակներով: Ավելացնել անտառների մակերեսները:
5. Արցախի պետական համալսարանում հեռակա ուսուցմամբ ունենալ էներգետիկայի բաժին ինժեներական կադրեր պատրաստելու համար: Հասնել այն բանին, որ ԱՀ-ում արտադրված միավոր էներգիայի ինքնարժեքը լինի հնարավոր նվազագույնը: Այս դեպքում Արցախի տնտեսությունը կսկսի վերելք ապրել, քանի որ ցանկացած ապրանքի ինքնարժեքի մեջ էներգիայի բաղադրիչը կլինի փոքր:
6. Ջարգացնել ջերմային պոմպերը:
7. Ստեղծել Արցախի գիտությունների ակադեմիա կամ ՀՀ ԳԱԱ Արցախի մասնաճյուղ: Ունենալ ԱՀ էներգետիկայի զարգացման գիտական կենտրոն: Հայաստանի ռազմական համալսարաններում մտցնել «էներգետիկայի հիմունքներ» առարկան: Ապագա զորահրամանատարները որո-

շակի գիտելիքներ կունենան այս ոլորտի մասին, և այն անշուշտ կտա իր արդյունքները:

8. Էներգետիկայի զարգացումը պետք է ուղղված լինի հիմնականում էներգիայի այլընտրանքային աղբյուրներին և էներգախնայողությանը: Արցախում զարգացնել տնտեսության ոչ էներգատար ճյուղերը: Ձորամասերում ստեղծել անհատական էներգիայի սեփական աղբյուրներ:
9. Կազմել քաղաքների և բոլոր բնակավայրերի համար էներգետիկական անձնագիր և խիստ հսկողություն սահմանել նրա իրականացման համար: Կազմել Արցախի բոլոր բնակավայրերի համար առանձին էլեկտրաջեքմա և վառելիքամատակարարման համակարգերի այնպիսի սխեմաներ, որտեղ կունենանք նույն էներգետիկական արդյունքը, Բայց կծախսվի քիչ վառելիքաէներգետիկ ռեսուրսներ: Բոլոր զորամասերի համար, կախված տեղադրման վայրից և նշանակությունից, կազմել էներգետիկ ապահովման խիստ զաղտնի ծրագիր՝ էներգետիկական անձնագիր, և փուլափուլ իրականացնել:
10. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ստեփանակերտի կլիմայական պայմանների համար զազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-ի կողմից արտադրված էլեկտրական էներգիան համեմատած շոգատուրբինային կայանի հետ մոտ 20 տոկոսով ավելի էժան է:
11. Վառելիքի արժեքի մեծացմանը զուգընթաց այն ավելի ակնառու է դառնում: Հետևաբար նպատակահարմար է նախագծել և կառուցել զազատուրբինային ջեռուցման ՋԷԿ:
12. Առաջարկվող տարբերակի դեպքում վառելիքի տարբեր արժեքների դեպքում հետ գնման ժամանակամիջոցը կազմում է 6.3-ից մինչև 7 տարի, իսկ մյուս տարբերակի դեպքում՝ ավելի մեծ է: Տարբերությունը զգալի է:
13. Առաջարկվում է տեղական նշանակության ջերմամատակարարման համակարգերում օգտագործել արևային էներգիան համատեղելով կենսազանգվածով կամ արևային էներգիան համակցել թափոններից ստացված էներգիայով: Այսպիսի եփբրիդ համակարգերի արդյունավետությունը կավելանա առնվազն 20 տոկոսով: Համակարգերում կարող է օգտագործվել նաև ջերմային պոմպեր, ինվերտորներ, կաթսաներ:
14. Կարևոր նշանակություն ունի նաև Արցախի Հանրապետության համար էներգետիկ դիվանագիտության տարրերի մշակումը և զարգացումը:

ЗАКЛЮЧЕНИЕ

1. Необходимо разработать краткосрочную, долгосрочную, научно обоснованную программу развития энергетики Республики Арцах с учетом всех вызовов. Она должна быть неразрывно связана с аналогичной программой, разработанной в Армении.
2. В Арцахе необходимо построить гидроэлектростанции мощностью до 100 кВт. Рядом с гидроэлектростанциями должна быть построена гидроаккумулирующая станция. Это позволит перекачивать воду из нижнего бассейна в верхний в ночное время. Выработывайте пиковую электроэнергию из этой дополнительной воды утром и вечером в часы пик. В этом случае повышается надежность энергосистемы, и одновременно можно решить многие энергетические проблемы.
3. Построить ГТУ ТЭС в Степанакерте. После сжигания топлива получить электроэнергию и тепловую энергию на горячее водоснабжение и отопление. В мирное время станция будет эффективно работать, вырабатывая электроэнергию и тепло. В других случаях он может обеспечить надежную энергию для военных и гражданского населения, независимо от энергосистемы.
4. Незамедлительно приступить к проектированию и строительству водохранилищ малой и средней емкости. Разрабатывать ирригационные системы и использовать их в энергетических целях.
5. Иметь в Арцахском государственном университете энергетический факультет для дистанционного обучения инженерных кадров. Добиться того, чтобы удельная стоимость энергии была как можно ниже. В этом случае экономика Арцаха начнет расти, так как энергетическая составляющая стоимости любого продукта будет небольшой.
6. Разработать тепловые насосы.
7. Создать Арцахскую академию наук или Арцахское отделение НАН РА. Иметь научный центр развития энергетики Арцаха. Ввести предмет «Основы энергетики» в военных вузах Армении. Будущие военачальники будут разбираться в этой сфере, это обязательно принесет плоды.
8. Развитие энергетики должно быть направлено в основном на альтернативные источники энергии и энергосбережение. Развитие неэнергетических секторов экономики в Арцахе. Создавайте собственные источники индивидуальной энергии в воинских частях.
9. Составить энергетические паспорта всех населенных пунктов городов, установить строгий контроль за их выполнением. Установить отдельные

схемы отдельных систем электро-теплоснабжения для всех населенных пунктов Арцаха, где у нас будет одинаковая выработка электроэнергии, но будет затрачено меньше топливно-энергетических ресурсов.

10. Исследования показывают, что для климатических условий Степанакерта электроэнергия, производимая газотурбинной теплоцентралью, примерно на 20% дешевле по сравнению с паротурбинной станцией.
11. По мере роста стоимости топлива это становится все более очевидным, поэтому целесообразно спроектировать и построить ТЭЦ газотурбинного типа.
12. В случае предложенного варианта при других значениях топлива срок окупаемости составляет от 6,3 до 7 лет, а в случае другого варианта – больше. Разница существенная.
13. Рекомендуется использовать солнечную энергию в местных системах отопления, комбинируя биомассу с биомассой или комбинируя солнечную энергию с энергией от отходов. Эффективность таких гибридных систем увеличится минимум на 20%. В системах также могут использоваться тепловые насосы, инверторы, бойлеры.
14. Для Республики Арцах также важно развитие элементов энергетической дипломатии.

CONCLUSION

1. It is necessary to develop a short-term and long-term scientifically substantiated programs for the development of energy of the Artsakh Republic, taking into account all the challenges. It must be inextricably linked to a similar programs developed in Armenia.
2. It is necessary to build hydroelectric power plants with a capacity of up to 100 kW in Artsakh Republic. A hydro-accumulation station should be built next to the hydroelectric power plants. It will allow water to be pumped from the lower pool to the upper pool at night. Generate peak electricity at the expense of that extra water during the morning and evening peak hours. In this case, the reliability of the energy system increases, and it is possible to solve many energy problems at the same time.
3. To build a gas turbine heating thermal power plant in Stepanakert. After combustion of fuel to receive electricity and thermal energy for hot water supply and heating. In peacetime, the plant will operate efficiently generating electricity and heat. In other cases, it can provide reliable energy for the military and civilian population, regardless of the energy system.

4. Immediately start the design and construction of small to medium capacity reservoirs. Develop irrigation systems and use them for energy purposes.
5. To have an energy department at Artsakh State University for distance learning to train engineering personnel. Achieve that the unit cost of energy produced in the PC is as low as possible. In this case, Artsakh's economy will start to grow, as the energy component of the cost of any product will be small.
6. Develop heat pumps.
7. To establish the Artsakh Academy of Sciences or the Artsakh branch of the RA NAS. To have a scientific center for energy development of Artsakh Republic. Introduce the subject "Energy Basics" in the military universities of Armenia. Future military commanders will have some knowledge about this field, it will certainly yield results.
8. Energy development should be aimed mainly at alternative energy sources and energy saving. Develop non-energy sectors of the economy in Artsakh. Create your own sources of individual energy in military units.
9. Compile energy passports for all settlements of cities, establish strict control over its implementation. Establish separate schemes of separate electric-heat-fuel supply systems for all settlements of Artsakh, where we will have the same energy output, but less fuel and energy resources will be spent. Develop a top-secret energy security plan for all military units, depending on location and significance, energy passport and implement it step-by-step.
10. Studies show that for the climatic conditions of Stepanakert, the electricity produced by the gas turbine heating plant is about 20% cheaper compared to the steam turbine station.
11. As the cost of fuel increases, it becomes more obvious. Therefore, it is expedient to design and build a gas turbine heating thermal power plant.
12. In the case of the proposed option, in case of different fuel values, the payback period is from 6.3 to 7 years, and in the case of the other option, it is longer. The difference is significant.
13. It is recommended to use solar energy in local heating systems by combining biomass with biomass or combining solar energy with energy from waste. The efficiency of such hybrid systems will increase by at least 20%. Heat pumps, inverters, boilers can also be used in the systems.
14. The development of elements of energy diplomacy is also important for the Artsakh Republic.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պապիկյան Ս.Ռ. Հիդրոէներգետիկայի զարգացման հեռանկարները Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում: «Հորիզոն» շաբաթաթերթ, 27 նոյեմբերի 2001թ.:
2. Պապիկյան Ս.Ռ. Լեոնային Ղարաբաղի հիդրոէներգետիկան: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 18 սեպտեմբերի 2003թ.:
3. Հայաստանի համառոտ հանրագիտարան, հ 4, 2003թ.:
4. «Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա», թիվ 10, 2002թ.:
5. «Ազատ Արցախ» թերթ, 2 օգոստոսի 2003թ.:
6. Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, սկզբից մինչև մեր օրերը, 1994թ.:
7. Պապիկյան Ս.Ռ., Լեոնային Ղարաբաղի հիդրոէներգետիկան: «Գիտություն և տեխնիկա», թիվ 4, 2003թ.:
8. Պապիկյան Ս.Ռ., ԼՂՀ հիդրոէներգետիկական պաշարների օգտագործման հնարավորությունները // «Գիտություն և տեխնիկա», թիվ 8, 2008թ., 16-19 էջ:
9. Պապիկյան Ս.Ռ., Լեոնային Ղարաբաղի էներգետիկան: «168 Ժամ»: 30 նոյեմբերի, 2005:
10. Պապիկյան Ս.Ռ., Հիդրոէլեկտրակայաններ՝ ԼՂՀ-ում գետերի վրա: «168 Ժամ», 3 սեպտեմբերի 2009:
11. Պապիկյան Ս.Ռ., Լեոնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի զարգացման հեռանկարները: Փետրվար, «Գիտություն և տեխնիկա», 2010թ.:
12. Պապիկյան Ս.Ռ., Լեոնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի պատմությունը: Փետրվար-մարտ, «Էներգիա և էկոլոգիա», 2008թ.:
13. Պապիկյան Ս.Ռ., Արցախի էներգետիկայի պատմությունից: «Էներգիա և էկոլոգիա» № 3-4: 2016թ.:
14. Հարությունյան Վ.Լ., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր, Եր., «Գիտություն» հրատ., 2009, 146 էջ, ISBN 978-5-8080-0794-9:
15. Հարությունյան Վ.Լ., Ազատ դրամական միջոցները՝ որպես կապիտալի շուկայի կայացման միջոց, «Այլընտրանք» գիտական հանդես, 2020 № 1, հունվար-մարտ, ISSN 1829-2828, էջ 18-26
16. Հարությունյան Վ.Լ., Պետական ֆինանսական վերահսկողության կատարելագործման և զարգացման ուղիները ՀՀ-ում, «Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր) «Գիտություն» հրատ., Եր., 2008,

էջ 15-25 (համահեղինակ՝ Խաչատրյան Կ.Կ.):

17. Հարությունյան Վ.Լ., Ֆինանսական միջոցների ապակենտրոնացման արդի վիճակն ու նրա բարելավման ուղիները ՀՀ-ում, «Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (գիտաժողովի նյութեր), «Էդիթ փրինթ» հրատ., Եր., 2007, էջ 11-14:
18. Հարությունյան Վ.Լ., Տարածքային զարգացման ֆինանսական հիմնախնդիրները, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Եր., 2007, № 7-8 (84-85), էջ 6-10:
19. Պապիկյան Ս.Ռ., Հայաստանի Հանրապետության էներգետիկայի զարգացման հարցերը էներգետիկ անվտանգության տեսակետից, «Հայկական բանակ», Եր., 2019, էջ 48-56:
20. Մարկոսյան Հ.Ա., Միջուկային էներգետիկան Հայաստանում. պատմություն, հեռանկարներ, այլընտրանքներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019թ:
21. Պապիկյան Ս.Ռ., Հայաստանի էներգետիկայի զարգացման առանձնահատկությունները մինչև 1920 թվականը: Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը: Միջազգային գիտաժողովի նյութեր: 2012թ. հունիսի 24 - հուլիսի 1: Երևան-Ստեփանակերտ, ՀՀ ԳԱԱ, ԵՊՀ, ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, ԱրՊՀ, Եր., ԵՊՀ հրատ, 2012, էջ 51-52:
22. Папикян С.Р., Армянская АЭС. Сегодня и завтра, “Энергия: экономика, техника, экология” №7, М., 2007.
23. Папикян С.Р., Возможность использования ГТУ в энергосистеме Армении, “Энергетика за рубежом”, М., 2007, N3, стр. 18-19.
24. Պապիկյան Ս.Ռ., Արցախի Հանրապետությունում էներգահամակարգում զազատորբինային կայանքների օգտագործման տեխնիկատնտեսական հիմնավորումը, «Մոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովի հողվածների ժողովածու: Եր., 2018, էջ 129-134:
25. Պապիկյան Ս.Ռ., Հայաստանի էներգետիկայի պատմությունը, 4 հատորով, Եր., 2019, 760 էջ:

Էլեկտրոնային կայքեր

26. <http://www.kargavorum.nkr.am>
27. <http://artsakhhek.am>
28. Էլեկտրոնային կայք՝ www.armeniannpp.am

ЭНЕРГЕРТИКА АРЦАХА

В книге представлена история энергетики Арцаха от начала до наших дней. Предоставляются обширные информационные данные и аналитические материалы, касающиеся развития различных секторов энергетики в Арцахе.

Книга также содержит информацию о системах газоснабжения Арцаха и мельницах, а также о перспективах развития энергетики в Республике Арцах.

Книга предназначена не только для ученых, студентов, но и для всех, кто интересуется данной областью.

РАПИКЯН S.R.

ARTSAKH ENERGY

The book presents the history of Artsakh energy from the beginning to the present day. The book also contains information on the gas supply systems of Artsakh, as well as the prospects for the development of energy in the Artsakh Republic.

The book is intended not only for scientists, students, but also for anyone interested in the field.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2005 թվականի
մայիսի 25-ին

ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՆԵՐ

Հոդված 1. Օրենքի նպատակը

Սույն օրենքի նպատակը էներգախնայողության իրականացման և վերականգնվող էներգետիկայի զարգացման պետական քաղաքականության սկզբունքների և դրանց իրագործման մեխանիզմների սահմանումն է՝ ուղղված՝

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և էներգետիկ անկախության ամրապնդմանը,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և էներգետիկ անվտանգության, էներգետիկ համակարգի հուսալիության աստիճանի բարձրացմանը,
- էներգախնայողությունը և վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող նոր արտադրությունների ստեղծմանը և ծառայությունների կազմակերպմանը,
- շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնածին ազդեցության նվազեցմանը:

Հոդված 2. Սույն օրենքի իմաստով օգտագործված հիմնական հասկացություններն են՝

(վերնագիրը խմբ. 29.11.2018 ՀՕ-70-Ն)


- ա) արեգակնային էներգիայի աղբյուր՝ արեգակից փոխանցված ճառագայթներ.
- բ) երկրաջերմային էներգիայի աղբյուր՝ ստորերկրյա տաք ջրեր (հիդրոթերմալ աղբյուր) կամ ապարների ջերմություն (երկրաթերմալ աղբյուր).
- գ) էներգաարդյունավետության ցուցանիշ՝ էներգատեղակայանքների համար ազգային ստանդարտներով ամրագրված էներգակիրների օգտագործման կամ կորստի բացարձակ, տեսակարար կամ հարաբերական մեծությունը ցանկացած տեսակի արտադրանքի արտադրությունում (ծառայության մատուցման ընթացքում) կամ տեխնոլոգիական պրոցեսում.

- դ) էներգախնայողություն՝ իրավական, կազմակերպչական, գիտական, արտադրական, տեխնիկական և տնտեսական նպատակային գործունեություն՝ ուղղված էներգետիկ ռեսուրսների տեսակարար ծախսի նվազեցմանը.
- ե) էներգակիր՝ զանազան ազրեգատային վիճակներում գտնվող նյութ (պինդ, հեղուկ, գազային) կամ մատերիայի այլ ձևեր (պլազմա, դաշտ, ճառագայթում և այլն), որոնցում կուտակված էներգիան կարող է օգտագործվել էներգամատակարարման նպատակով.
- զ) էներգակիրների արդյունավետ օգտագործում՝ տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման ժամանակակից մակարդակով և շրջակա միջավայրի պահպանման պահանջներով պայմանավորված էներգակիրների օգտագործումը տնտեսապես շահավետ և առավելագույն արդյունավետություն ստանալու պայմանով.
- է) էներգատեղակայանք՝ էներգիայի արտադրության, կերպափոխման, հաղորդման, կուտակման, բաշխման և սպառման համար նախատեսված սարքավորումներ կամ փոխկապակցված սարքավորումների և կառույցների համալիր.
- ը) էներգետիկ հաշվեկշիռ՝ սահմանված ժամանակահատվածում արդյունահանված, արտադրված, ներմուծված, վերամշակված, փոխակերպված, փոխադրված, բաշխված և պահեստավորված, արտահանված ու օգտագործված էներգակիրների քանակական բազային բնութագիր.
- թ) էներգետիկ փորձաքննություն՝ խորհրդատվական ծառայություն՝ ուղղված իրավաբանական և ֆիզիկական անձանց էներգետիկական տնտեսությունների էներգետիկ հաշվեկշիռների և (կամ) էներգատեղակայանքներում էներգակիրների արդյունավետ օգտագործման էներգաարդյունավետության ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն ներառող փաստաթղթերում (այսուհետ՝ էներգետիկ հաշվետվություններ) առկա տեղեկատվության ստուգմանը (այդ թվում՝ էներգաարդյունավետության ցուցանիշների չափագրմամբ), որի արդյունքում տրամադրվում է էներգետիկ փորձաքննական եզրակացություն.
- ժ) ինքնավար էներգաարտադրող սեփական կարիքների բավարարման համար էլեկտրական և (կամ) ջերմային էներգիա, կենսազագ արտադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձ.
- ժա) կենսազանգվածի էներգիայի աղբյուր՝ մարդու կենսաբանական կամ տնտեսական գործունեության և այլ կենդանական ծագում ունեցող օրգանական և (կամ) այրվող արգասիքներ, բուսական մնացորդներ և թափոններ, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսեր.
- ժբ) հողմային էներգիայի աղբյուր՝ քամի.
- ժգ) ջրային էներգիայի աղբյուր՝ մակերևութային և ստորերկրյա ջրեր.
- ժդ) վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ՝ հողմային, արեգակնային, ջրային, երկրաջերմային և կենսազանգվածի վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էներգակիրների համախումբ, որոնք կարող են օգտագործվել սպառման նպատակով.
- ժե) վերականգնվող էներգետիկա՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էներգակիրների և մեխանիկական էներգիայի ստացման ոլորտ:


(2-րդ հոդվածը խմբ. 29.11.2018 ՀՕ-70-Ն)



Հունտրի ջրաղացների ավերակներից



Սարսանգի հիդրոհանգույցը



Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծ



Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծ Արցախում



**Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծ Արցախում, 2018թ. հոկտեմբեր
Լուսանկարը՝ Սյրեփյան ՊԱՊԻԿՅԱՆԻ**



Սյունիք-1 հիդրոէլեկտրակայանի շենքի արտաքին տեսքը, 2011թ. հունվար
(լուսանկարը՝ Ստեփան Պապիկյանի)



Սյունիք-1 հիդրոէլեկտրակայանի ջրառը, 2011թ. հունվար
(լուսանկարը՝ Ստեփան Պապիկյանի)



Սյունիք-4 ՓՀԷԿ –ը Արցախում,գլխային հանգույց
Լուսանկարը՝ Սյունիան Պապիկյանի, 2018թ.



Սյունիք - 4 ՀԷԿ-ի մեքենայական սրահ, Արցախ, 2018թ.
Լուսանկարը՝ Սյունիան Պապիկյանի



«Թրոի-1 ՀԷԿ» շենքը



«Թրոի-1» ՓՀԷԿ-ի սարքավորումները, Մարտիակերպի շրջան



Խաչենի ջրամբարը



Սարսանգի ջրամբարը, ճայեր



Մադաղիսի ջրամբարը



**ՀԷԿ-ի ձկնուղի, Արցախ, 2018թ.
Լուսանկարը՝ Սյրեփան Պապիկյանին**



ՀԷԿ-ի մեքենայական սրահ



Արցախի «Ջերմաջուր» ՀԷԿ-ի մեքենայական սրահը մինչև ապամոնտրաժումը





**Հիդրոէլեկտրակայանի գլխային հանգույց, Արցախի Հանրապետություն
Լուսանկարը՝ Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆԻ, 2018թ. հոկտեմբեր**



**Հիդրոէլեկտրակայան Աղավնո գետի վրա, 2019թ.
լուսանկարը՝ Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆԻ**



Շահումյանի շրջանի ՀԷԿ-երը






Թարթառ գետը



ԱԳԼՃԿ N 3 ք. Սյրեփանակերտ



**ՀԷԿ-երի ապամոնիթինգի և
հրդեհման լուսանկարներ**

Հողված 3. Օրենքի կարգավորման առարկան և գործողության ոլորտը

Սույն օրենքը կարգավորում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս՝

- ա) էներգետիկ, այդ թվում՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ արտադրող, փոխադրող, բաշխող, փոխակերպող, պահեստավորող և օգտագործող էներգատեղակայանքների, մեքենաների, սարքավորումների և սպրանքների մշակման, արտադրության, ներմուծման և օգտագործման ոլորտներում.
- բ) շենքերի և կառուցվածքների էներգետիկ արդյունավետության բարձրացման նպատակով ժամանակակից կառուցվածքազերմամեկուսիչ, ջերմամեկուսիչ ու հերմետիկացնող նյութերի և շինվածքների մշակման, արտադրության, ներմուծման ոլորտներում.
- գ) էներգակիրներ սպառող արտադրատեխնիկական համալիրների (այդ թվում՝ լուսավորման, ջեռուցման, օդափոխության, ջրամատակարարման և ջրահեռացման համալիրների) ու շենքերի և կառուցվածքների էներգաարդյունավետ նախագծերի, տեխնոլոգիաների և տեխնիկական լուծումների մշակման ու ներդրման ոլորտներում.
- դ) էներգետիկ ռեսուրսների որակի որոշման, հաշվառքի և սպառման կարգավորման սարքերի ու տեխնիկական համալիրների մշակման, արտադրության, ներմուծման և օգտագործման ոլորտներում.
- ե) *(կետև ուժը կորցրել է 29.11.2018 ՀՕ-70-Լ)*
- զ) էներգետիկ ռեսուրսների, այդ թվում՝ վերականգնվող, արդյունավետ օգտագործման համար կազմակերպական, գիտահետազոտական, նախագծային, փորձաքննական, մշակման, կառուցման, վերակառուցման և կարգաբերման աշխատանքների կատարման ոլորտներում:

(3-րդ հոդվածը լրաց, փոփ. 29.11.2018 ՀՕ-70-Լ)

Հողված 4. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի իրավական կարգավորումը

1. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով:
2. Եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 5. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականության սկզբունքները

1. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականությունը հիմնված է այդ գործունեության շրջանակներում ներգրավվող կողմերի կամավորության սկզբունքի վրա, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
2. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականության սկզբունքներն են՝
 - ա) սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսներով տնտեսության էներգետիկ պահանջարկի բավարարման մակարդակի բարձրացումը.
 - բ) էներգախնայողության իրականացումը, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող իրավական և տնտեսական մեխանիզմների ստեղծումը և կիրառումը.
 - գ) ներկրվող և արդյունահանվող էներգետիկ ռեսուրսների ծավալների աճի դեպքում՝ աճի նկատմամբ էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման գերակայության ապահովումը.
 - դ) վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման, ինչպես նաև դրան նպաստող նոր տեխնոլոգիաների կիրառման աճի ու զարգացման ապահովումը.
 - ե) վերականգնվող էներգետիկ ռեսուրսների իրացման մրցունակության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության ապահովումը.
 - զ) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացմանն ուղղված միջոցառումներում բնական ռեսուրսների արդյունավետ (խնայողաբար) օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության խնդիրների գերակայության ապահովումը.
 - է) Էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի էներգաարդյունավետ արտադրության խրախուսումը, այդ թվում՝ ինքնավար էներգաարտադրողների համար.
 - ը) վերականգնող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների և էլեկտրաէներգետիկական համակարգի համատեղ աշխատանքի խրախուսումը՝ էլեկտրաէներգիայի փոխանակման պայմանով.
 - թ) սպառողների կողմից տարբեր տեսակի էներգակիրների և էներգախնայողական տեխնոլոգիաների ընտրության և օգտագործման խրախուսումը.
 - ժ) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի պետական (ազգային) նպատակային ծրագրերի իրագործումը:
3. Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության պարտադիր տեխնիկական պահանջները պետք է պահպանեն նախագծողները, կառուցապատողները և շահագործման ընդունողները: Էներգախնայողության և էներգ-

գաարդյունավետության պարտադիր տեխնիկական պահանջները սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

(5-րդ հոդվածը փոփ., լրաց. 29.11.2018 ՀՕ-70-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 2

ԷՆԵՐԳԱՆՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 6. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարումը

1. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարումը պետության կողմից վարվող քաղաքականության մշակումն ու իրականացումն է հետևյալ ուղղություններով՝
 - ա) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը.
 - բ) էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը.
 - գ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության զարգացման պետական ծրագրերում, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում էներգախնայողության պահանջների ընդգրկումը.
 - դ) սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.
 - ե) էներգախնայողության և էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի վրա ներգործության ստանդարտացման փաստաթղթերի մշակումը և հաստատումը.
 - զ) էներգատեղակայանքների համապատասխանության կամավոր հավաստման համակարգի ապահովումը.
 - է) էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղղությամբ գործող և կառուցվելիք օբյեկտների նախագծերի էներգետիկ փորձաքննությունների իրականացման համակարգի ստեղծումը.
 - ը) էներգետիկ փորձաքննության գործունեության բնագավառի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.
 - թ) էներգակիրների հաշվառման և վիճակագրության ապահովումը.
 - ժ) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացման նախագծերի և ծրագրերի ֆինանսավորմանն աջակցումը.

ժա) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման նպատակով ուսուցման կազմակերպումը, գիտատեխնիկական առաջընթացին, տեղեկատվությանը և քարոզչությանն աջակցումը.

ժբ) էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

2. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառավարման մարմինները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարմանը մասնակցում են կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում:
3. Անտառտնտեսության տարածքներում, պետական արգելավայրերում և ազգային պարկերում դրանց պահպանության ռեժիմների համապատասխանող և կառուցվող շենքերի ու կառուցվածքների նախագծերում կիրառվող տեխնոլոգիաների և տեխնիկական լուծումների էներգաարդյունավետության ցուցանիշները, ինչպես նաև վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառման պահանջները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացմամբ սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

(6-րդ հոդվածը լրաց., խմբ. 29.11.2018 ՀՕ-70-Ն)

Հոդված 7. Էներգախնայողության ազգային ստանդարտները

(վերնագիրը փոփ. 29.11.2018 ՀՕ-70-Ն)

Ստանդարտացման ազգային մարմնի կողմից «Ստանդարտացման մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընդունվում են էներգախնայողության ազգային ստանդարտներ, որոնցով սահմանվում են՝

- ա) էներգատեղակայանքների էներգաարդյունավետության ցուցանիշները.
- բ) էներգետիկ ռեսուրսների արդյունահանման, արտադրման, վերամշակման, փոխակերպման, փոխադրման, բաշխման, պահեստավորման և սպառման էներգաարդյունավետության ցուցանիշները.
- գ) շենքերի և կառուցվածքների ջեռուցման, լուսավորման, օդափոխության, ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական համալիրների էներգաարդյունավետության ցուցանիշները.
- դ) արտադրական պրոցեսների էներգաարդյունավետության ցուցանիշները.
- ե) էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի վրա ներգործության բնապահպանական ցուցանիշները:

(7-րդ հոդվածը փոփ., լրաց. 29.11.2018 ՀՕ-70-Ն)

Հողված 8. Էներգասպառող սարքերի և սարքվածքների շրջանառությունը

(վերնագիրը խմբ. 29.11.2018 ՀՕ-70-Ն)

1. Էներգասպառող սարքերի և սարքվածքների պիտակավորման կարգը և պիտակի ձևը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:
2. Արցախի Հանրապետության կառավարությունը սահմանում է մարդու կյանքին և (կամ) շրջակա միջավայրին վտանգ սպառնացող (վտանգավոր նյութեր պարունակող) էներգաարդյունավետ սարքերի, սարքվածքների և արտադրանքի ցանկը, այդ ցանկում ընդգրկված էներգաարդյունավետ սարքերի, սարքվածքների և արտադրանքի Արցախի Հանրապետությունում շուկայահանման պայմանները՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն, ինչպես նաև դրանց շահագործումից հետո օգտահանման կարգը, որոնք պետք է պահպանի յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ:

(8-րդ հոդվածը խմբ. 29.11.2018 ՀՕ-70-Ն)

Հողված 9. Էներգակիրների պետական հաշվառումը և վիճակագրությունը

1. Արցախի Հանրապետության կառավարությունը սահմանում է տնտեսության ճյուղերն ըստ էներգատարության՝ բարձր, միջին և ցածր:
2. Պետական վիճակագրություն իրականացնող մարմինը վարում է արդյունահանվող, արտադրվող, ներմուծվող, վերամշակվող, փոխակերպվող, փոխադրվող, բաշխվող և պահեստավորվող, արտահանվող և օգտագործվող էներգակիրների հաշվառում՝ «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, որի արդյունքների հիման վրա էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարման լիազորված մարմինը կազմում է էներգետիկ հաշվեկշիռ: Էներգետիկ հաշվեկշիռը հրապարակում է պետական վիճակագրություն իրականացնող մարմինը:

(9-րդ հոդվածը խմբ. 29.11.2018 ՀՕ-70-Ն)

Հողված 10. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ուսուցումը և կրթությունը

Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ուսուցումը և կրթությունը կազմակերպելու նպատակով կրթության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմինն իրականացնում է՝

- ա) կրթական համակարգի հանրակրթական, միջին և բարձրագույն մասնագիտական, լրացուցիչ և հետբուհական մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի դասընթացների, համապատասխան գիտամեթոդական աշխատանքների նախատեսում.
- բ) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի հիմունքների և տեխ-

նիկայի գծով ճարտարագիտական կադրերի վերապատրաստման դասընթացների նախատեսում:

Հոդված 11. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի քարոզչությունը

Կառավարության լիազորած մարմինների կողմից էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին տեղեկատվության տարածումն իրականացվում է

- ա) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի խնդիրների հանրային քննարկմամբ, նրանց բնապահպանական, տնտեսական և սոցիալական առավելությունների լրատվությամբ և քարոզչությամբ.
- բ) էներգաարդյունավետ էներգատեղակայանքների և էներգախնայողական ցուցադրական նախագծերի մասին լրատվությամբ.
- գ) էներգախնայողական տեխնոլոգիաների, մեքենաների և էներգատեղակայանքների ցուցահանդեսների կազմակերպմամբ.
- դ) էներգետիկ ռեսուրսների խնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացման ազգային անհրաժեշտության և նպատակահարմարության քարոզչությամբ:

Գ Լ ՈՒ Խ 3

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 12. Էներգետիկ փորձաքննության մասին նորմատիվ իրավական ակտերը

Էներգետիկ փորձաքննության մասին նորմատիվ իրավական ակտերը կազմված են սույն օրենքից, դրան համապատասխան ընդունված այլ իրավական ակտերից, ինչպես նաև հավատարմագրման և համապատասխանության գնահատման բնագավառի պետական քաղաքականությունը մշակող Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի ընդունած նորմատիվ իրավական ակտերից:

(12-րդ հոդվածը խմբ. 29.11.2018 ՇՕ-70-Ն)

Հոդված 13. Էներգետիկ փորձաքննության իրականացումը

1. Էներգետիկ փորձաքննության նպատակն է եզրակացություն տալ էներգաարդյունավետության փաստացի և պետական ստանդարտներով սահմանված ցուցանիշների համեմատական մեծությունների վերաբերյալ:
2. Էներգատեղակայանքների, շենքերի և կառուցվածքների էներգետիկ փորձաքննությունը կամավոր է և իրականացվում է դրանց սեփականատերերի նախաձեռնությամբ ու հաշվին:
«Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի հա-

մաձայն ապրանքների ու ծառայությունների գնումների իրականացման նպատակով կազմվող գնման պայմանագրերում անհրաժեշտության դեպքում նշվում է ապրանքների ու ծառայությունների էներգետիկ փորձաքննության եզրակացության ներկայացման պահանջ մատակարար կազմակերպություններից:

3. Էներգետիկ փորձաքննությունն իրականացվում է Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ «Հավատարմագրման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն հավատարմագրված համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող համապատասխանության գնահատման մարմինների կողմից:

(13-րդ հոդվածը խմբ. 29.11.2018 ՀՕ-70-Ն)

Հոդված 14. Էներգետիկ փորձաքննության անցկացման իրավական ակտերը

1. Էներգետիկ փորձաքննության անցկացման իրավական ակտերով սահմանվում են էներգետիկ փորձաքննության անցկացման մեթոդները և փաստաթղթային ձևակերպումների կարգը:
2. Էներգետիկ փորձաքննության անցկացման իրավական ակտերի անվանացանկը՝ հավատարմագրման և համապատասխանության գնահատման բնագավառի պետական քաղաքականությունը մշակող Արցախի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ներկայացմամբ, հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

(14-րդ հոդվածը փոփ. 29.11.2018 ՀՕ-70-Ն)

Հոդված 15. Էներգետիկ փորձաքննության փաստաթղթավորումը

1. Էներգետիկ փորձաքննության իրականացումը պարտադիր փաստաթղթավորում է փորձաքննություն իրականացնող անձը՝ էներգետիկ փորձաքննության անցկացման իրավական ակտերով սահմանված կարգով:
2. Էներգետիկ փորձաքննության փաստաթղթավորումը նախատեսում է փորձաքննություն իրականացնող անձի աշխատանքային փաստաթղթերի, փորձաքննության արդյունքների հիման վրա էներգետիկ փորձաքննության եզրակացության և էներգետիկ փորձաքննության հաշվետվության կազմումը:
3. Էներգետիկ փորձաքննություն իրականացնող անձի աշխատանքային փաստաթղթերը չափագրումների արդյունքում պատրաստվող և պահպանվող փաստաթղթերն են: Էներգետիկ փորձաքննություն իրականացնող անձի աշխատանքային փաստաթղթերն առևտրային գաղտնիք կազմող փաստաթղթեր են:
4. Էներգետիկ փորձաքննության եզրակացությունները, էներգետիկ փորձաքննության հաշվետվությունները, էներգետիկ փորձաքննություն իրականացնող անձի աշխատանքային փաստաթղթերը և էներգետիկ փորձաքննության անցկացման հետ կապված այլ փաստաթղթեր պահպանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, բայց

ոչ պակաս, քան էներգետիկ փորձաքննության անցկացմանը հաջորդող հինգ տարիների ընթացքում:

Հոդված 16. Էներգետիկ փորձաքննության եզրակացությունը

1. Էներգետիկ փորձաքննության եզրակացությունը էներգետիկ փորձաքննություն իրականացնող անձի կողմից կազմված փաստաթուղթ է, որում արտահայտվում է կարծիք՝ էներգետիկ փորձաքննության ենթարկվող անձի էներգետիկ տնտեսության (արտադրության տեխնոլոգիական պրոցեսի) և (կամ) էներգատեղակայանքներում էներգակիրների արդյունավետ օգտագործման էներգաարդյունավետության ցուցանիշների վերաբերյալ: Էներգետիկ փորձաքննության եզրակացության ձևին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են էներգետիկ փորձաքննության անցկացման իրավական ակտերով:
2. Էներգետիկ փորձաքննության եզրակացությունը կազմվում է առնվազն երկու օրինակից, ստորագրվում և (կամ) կնքվում է էներգետիկ փորձաքննություն իրականացնող անձի կողմից: Էներգետիկ փորձաքննության եզրակացության մեկ օրինակը տրվում է էներգետիկ փորձաքննության ենթարկվող անձին, իսկ մյուսը մնում է էներգետիկ փորձաքննություն իրականացնող անձի մոտ:
3. Էներգետիկ փորձաքննության դրական եզրակացությունը հիմք է հանդիսանում սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գործունեության ոլորտներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրությամբ սահմանված արտոնությունների տրամադրման համար:

Հոդված 17. Էներգետիկ փորձաքննության հաշվետվությունը

1. Էներգետիկ փորձաքննության հաշվետվությունում կարող են ներառվել տեղեկություններ փորձաքննության ընթացքի, էներգետիկական տնտեսությունում հայտնաբերված սխալների և թերությունների, դրանց վերացման, ինչպես նաև էներգաարդյունավետության ցուցանիշների բարելավման ուղղությամբ:
2. Էներգետիկ փորձաքննության հաշվետվությունն առևտրային գաղտնիք պարունակող փաստաթուղթ է: Այն կազմվում է երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմի համար մեկական օրինակ, ստորագրվում է փորձաքննողի ու ստորագրվում և (կամ) կնքվում էներգետիկ փորձաքննություն իրականացնող անձի ղեկավարի կողմից:

Հոդված 18. Էներգետիկ փորձաքննություն իրականացնող անձանց պատասխանատվությունը

Սույն օրենքի պահանջները խախտելու համար էներգետիկ փորձաքննություն իրականացնող անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 4
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 19. Միջազգային համագործակցությունը

Ըներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային համագործակցության հիմնական ուղղություններն են՝

- ա) էներգաարդյունավետ տեխնոլոգիաների և սարքերի պատրաստման փորձի փոխանակումը.
- բ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստանդարտների և սերտիֆիկացման արդյունքների փոխադարձ ճանաչումը.
- գ) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի տեղեկատվության փոխանակումը.
- դ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական և ֆիզիկական անձանց մասնակցությունը միջազգային էներգախնայողական և վերականգնվող էներգետիկայի ծրագրերին.
- ե) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի համատեղ ծրագրերի մշակումն ու նախագծերի իրականացումը:

Գ Լ ՈՒ Խ 5
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 20. Անցումային դրույթներ

- 1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում՝
 - ա) *(Կետև ուժը կորցրել է 29.11.2018 ՀՕ-70-Ն)*
 - բ) Արցախի Հանրապետության կառավարությունը, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարման լիազորված մարմին ներկայացմամբ, հաստատում է փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեման և ընդունում համապատասխան որոշում՝ ուղղված հողահատկացումների և այլ անհրաժեշտ թույլատրությունների գործընթացի պարզեցմանը.
 - գ) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի կառավարման պետական լիազորված մարմինը և համապատասխանության գնահատման բնագավառում լիազոր մարմինն ապահովում են էներգախնայողության պետական ստանդարտների, էներգետիկ փորձաքննության անցկացման իրավական ակտերի առաջնահերթ մշակումը և սահմանված կարգով հաստատումը:
- 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում կարգավորումն իրականացնող մարմինը ընդունում է սույն օրենքի 5-րդ հոդվածում ամրա-

գրված պետական քաղաքականության սկզբունքների իրականացումն ապահովող որոշումներ վերականգնվող էներգետիկայի արագացված զարգացմանը նպաստող սակագնային երկարաժամկետ քաղաքականության կիրառման մասին:

(20-րդ հոդվածը փոփ. 29.11.2018 ՀՕ-70-Ն)

Հոդված 21. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

30 հունիսի 2005թ.

ք. Ստեփանակերտ, ՀՕ-210

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Հնդունված է 2002 թվականի

հոկտեմբերի 30-ին

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

Հոդված 2. Օրենքի նպատակը

Սույն օրենքի նպատակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների և դրանց իրագործման մեխանիզմների սահմանումն է:

Հոդված 3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառը

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառը (այսուհետ՝ էներգետիկայի բնագավառ) հասարակական ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման, էլեկտրաէներգետիկական և բնական գազի ոլորտների համակարգերի օպերատորի ծառայության իրականացման, էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների (անկախ դրանց սեփականության ձևից), այդ գործունեությունների իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախումբն է:

2. Էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ մասերն են՝
ա) էլեկտրաէներգետիկական համակարգը.
բ) ջերմամատակարարման համակարգերը.
գ) գազամատակարարման համակարգը:

(3-րդ հոդվածը փոփ. 28.09.2017 ՀՕ-28-Ն)

Հոդված 4. Հիմնական հասկացությունները

Սույն օրենքի իմաստով օգտագործված հիմնական հասկացություններն են՝ *անվտանգության գոտիներ*՝ էներգետիկայի բնագավառի օբյեկտների (կառույցների, տեղակայանքների, կապի, հաղորդման (փոխադրման) ու բաշխման զծերի և այլն) շրջակա տարածքները, որոնք նախատեսվում են օբյեկտների բնականոն գործունեությունը, շահագործող անձնակազմի և քաղաքացիների կյանքի անվտանգությունը, այլ օբյեկտների նկատմամբ փոխադարձ անվտանգության ապահովման նպատակով:

բաշխիչ ցանց՝ բաշխման լիցենզիա ունեցող անձի կողմից կառավարվող և շահագործվող, էլեկտրական կամ ջերմային էներգիայի կամ բնական գազի բաշխման զծերի, ենթակայանների, գազակարգավորիչ հանգույցների և այլ սարքավորումների միասնական համակարգը, որի միջոցով էլեկտրական կամ ջերմային էներգիան կամ բնական գազը արտադրողից և (կամ) հաղորդողից հասցվում է սպառողներին:

ենթասպառող՝ սպառողը, որի էներգամատակարարումն իրականացվում է այլ սպառողի ցանցերից, և որն ունի սահմանված կարգով կնքված էներգիայի կամ բնական գազի մատակարարման երկկողմ կամ եռակողմ պայմանագիր:

էլեկտրաէներգետիկական շուկային մատուցվող ծառայություններ՝ էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեությունը կանոնակարգելուն և դրա թափանցիկությունն ապահովելուն ուղղված կենտրոնացված ծառայությունները:

էներգիա՝ էլեկտրական էներգիա (հզորություն) և ջերմային էներգիա:

ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն՝ լիցենզավորված անձի ֆինանսական վիճակի և առևտրային գաղտնիքների վերաբերյալ տեղեկատվությունը կամ այլ տեղեկություններ, որոնց հրապարակումը կարող է վնասել լիցենզավորված անձին, ինչպես նաև մասնավոր այն տեղեկությունները, որոնք վերաբերում են լիցենզավորված անձի կողմից մատակարարվող սպառողներին:

լիցենզիա՝ կարգավորող մարմնի կողմից իրավաբանական անձին տրված փաստաթուղթը, որը հավաստում է էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնելու և ծառայություններ մատուցելու վերջինիս իրավունքը և պարտականությունը՝ համաձայն սույն օրենքի դրույթների:

լիցենզավորված անձ՝ սույն օրենքի համաձայն լիցենզիա ստացած իրավաբանական անձը:

լիցենզավորվող գործունեություն՝ սույն օրենքին համապատասխան լիցենզավորման ենթակա գործունեությունը:

կարգավորող մարմին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում կարգավորումն իրականացնող մարմին:

հաղորդման (փոխադրման) ցանց՝ էլեկտրական, ջերմային էներգիայի կամ բնական գազի հաղորդման (փոխադրման) զծերի (ենթակայանների, գազակարգավորիչ հանգույցների և այլ սարքավորումների) միասնական համակարգը, որի միջոցով էլեկտրական, ջերմային էներգիան կամ բնական

գազն արտադրողից կամ ներկրողից հասցվում է բաշխողին և (կամ) սպա-
ռողին և (կամ) տարանցվում է երրորդ երկիր, և որի կառավարումն ու
շահագործումն իրականացնում է հաղորդման (փոխադրման) լիցենզիա
ունեցող անձը.

հավասարակշռում՝ էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման, արտա-
հանման կամ տարանցիկ փոխադրման ընթացքում էլեկտրական էներ-
գիայի (հզորության) պակասուրդի կամ ավելցուկի տնտեսական կարգա-
վորում.

մատակարարման և օգտագործման կանոններ՝ կարգավորող մարմնի կողմից
հաստատված կարգավորման փաստաթղթերը, որոնցով սահմանվում են
մատակարարների կողմից սպառողներին էլեկտրական, ջերմային էներ-
գիայի և բնական գազի մատակարարման ու վերջիններին կողմից դրանց
օգտագործման կանոնները և պայմանները.

շուկայի կանոններ՝ կարգավորող մարմնի կողմից հաստատված հիմնարար
փաստաթուղթը, որով կանոնակարգվում են էներգետիկայի բնագավառում
գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբե-
րությունները, բնագավառի հուսալիության և անվտանգության հետ
առնչվող հիմնական կանոններն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և
շուկայի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ
մեխանիզմները.

որոշում՝ կարգավորող մարմնի կողմից իր իրավասության սահմաններում սույն
օրենքին համապատասխան ընդունված իրավական ակտը.

սակագին՝ էլեկտրական էներգիայի և (կամ) հզորության, ջերմային էներգիայի և
բնական գազի միավորի վաճառքի, էներգետիկայի բնագավառում լիցեն-
զավորված գործունեությամբ մատուցվող ծառայությունների համար (բա-
ցառությամբ արտահանման գործունեությունների) սույն օրենքին համա-
պատասխան սահմանված գինը.

սպառող՝ էլեկտրական էներգիայի (հզորության), բնական գազի և (կամ) ջեր-
մային էներգիայի սպառման պահանջարկ ունեցող իրավաբանական կամ
ֆիզիկական անձը կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող
կազմակերպությունը, որն էներգիայի մատակարարման պայմանագիր է
կնքել լիցենզավորված անձի հետ.

վարվեցողության կանոններ՝ կարգավորող մարմնի անդամների և աշխատա-
կազմի, կարգավորող մարմնի անդամների, աշխատակազմի և էներգե-
տիկայի բնագավառի լիցենզավորված անձանց, ինչպես նաև աշխատա-
կազմի և սպառողների միջև վարվեցողության կանոնները՝ հաստատված
կարգավորող մարմնի կողմից.

վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակ՝
էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած իրավիճակ, երբ
պատվիրված պահուստային հզորություններով հնարավոր չէ իրականաց-
նել տնտեսական կարգավարում.

տարանցիկ փոխադրում՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
Էլեկտրական էներգիայի (հզորության) տարանցիկ փոխադրում.
ունտեսական կարգավարում՝ արտադրական հզորությունների, էլեկտրաէներ-
գիայի ներկրման և հաղորդման հնարավորությունների հայտարարագրման,
պլանավորման և կարգավորման միջոցը, որը հանգեցնում է նվազագույն
ծախսումներով էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության և
անվտանգության ցուցանիշների պահպանման:
(4-րդ հոդվածը խմբ., փոփ. 06.12.2006 ՂՕ-8, լրաց., փոփ. 28.09.2017 ՂՕ-28-Ն)

Գ Լ ՈՒ Խ 2
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Հոդված 5. Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության
հիմնական սկզբունքները**

1. Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են
- ա) Էներգետիկայի բնագավառում մրցակցության և արդյունավետ գործունեության խթանումն ու մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը.
 - բ) Էներգետիկայի բնագավառի գործունեության կարգավորումը.
 - գ) տնտեսական գործունեության, պետական կառավարման և կարգավորման գործառույթների տարանջատումը.
 - դ) սպառողների և էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության ապահովումը և շահերի հավասարակշռումը.
 - ե) տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործումը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը.
 - զ) էներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսումը.
 - է) էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեության թափանցիկության ապահովումը.
 - ը) էներգետիկայի բնագավառի անվտանգության ապահովումը.
 - թ) հանրապետության էներգետիկական անկախության խթանումը, այդ թվում՝ ներկրվող և տեղական էներգետիկ պաշարների տարատեսականացման և արտադրական հզորությունների առավելագույն օգտագործման ապահովումը.
 - ժ) շրջակա միջավայրի պահպանման ապահովումը.
 - ժա) գիտատեխնիկական առաջընթացի և նոր՝ էներգաարդյունավետ ու էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման, կադրերի պատրաստման ու վերապատրաստման խրախուսումը.
 - ժբ) էներգետիկական շուկաների ձևավորման և զարգացման խթանումը.
 - ժգ) արտադրության, հաղորդման (փոխադրման), բաշխման, արտահանման,

ներկրման, համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական շուկային մատուցվող ծառայությունների գործառույթների տարանջատումը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում պետական կառավարման և կարգավորող մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում պետական քաղաքականություն իրականացնելիս ղեկավարվում են սույն հոդվածով սահմանված սկզբունքներով:

Հոդված 6. Արտադրական հզորությունների, էներգետիկական ցանցերի և տեղակայանքների համար հողօգտագործման իրավունքը

1. Նոր արտադրական հզորությունների, հաղորդման (փոխադրման) և բաշխման ցանցերի և տեղակայանքների կառուցման կամ գործող տեղակայանքների վերակառուցման (ընդլայնման) համար պետական սեփականություն հանդիսացող հողատարածքները տրամադրվում են առաջնահերթության իրավունքով և օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով հասարակական ծառայությունների մատուցման համար դրանց կառուցումը (վերականգնումը) նվազագույն ծախսումներով իրականացնելու հիմնավորումը: Օդային և մալուխային գծերի, բնական գազի և ջերմային ցանցերի կառուցման համար տրամադրված ուղիները և դրանց անվտանգության գոտիները պետք է բավարարեն տեխնիկական կանոնակարգերի պահանջները:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիցենզավորված անձանց առկա էներգատեղակայանքների (արտադրող կայաններ, մալուխներ, օդային գծեր, ենթակայաններ, գազակարգավորիչ հանգույցներ, գազատարներ և ջերմատարներ և այլն) անվտանգության գոտիների և կառույցների համար օգտագործված պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ սահմանվում է անվճար հարկադիր սերվիտուտ:

3. Էներգատեղակայանքի վերացման դեպքում նրա սեփականատերը պարտավոր է վերականգնել կամ բարեկարգել զբաղեցրած տարածքը՝ օրենքով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 3

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդված 7. Կարգավորումը

Էներգետիկայի բնագավառի կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի շուկաների գործունեության կանոնների, կարգավորվող սակագների և լիցենզիայի պայմանների սահմանմամբ ու վերահսկմամբ հավասարակշռել սպառողների և գործունեության լիցենզիա ունեցող անձանց շահերը, գործունեության լիցենզիա ունեցող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ և նպաստել մրցակցային շուկայի ձևավորմանն ու զարգացմանը:

Հոդված 8. Կարգավորման հիմնական սկզբունքները

(8-րդ հոդվածն ուժը կորցրել է 06.12.2006 ՀՕ-8)

Հոդված 9. Կարգավորման հիմնական միջոցները

Կարգավորման հիմնական միջոցներն են՝

- ա) գործունեության լիցենզավորումը, լիցենզիայի պայմանների սահմանումը և դրանց վերահսկումը.
- բ) կարգավորող մարմինն հաշվետվություն ներկայացնելու նպատակով լիցենզավորված անձանց համար հաշիվների, ենթահաշիվների ներդրումը՝ համաձայն ազգային հաշվային պլանի, հաշվապահական հաշվառմանն առնչվող օրենքների ու իրավական ակտերի.
- գ) կարգավորվող սակագների սահմանումը.
- դ) գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև էներգիայի և (կամ) բնական գազի մատակարարման (ծառայությունների մատուցման), ինչպես նաև սպառողների հետ կնքվող էներգիայի և (կամ) բնական գազի մատակարարման (առուվաճառքի) պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանումը, գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված պայմանագրերի գրանցումը.
- ե) շուկայի կանոնների և կարգերի սահմանումը.
- զ) կարգավորող մարմնի կողմից իր իրավասության շրջանակներում իրավական ակտերի սահմանումը, կատարման վերահսկողությունը.
- է) սպասարկման որակի նկատմամբ պահանջների սահմանումը.
- ը) գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող զարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրումը՝ ապագա սակագներում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման նպատակով:

Հոդված 10. Կարգավորող մարմինը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում կարգավորումն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), որը գործում է օրենքով իրեն վերապահված լիազորությունների հիման վրա և ինքնուրույն է իր իրավասությունների շրջանակում:

(10-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հոդված 11. Լիազորված մարմնի աշխատանքի կանոնակարգումը

(11-րդ հոդվածն ուժը կորցրել է 06.12.2006 ՀՕ-8)

Հոդված 12. Հանձնաժողովի իրավասությունները

(վերնագիրը փոփ. 06.12.2006 չՕ-8)

Հանձնաժողովը՝

- ա) սահմանում է էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի, էներգետիկայի բնագավառում հաղորդման (փոխադրման), բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման կարգավորվող սակագները, ինչպես նաև էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման առավելագույն սակագները.
- բ) լիցենզավորում է էներգետիկայի բնագավառում իրականացվող գործունեությունները.
- գ) վերահսկում է գործունեության լիցենզիայի պայմանների պահպանումը և կիրառում սույն օրենքով սահմանված տուժանքները.
- դ) հաստատում, սահմանում կամ մերժում է լիցենզավորված անձանց բաժնետոմսերի գնման պայմանները (եթե պետական սեփականություն հանդիսացող գույքի մասնավորեցումը կարգավորող օրենքներով այլ բան նախատեսված չէ), ինչպես նաև լիցենզավորված անձանց կողմից մատուցվող ծառայության համար անհրաժեշտ գույքի վաճառքի կամ փոխանցման պայմանները՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի համաձայն.
- ե) սահմանում է էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները.
- զ) հաստատում է շուկայի կանոնները և կարգերը՝ համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում պետական կառավարումն իրականացնող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի հետ (այսուհետ՝ պետական մարմին).
- է) սահմանում է լիցենզավորված անձանց միջև կնքվող էներգիայի ու բնական գազի մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի պարտադիր պայմանները կամ օրինակելի ձևերը, իր կողմից սահմանված կարգով գրանցում է լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման ու արտահանման պայմանագրերը.
- ը) սահմանում է լիցենզավորված անձանց և սպառողների միջև կնքվող էներգիայի ու բնական գազի մատակարարման պայմանագրերի պարտադիր պայմանները կամ օրինակելի ձևերը և ապահովում դրանց ներդրումը.
- թ) կազմակերպում է քննարկումներ լիցենզավորված անձանց միջև առաջացած տարաձայնությունների, սպառողների հարցադրումների և բողոքների, էներգիայի ու բնական գազի մատակարարման հետ կապված, այդ թվում՝ սպառողներին ներկայացված վճարման հաշիվների վիճարկման վերաբերյալ, քննարկումների արդյունքով կայացնում է որոշումներ և (կամ) տալիս է պարզաբանումներ.
- ժ) լիցենզիայի պայմանների կատարման, վերահսկման, Հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների ու տեղեկությունների հավաստիության ուսում-

նասիրության նպատակով իրականացնում կամ կազմակերպում է լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգ (մշտադիտարկում)՝ Հանձնաժողովի ընդունած կարգով:

ժա) իր կողմից սահմանված կարգով լիցենզավորված և լիցենզիա ստանալու հայտ ներկայացնող անձանցից պահանջում է բոլոր այն տեղեկություններն ու տվյալները, որոնք անհրաժեշտ են լիցենզիաների տրամադրման, սակագների սահմանման, տարաձայնությունների և այլ հարցերի քննարկման համար:

ժբ) սահմանում է սպառողների սպասարկման որակի վերաբերյալ ընկերություններին ներկայացվող պահանջները:

ժգ) սահմանում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներին, ազգային հաշվային պլանին և այլ իրավական ակտերին համապատասխանող հաշիվներ և ենթահաշիվներ՝ կարգավորմանը վերաբերող հաշվետվությունների ներկայացման համար:

ժդ) ուսումնասիրում է լիցենզավորված անձանց կողմից ներկայացված զարգացման ներդրումային ծրագրերը, ընդունում որոշումներ՝ ապագա սակագներում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման վերաբերյալ:

ժե) ապահովում է իր կողմից ընդունված որոշումների կիրարկումը և մեկնաբանումը:

ժզ) սահմանում է էլեկտրաէներգետիկական համակարգում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության տարածքով էլեկտրական էներգիայի (հզորության) տարանցիկ փոխադրման և հավասարակշռման կարգը:

ժէ) սահմանում է էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակների ժամանակ էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման և արտահանման կարգը:

(12-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՂՕ-8, փոփ., լրաց. 30.05.2013 ՂՕ-25-Ն, խմբ., լրաց. 28.09.2017 ՂՕ-28-Ն)

Հոդված 13. Պետական մարմինների հետ համագործակցությունը

(13-րդ հոդվածն ուժը կորցրել է 06.12.2006 ՂՕ-8)

Հոդված 14. Գաղտնիությունը

1. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովին ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»:

2. Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցել, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին, որը գերակա է հրապարակման հասարակական շահից: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության

չիրապարակման վերաբերյալ լիցենզավորված անձի խնդրանքը:

3. Հանձնաժողովը Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գաղտնի տվյալների հրապարակման համար:

(14-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՇՕ-8)

Գ Լ ՈՒ Խ 4

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Հոդված 15. Կարգավորվող սակագների ձևավորման սկզբունքները

Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի կարգավորվող սակագների և այդ ոլորտներում ծառայությունների մատուցման դիմաց վճարումների ձևավորման սկզբունքներն են՝

- ա) լիցենզիայի պայմաններին համապատասխան լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի, հիմնական միջոցների մաշվածության և ոչ կյութական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցման ապահովումը.
- բ) ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը.
- գ) հիմնավորված վարկերի սպասարկման ծախսերի ներառումը.
- դ) սպառման ծավալով, պատվիրված հզորությամբ, տարվա եղանակով, օրվա ժամերով, միացման պայմաններով, ծառայությունների տեսակներով պայմանավորված սակագների տարբերակումը.
- ե) հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը.
- զ) բնապահպանական նորմերն ապահովելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված ծախսերի ներառումը.
- է) Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված էներգետիկայի զարգացման ծրագրով նախատեսված էներգատեղակայանքների կոնսերվացման և պահպանման ծախսերի ներառումը.
- ը) հիմնավորված տեխնիկական և առևտրային կորուստների ներառումը.
- թ) օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերի ներառումը:

Հոդված 16. Կարգավորվող սակագների սահմանումը և կիրառումը

1. Սակագների սահմանման ու վերանայման կարգը, այդ առնչությամբ լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը և ցանկը (հայտի փաթեթը) սահմանում է Հանձնաժողովը:

2. Սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում որոշումն ընդունվելուց երեսուս օր հետո:

Սակագների գործողության ժամկետը վեց ամսից պակաս չի կարող լինել, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա) լիցենզավորված անձը խախտում է գործունեության լիցենզիայի պայմանները.
բ) սահմանված սակագների մեծությունների՝ դատական կարգով բողոքարկման արդյունքում դատարանի վճռի հիման վրա Հանձնաժողովն ընդունում է սակագնի սահմանման վերաբերյալ նոր որոշում:

Սույն կետի «ա» ենթակետում նշված դեպքում Հանձնաժողովն իրավունք ունի նշված ժամկետից շուտ փոխելու լիցենզավորված անձի սակագները, որոնք ուժի մեջ կմնան մինչև նրա կողմից թույլ տրված խախտման վերացումը:

3. Հանձնաժողովը սահմանված կարգով կարող է սահմանել լիցենզավորված անձի գործունեության երկարաժամկետ սակագին:

4. Սահմանված սակագինը կարող է արտահայտել ինչպես որոշակի թվային արժեք, այնպես էլ որոշակի մեծություններից կախված հաշվարկային բանաձև:

5. Սահմանված սակագինը կարող է վերանայվել ինչպես լիցենզավորված անձի, այնպես էլ Հանձնաժողովի նախաձեռնությամբ: Հանձնաժողովը սակագինը սահմանում, վերանայում (վերահաստատում կամ փոփոխում) և որոշում է կայացնում լիցենզավորված անձի՝ սահմանման (վերանայման) հայտի փաթեթը Հանձնաժողով ներկայացնելու օրվանից հետո՝ 80 աշխատանքային օրվա ընթացքում (փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների դեպքում՝ 25 աշխատանքային օրվա ընթացքում):

6. Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ կարող է վերանայել գործող սակագինը և սահմանված կարգով սահմանել նոր սակագին՝ էլեկտրով լիցենզավորված անձի տնտեսական գործունեության արդյունքներից, ներդրումային ծրագրերի և սպառողներին մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ ներկայացված պահանջների կատարումից:

7. Գործունեության լիցենզիա ունեցող անձը կարող է էլեկտրական, ջերմային էներգիան և բնական գազը վաճառել կամ լիցենզավորված ծառայությունները մատուցել Հանձնաժողովի սահմանվածից ավելի ցածր սակագնով, պայմանով, որ չի վտանգվում կամ չի վտանգվի լիցենզավորված գործունեությունը, և (կամ) այն նպատակաուղղված չէ շուկայում մենաշնորհային կարգավիճակ ձեռք բերելուն, և եթե այդ իջեցումը կատարվում է լիցենզավորված անձի շահույթի հաշվին: Սակագների նման իջեցման դեպքում նոր սակագներ սահմանելիս Հանձնաժողովը հաշվի չի առնում սակագների իջեցման հետևանքով լիցենզավորված անձի հնարավոր վնասները:

8. Չիմք ընդունելով սույն օրենքի 15-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը հաստատում է սակագների հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշների (շահութաբերության, մաշվածության, սեփական կարիքների, կորուստների, վառելիքի տեսակարար ծախսի և այլն) սահմանային (թույլատրելի) մեծությունները տոկոսային կամ բացարձակ մեծությամբ կամ հաստատում է դրանց հաշվարկման մեթոդիկաները:

(16-րդ հոդվածը փոփ., լրաց. 06.12.2006 ՀՕ-8, խմբ. 05.09.2007 ՀՕ-71, խմբ. 28.09.2017 ՀՕ-28-Ն)

Գ Լ ՈՒ Խ 5

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 17. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորումը

1. Էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) և բաշխման, էլեկտրաէներգետիկական ու գազամատակարարման համակարգերի օպերատորների ծառայության իրականացման, էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման գործունեությունները, ինչպես նաև էներգետիկական շուկային ծառայություններ մատուցելու գործունեությունները կարող են իրականացվել միայն Հանձնաժողովի կողմից տրված համապատասխան գործունեության լիցենզիաների արկայության դեպքում: Էլեկտրական և ջերմային էներգիայի, բնական գազի առուվաճառք իրականացնել (վաճառքի նպատակով գնել) կարող են միայն սույն օրենքին համապատասխան գործունեության լիցենզիա ունեցող անձինք՝ լիցենզիայի պայմանների և շուկայի կանոնների համաձայն:

2. Սույն հոդվածով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունների էությունը կազմող գործառույթները սահմանվում են համապատասխան գործունեության լիցենզիաներով:

Կարգավորման ենթակա չեն

- ա) բացառապես սեփական կարիքների համար ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները,
- բ) ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները, եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5.8 ՄՎտ,
- գ) մինչև 150 կՎտ (ներառյալ) հզորությամբ արևային էլեկտրակայանների արտադրության գործունեությունը՝ կառուցման ժամանակահատվածում,
- դ) բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության, ինչպես նաև դիզել-գեներատորային կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը,
- ե) բացառապես սեփական կարիքների համար, ինչպես նաև մինչև 150 կՎտ դրվածքային հզորությամբ ինքնավար արտադրողների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ արտադրության ժամանակահատվածում:

3. Լիցենզիայի գործողության ժամկետը և գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ և ամբարձրում լիցենզիայում:

(17-րդ հոդվածը փոփ., լրաց. 06.12.2006 չՕ-8, փոփ., խմբ. 28.09.2017 չՕ-28-Ն)

Հոդված 18. Գործունեության լիցենզիա ստանալու պայմանները

1. Գործունեության լիցենզիա ստանալու համար Հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի ցանկը և ձևերը սահմանում է Հանձնաժողովը:

2. Գործունեության լիցենզիա տրվում է, եթե նման հայտով Հանձնաժողով դիմած իրավաբանական անձը սեփականության իրավունքով կամ պայմանագրով իր տնօրինության տակ ունի անհրաժեշտ գույք:

3. Գործունեության լիցենզիա ստանալու վերաբերյալ հայտի քննարկման և գործունեության լիցենզիայի տրման կարգն ու պայմանները սահմանում է Հանձնաժողովը:

4. Սկսած դիմողի կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Հանձնաժողով ներկայացնելու պահից՝ Հանձնաժողովը սահմանված ժամկետում, որի տևողությունը չպետք է գերազանցի 80 աշխատանքային օրը (փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների դեպքում՝ 25 աշխատանքային օրը), քննարկում է լիցենզիա ստանալու վերաբերյալ դիմումը և ընդունում համապատասխան որոշում:

5. Հանձնաժողովը լիցենզիա տալու կամ մերժելու վերաբերյալ որոշման պատճենը ուղարկում է դիմողին՝ որոշումն ընդունելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

(18-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8, փոփ. 28.09.2017 ՀՕ-28-Ն)

Հոդված 19. Գործունեության լիցենզիայի պայմանները

Գործունեության լիցենզիայի պայմանները սահմանում է Հանձնաժողովը:

(19-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հոդված 20. Գործունեության լիցենզիա տրամադրելու երաշխիքները

Էլեկտրական էներգիայի ներկրման, արտահանման, էլեկտրական կամ ջերմային էներգիայի (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) արտադրության, բնական գազի ներկրման լիցենզիա տրամադրելու համար համապատասխան գործունեության լիցենզիա ստանալու հայտ ներկայացնողներից Հանձնաժողովը պահանջում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը չհակասող երաշխիքներ: Երաշխիքների չափերի հաշվարկման սկզբունքներն ու ներկայացման կարգը սահմանում է Հանձնաժողովը: Էլեկտրական կամ ջերմային էներգիայի (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) արտադրության լիցենզիա տրամադրելու համար Հանձնաժողովի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը չհակասող երաշխիքների ներկայացման պահանջը տարածվում է էլեկտրական կամ ջերմային էներգիայի (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված) կայանների կառուցման ժամանակահատվածի վրա:

(20-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8, փոփ., լրաց. 28.09.2017 ՀՕ-28-Ն)

Հոդված 21. Գործունեության լիցենզիա ունեցող անձանց սեփականության իրավունքի սահմանափակումը

1. Լիցենզիա ունեցող որևէ անձ առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր կամ միավորվել լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

2. Գործունեության լիցենզիա ունեցող որևէ անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերել նույն կամ մեկ այլ գործունեության լիցենզիա ունեցող անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր:

3. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, արտադրական հզորություններ, գործող էներգատեղակայանքներ և զծեր) վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու համար լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ համաձայնություն ստանալու նպատակով:

4. Փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքներն իրականացնում են առանց Հանձնաժողովի թույլտվության (համաձայնության), եթե այդ անձինք էներգետիկայի բնագավառում չունեն գործունեության այլ տեսակի լիցենզիա կամ այլ կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա: Փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքների իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնում են Հանձնաժողովին:

(21-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8, լրաց. 28.09.2017 ՀՕ-28-Ն)

Հոդված 22. Գործունեության լիցենզիա ունեցող անձի պարտականությունները

1. Գործունեության լիցենզիա ունեցող անձը պարտավոր է՝
ա) իր գործունեությունն իրականացնել սույն օրենքին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը, այլ իրավական ակտերին, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերին ու գործունեության լիցենզիայում նախատեսված պայմաններին համապատասխան:

բ) Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել անվտանգության և բնապահպանության նորմերի պահանջների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը:

գ) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագոր-

ծումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը.

- դ) ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և գործունեության լիցենզիայում նախատեսված պայմաններին.
- ե) ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների էներգատեղակայանքների և գծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար.
- զ) բնակչությանն իրազեկ պահել անվտանգության տեխնիկայի կանոններին, այլ նորմերով սահմանված կողմերի իրավունքներին և պարտականություններին, որոնք առաջվում են գործունեության լիցենզիային և պայմանագրերին.
- է) լիցենզիայի պայմաններին համապատասխան իրականացնել տեխնիկական (ներառյալ տեխնոլոգիական կորուստների, վառելիքի տեսակարար ծախսի, սեփական կարիքների համար անհրաժեշտ էներգիայի կամ բնական գազի ծախսի և այլն) և (կամ) ֆինանսական աուդիտ՝ անկախ փորձագետների ներգրավմամբ.
- ը) սահմանված կարգով Հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել զարգացման ներդրումային ծրագրերը՝ սակագներում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով.
- թ) Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել տեխնոլոգիական անխուսափելի կորուստների, վառելիքի տեսակարար ծախսերի, սեփական կարիքների համար օգտագործվող էներգիայի, բնական գազի և սակագնի տարր կազմող այլ մեծությունների հաշվարկման մեթոդիկաները.
- ժ) իրականացնել սույն օրենքով ամրագրված մյուս պարտավորությունները:

2. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:
(22-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հոդված 23. Լիցենզավորված անձի հաշվետվությունները

Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով:

(23-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հողված 24. Գործունեության լիցենզիայում փոփոխություններ կատարելու կարգը

1. Գործունեության լիցենզիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ լիցենզիա ունեցող անձի դիմումի ընդունումը և քննարկումը կատարվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

2. Հանձնաժողովի նախաձեռնությամբ գործունեության լիցենզիայի փոփոխությունները կատարվում են գործունեության լիցենզիա ունեցող անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների պատշաճ կատարումն ապահովելու համար:

3. Հանձնաժողովի նախաձեռնությամբ լիցենզիայում կատարված փոփոխությունների հետևանքով լիցենզավորված անձի կրած վնասները փոխհատուցվում են սակագնով:

(24-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հողված 25. Լիցենզավորված անձանց էներգատեղակայանքների տեխնիկական վերահսկողությունը

Լիցենզավորված անձանց էներգատեղակայանքների կառուցման, գործարկման և շահագործման ընթացքում տեխնիկական վերահսկողությունն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

Հողված 26. Էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման լիցենզիաները

1. Էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման լիցենզիա ունեցող անձն իրավունք ունի էլեկտրական էներգիա (հզորություն) ներկրել և վաճառել շուկայի կանոններին ու լիցենզիայի պայմաններին և պայմանագրերին համապատասխան:

2. Բնական գազի ներկրման լիցենզիա ունեցող անձն ունի բնական գազ ներկրման և փոխադրման լիցենզիա ունեցող անձանց և (կամ) բնական գազի բաշխման լիցենզիա ունեցող անձանց և (կամ) անմիջապես սպառողին դա վաճառելու իրավունք՝ համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված կարգի:

(26-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հողված 27. Էլեկտրական էներգիայի արտահանման լիցենզիաները

1. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիա ունեցող անձին տրվում է էլեկտրական էներգիա (հզորություն) գնելու և (կամ) իր արտադրած էլեկտրական էներգիան (հզորությունը) շուկայի կանոններին և լիցենզիայի պայմաններին համապատասխան արտահանելու իրավունք: Էլեկտրա-

կան էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիա տրվում է միայն ներքին շուկայի հազվեցվածության դեպքում, երբ էլեկտրաէներգիայի արտահանումը չի հակասում ներքին շուկայի սպառողների շահերին:

2. Արտահանվող էլեկտրաէներգիայի (հզորության) գները չեն կարգավորվում:
(27-րդ հոդվածը խմբ. 28.09.2017 ՀՕ-28-Ն)

Հոդված 28. Արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիաները

(28-րդ հոդվածն ուժը կորցրել է 28.09.2017 ՀՕ-28-Ն)

Հոդված 29. Արտադրության լիցենզիաները

1. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում էլեկտրական էներգիա արտադրող կայան (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայան) կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու և շուկայի կանոններով դա վաճառելու իրավունք: Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձի համար սակագինը սահմանվում է կայանի կառուցման ավարտից հետո:

2. Ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում ջերմային էներգիա արտադրող կայան կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), ջերմային էներգիա արտադրելու և Հանձնաժողովի սահմանած կարգով դա վաճառելու իրավունք: Ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի համար սակագինը սահմանվում է կայանի կառուցման ավարտից հետո:

3. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձանց, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և շուկայի այլ մասնակիցների փոխհարաբերությունները կարգավորվում են շուկայի կանոններով և պայմանագրերով:

4. Սույն հոդվածով սահմանված լիցենզիաները տրվում են՝ հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի զարգացման հեռանկարային ծրագրերը, տեղական պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը և ներքին շուկայի սպառողների շահերի պաշտպանությունը:
(29-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8, խմբ. 28.09.2017 ՀՕ-28-Ն)

Հոդված 30. Հաղորդման (փոխադրման) լիցենզիաները

1. Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձին տրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման ծառայություն իրականաց-

նելու, էլեկտրական էներգիայի հաղորդման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքով երրորդ երկրներ էլեկտրական էներգիա (հզորություն) տարանցելու իրավունք: Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել շուկայի կանոններին և պայմանագրերին համապատասխան:

2. Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձանց, համակարգի օպերատորի և շուկայի մասնակիցների փոխհարաբերությունները կարգավորվում են շուկայի կանոններով և պայմանագրերով:

3. Բնական գազի փոխադրման լիցենզիա ունեցող անձին տրվում է Հանձնաժողովի սահմանած կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում բնական գազի փոխադրման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), բնական գազ փոխադրելու, արտադրողից (արդյունահանողից) կամ ներկրողից բնական գազ գնելու, քաշխման, արտահանման լիցենզիա ունեցող անձանց կամ անմիջապես սպառողին բնական գազ վաճառելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքով երրորդ երկրներ բնական գազ տարանցելու իրավունք:

4. Ջերմային էներգիայի փոխադրման լիցենզիա ունեցող անձին տրվում է Հանձնաժողովի սահմանած կարգով լիցենզիայով սահմանված տարածքում ջերմային էներգիայի փոխադրման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), արտադրողից ջերմային էներգիա ստանալու կամ գնելու, քաշխման լիցենզիա ունեցող անձանց առաքելու կամ անմիջապես սպառողին ջերմային էներգիա վաճառելու և կարգավարական ծառայություն իրականացնելու իրավունք: Ջերմային էներգիայի փոխադրման գործունեության իրավունքը, պայմանավորված ջերմային էներգիայի առաքման տեխնոլոգիայով, կարող է տրվել ջերմային էներգիայի արտադրության կամ քաշխման լիցենզիա ունեցող անձին միննույն լիցենզիայով:

(30-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8, խմբ. 28.09.2017 ՀՕ-28-Ն)

Հոդված 31. Համակարգի օպերատորի լիցենզիան

1. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձին տրվում են՝

- էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ տեխնոլոգիական և տնտեսական կարգավարման,
- էլեկտրաէներգետիկական համակարգի (արտադրության, ներկրման, արտահանման և տարանցման) գործառույթների՝ ըստ կնքված պայմանագրերի համակարգային պլանավորման ու կորոլիկացման,
- էլեկտրաէներգետիկական համակարգում համաձայն լիցենզիայի պայմանների և շուկայի կանոնների, համակարգային նշանակության կառավարման և պաշտպանության սարքերի նախադրվածքների հաշվարկման, դրանք լիցենզավորված անձանց առաջադրման և դրանց աշխատանքի հսկման,

- տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի զուգահեռ աշխատանքի ապահովման բացառիկ իրավունքներ:

2. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը, հիմք ընդունելով տեխնիկական կանոնակարգերի պահանջները և համագործակցելով գործունեության լիցենզիա ունեցող անձանց հետ, մշակում է համակարգի անվտանգության և հուսալիության ցուցանիշները, որոնք հաստատում են Հանձնաժողովը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմինը:

3. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը պլանավորման, կոորդինացման և կարգավարման գործընթացներում ապահովում է էներգետիկական շուկայի կանոններում ամրագրված համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշները:

4. Գազամատակարարման համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձին տրվում են բնական գազի ներկրման, փոխադրման (ներառյալ՝ պահեստավորման) և տարանցման օպերատիվ տեխնոլոգիական կարգավարման բացառիկ իրավունքներ:

5. Գազամատակարարման համակարգի օպերատորը պլանավորման, կոորդինացման և կարգավարման գործընթացներում պետք է լիցենզիայի պայմաններին համապատասխան ապահովի բնական գազի ներկրման, փոխադրման (ներառյալ՝ պահեստավորման) և տարանցման հուսալիությունն ու անվտանգությունը:

(31-րդ հոդվածը լրաց, փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հոդված 32. Բաշխման լիցենզիաները

1. Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձն ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության որոշակի տարածքում սպառողներին էլեկտրական էներգիա (հզորություն) բաշխելու բացառիկ իրավունք, ինչպես նաև էլեկտրական էներգիայի բաշխման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), շուկայի կանոններին և լիցենզիայի պայմաններին համապատասխան՝ էլեկտրական էներգիա (հզորություն) գնելու և վաճառելու իրավունք: Բացառություն կարող են կազմել միայն սույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերը:

2. Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձանց, համակարգի օպերատորի և շուկայի այլ մասնակիցների փոխհարաբերությունները կարգավորվում են շուկայի կանոններով և պայմանագրերով:

3. Բնական գազի բաշխման լիցենզիա ունեցող անձին տրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության որոշակի տարածքում սպառողներին բնական գազ բաշխելու բացառիկ իրավունք, ինչպես նաև բաշխման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), Հանձնաժողովի սահմանած կարգով բնական գազ գնելու և վաճառելու իրավունք: Բացառություն կարող են կազմել միայն սույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերը:

4. Ջերմային էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում սպառողներին ջերմային էներգիա բաշխելու իրավունք, ինչպես նաև ջերմային էներգիայի բաշխման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու), Հանձնաժողովի սահմանած կարգով ջերմային էներգիա գնելու և վաճառելու իրավունք: Բացառություն կարող են կազմել միայն սույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերը:

(32-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՂՕ-8, խմբ. 28.09.2017 ՂՕ-28-Ն)

Հոդված 33. Էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիաները

1. Էլեկտրաէներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների կազմը և լիցենզավորման ենթակա գործունեությունների տեսակները սահմանում է Հանձնաժողովը և տալիս համապատասխան լիցենզիաներ:

2. Էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձինք ստանում են լիցենզիայում նշված ժամկետում տվյալ գործունեության իրականացման բացառիկ իրավունք:

(33-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՂՕ-8)

Գ Լ ՈՒ Խ 6

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ, ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Հոդված 34. Պայմանագրերը և դրանց գրանցումը

1. Լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև արտահանման և ներկրման պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից: Պայմանագրերի գրանցման կամ մերժման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 10 աշխատանքային օրը, իսկ փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված այլ անձանց միջև կնքվող պայմանագրերի գրանցման կամ մերժման ժամկետը՝ 5 աշխատանքային օրը:

(34-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՂՕ-8, խմբ. 28.09.2017 ՂՕ-28-Ն)

Հոդված 35. Սպառողների մատակարարման պայմանագրերը և պատասխանատվությունը պարտավորությունների խախտման համար

1. Սպառողին էլեկտրական, ջերմային էներգիայի կամ բնական գազի մատակարարումը (ծառայությունների մատուցումը) կատարվում է մատակարարման պայմանագրի համաձայն, որով մատակարարը պարտավորվում է այդ պայմանագրով, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով մատակարարել էներգիա, բնական գազ, իսկ սպառողը՝ ընդունել դա և վճարել դրա համար:

2. Ըներգամատակարարման և գազամատակարարման պայմանագրերով սահմանվում են մատակարարման (սպառման) պայմաններն օրենքներին, այլ իրավական ակտերին և մատակարարման ու օգտագործման կանոններին համապատասխան:

3. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով հասցված վնասը փոխհատուցվում է խախտողի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: Պայմանագրերի կատարման հսկողությունն իրականացնում են միայն պայմանագրային կողմերը:

4. Մատակարարման պայմանագրով սահմանված կարգով մատակարարը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել Ըներգամատակարարումից (գազամատակարարումից), եթե սպառողը՝

- ա) իր պատասխանատվության տակ գտնվող էներգիան կամ բնական գազը սպառել է հաշվառքի սարքի միտումնավոր խախտումներով, որոնք հանգեցրել են հաշվառվող էներգիայի կամ բնական գազի քանակության նվազեցման.
- բ) էներգիան և (կամ) բնական գազը ծախսվել են առանց մատակարարման պայմանագրում գրանցված հաշվառքի սարքի կամ հաշվառքի սարքի շրջանցումով:

5. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել բաժանորդի էլեկտրական, ջերմային էներգիայի կամ բնական գազի մատակարարումը, եթե վճարումները Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում չեն կատարվում: Նախքան սպառողի Ըներգամատակարարման և (կամ) գազամատակարարման դադարեցումը մատակարարը պարտավոր է կիրառել Հանձնաժողովի սահմանած բոլոր նախազգուշական միջոցները:

6. Մատակարարը վերականգնում է խախտումներ թույլ տված սպառողի մատակարարումը՝ սպառողի կողմից վնասը փոխհատուցելուց կամ իր համար ընդունելի պայմաններով սպառողից վնասի փոխհատուցման երաշխիքներ ստանալուց հետո:

7. Եթե սպառողը էներգիան և (կամ) բնական գազն սպառում է առանց պայմանագրի (ապօրինի սպառում), ապա մատակարարն անմիջապես դադարեցնում է էներգիայի (բնական գազի) ապօրինի սպառումը և պահանջում վնասի փոխհատուցում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(35-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Գ Լ ՈՒ Խ 7

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 36. Տուժանքները

1. Գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից սույն օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, գործունեության լիցեն-

զիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

ա) նախազգուշացում.

բ) սույն օրենքով սահմանված տուգանքներ.

գ) լիցենզիայի գործողության կասեցում.

դ) լիցենզիայի գործողության դադարեցում:

2. Նախազգուշացումը որպես տուժանք կարող է կիրառվել սույն օրենքի դրույթների, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, գործունեության լիցենզիայի պայմանների ցանկացած խախտման դեպքում:

3. Լիցենզավորված անձանց կողմից՝

ա) սույն օրենքի դրույթների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնչորսհազարապատիկից մինչև քսանութհազարապատիկի չափով.

բ) Հանձնաժողովի կողմից տրված գործունեության լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհազարապատիկից մինչև տասնչորսհազարապատիկի չափով.

գ) Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեք հազար հինգհարյուրապատիկից մինչև յոթհազարապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված տուգանքների չափերը (մեծությունները) չեն տարածվում էլեկտրական (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված) կամ ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց վրա՝ կայանների կառուցման համար նախատեսված ժամանակահատվածում, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, գազամատակարարման համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձանց և մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորություն ունեցող էներգիայի վերականգնվող աղբյուրների (այդ թվում՝ փոքր հիդրոէլեկտրակայանների) կիրառմամբ էլեկտրական էներգիա արտադրող լիցենզավորված անձանց վրա:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված լիցենզավորված անձանց կողմից՝

ա) սույն օրենքի դրույթների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից մինչև հազար չորսհարյուրապատիկի չափով.

բ) Հանձնաժողովի կողմից տրված գործունեության լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեք հարյուր հիսունապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով.

գ) Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվա-

զագույն աշխատավարձի հարյուր յոթանասուներեք հազար հինգսուն հարյուր հիսուն ապատիկից մինչև երեք հարյուր հիսուն ապատիկի չափով:

6. Սույն օրենքով սահմանված տուգանքները կարող են կիրառվել, եթե լիցենզավորված անձի կատարած խախտման հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունն ու հուսալիությունը, կամ խախտվել են սպառողի իրավունքներն ու օրինական շահերը, կամ կատարված խախտումը հանգեցրել է այլ լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը, կամ խոչընդոտել է Հանձնաժողովի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը, կամ կատարվել է դիտավորությամբ, կամ նախորդ խախտման պահից մեկ տարվա ընթացքում լիցենզավորված անձի կատարած երկրորդ կամ ավելի խախտումն է, կամ կրում է տևական կամ շարունակական բնույթ:

7. Սույն հոդվածի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված տուգանքների գումարները Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետում փոխանցվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե:

8. Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողովի նիստում արտահայտելու իր կարծիքը, ներկայացնելու առաջարկություններ և առարկություններ կիրառվելիք տուժանքների վերաբերյալ:

(36-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՂՕ-8, խմբ. 30.11.2011 ՂՕ-73-Ն, փոփ. 28.09.2017 ՂՕ-28-Ն)

Հոդված 37. Հանձնաժողովի իրավական ակտերի բողոքարկումը

(37-րդ հոդվածն ուժը կորցրել է 05.09.2007 ՂՕ-71)

Գ Լ ՈՒ Խ 8

ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 38. Սպառողների էներգամատակարարումը

1. Բաշխման գործունեության լիցենզիա ունեցող անձը պարտավոր է էներգիա և բնական գազ մատակարարել բաշխման տարածքում գտնվող յուրաքանչյուր սպառողի, որը բավարարում է Հանձնաժողովի կողմից հաստատված մատակարարման և օգտագործման կանոնների պահանջները:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության ապահովման համար կարևոր պաշտպանական նշանակություն ունեցող ռազմական օբյեկտների համար Հանձնաժողովի կողմից կարող են նախատեսվել էներգիայով և բնական գազով սնման կազմակերպման առանձին տարբերակներ: Այդպիսի օբյեկտների ցանկը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

3. Մատակարարման հարաբերություններում սպառողների իրավունքները և շահերը պաշտպանվում են սույն օրենքով և Լեռնային Ղարաբաղի Հանրապե-

տության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սպառողների՝ սույն օրենքով չկարգավորված եներգամատակարարման հարաբերությունները կարգավորվում են եներգամատակարարման մասին այլ իրավական ակտերով և Հանձնաժողովի որոշումներով:

(38-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հոդված 39. Ենթասպառողի եներգամատակարարումը

Սպառողը պարտավոր է եներգամատակարարող ընկերության հետ կնքված պայմանագրով, տեխնիկական պայմաններին համապատասխան և Հանձնաժողովի սահմանած մեթոդիկայով հաշվարկված ծառայության մատուցման վճարների չափով, իր եներգատեղակայանքներով հաղորդել մատակարարի եներգիան կամ բնական գազը, որը նախատեսված է այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար: Սպառողների, ենթասպառողների և մատակարարի փոխհարաբերությունները կանոնակարգվում են մատակարարման և օգտագործման կանոններով:

(39-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հոդված 40. Էներգամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակները

1. Լիցենզիա ունեցող անձինք Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով մշակում են էլեկտրական, ջերմային եներգիայի և բնական գազի մատակարարման անխուսափելի սահմանափակումների հանգեցնող պայմաններում իրականացվելիք գործողությունների ծրագրեր, որոնք պետք է արտացոլեն նաև որոշակի սպառողների եներգամատակարարման առաջնահերթության պայմանները: Նման սպառողների ցանկը ամեն տարի՝ մինչև հոկտեմբերի 1-ը, սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից նոր ցանկը չսահմանվելու դեպքում կիրառվում է նախորդ տարվա ցանկը: Այդ ծրագրերը քննարկվում և հաստատվում են համատեղ՝ պետական մարմնի և Հանձնաժողովի կողմից:

2. Էներգամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում լիցենզիա ունեցող անձինք պարտավոր են հետևել և կատարել հաստատված ծրագրերում նշված միջոցառումները և համագործակցել պետական մարմնի, Հանձնաժողովի և կառավարման ու ինքնակառավարման տեղական մարմինների հետ՝ բոլոր սպառողներին տեղեկացնելով եներգիայի մատակարարման սահմանափակումների չափերի և տևողության մասին:

(40-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հոդված 41. Արտակարգ իրավիճակները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով հայտարարված արտակարգ իրավիճակներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունն իրավասու է անհրաժեշտ գործո-

դուրյուններ ձեռնարկել էներգետիկայի բնագավառի կառավարման և (կամ) գործունեության կանոնակարգման համար:

**Հոդված 42. Նոր կամ վերակառուցվող սպառողի կայանքների միացումը
էլեկտրական, ջերմային կամ բնական գազի ցանցերին**

1. Նոր կամ վերակառուցվող սպառողների կայանքների միացման տեխնիկական պայմանները բաշխման ցանցերին կամ այլ սպառողների տեղակայանքներին առաջադրում է բաշխման գործունեության լիցենզիա ունեցող անձը, իսկ լրացուցիչ պայմանները՝ այն անձը, որի տեղակայանքներին միացվում է նոր կամ վերակառուցվող անձի կայանքները: Սպառողների բոլոր միացումները, ներառյալ՝ անհրաժեշտ նոր շինարարությունը կամ էներգատեղակայանքների վերագինումը, կատարվում են մատակարարման և օգտագործման կանոնների համաձայն:

2. Նոր սպառողի միացման տեխնիկական պայմանները համաձայնեցվում են սպառողի հետ:

3. Նոր սպառողի հաշվառքի սարքի ձեռքբերման և տեղադրման ծախսերը կրում է լիցենզավորված անձը, եթե մատակարարման և օգտագործման կանոններով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4. Տեխնիկական պայմանների (միացման պայմանագրի) տրման՝ սույն օրենքով չկանոնակարգված հարցերը կարգավորվում են մատակարարման և օգտագործման կանոններով:

Հոդված 43. Սպառողների շահերի պաշտպանության երաշխիքները

1. Լիցենզիայից կամավոր հրաժարվելու կամ անձին լիցենզիայից զրկելու դեպքերում սպառողների անխափան մատակարարումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը, մինչև գործունեության նոր լիցենզիա տալը, իրավունք ունի համապատասխան որոշմամբ պարտադրել լիցենզիայից կամավոր հրաժարված կամ զրկված անձին ժամանակավորապես շարունակել իր գործունեությունը՝ Հանձնաժողովի սահմանած պայմաններին և դրույթներին համապատասխան: Այդ որոշումը չկատարելու դեպքում կիրառվում են սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները:

2. Հանձնաժողովը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները նոր լիցենզիա տալու գործընթացն արագացնելու համար: Լիցենզիայից զրկված անձը սահմանված պայմանները բավարարելու դեպքում իրավունք ունի ընդհանուր հիմունքներով դիմել Հանձնաժողով՝ նոր լիցենզիա ստանալու համար:

3. Եթե լիցենզիայից զրկված անձը չի բավարարում գործունեության նոր լիցենզիա ստանալու անհրաժեշտ պայմանները կամ հրաժարվում է նոր լիցենզիա ստանալու իրավունքից, ապա նա օտարում է լիցենզավորված գործունեությունն ապահովող իր սեփականությունը հանդիսացող գույքային համալիրը, կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը գործունեության լիցենզիայից զրկված անձի բաժնետերերին առաջարկում է իր հետ հա-

մաձայնեցված կարգով օտարել այդ ընկերության բաժնետոմսերը: Լիցենզիայից զրկված անձի՝ գործունեության նոր լիցենզիա ստանալու պայմանները չբավարարելու և իր սեփականությունը կազմող լիցենզավորված գործունեության իրականացումն ապահովող գույքային համալիրը չօտարելու դեպքում, որպես բացառիկ միջոց, այդ գույքը կարող է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարվել պետության և հասարակության կարիքների համար՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ: Գույքի օտարման ընթացքում սպառողների շահերի պաշտպանության նպատակով Հանձնաժողովը նշանակում է գործունեության լիցենզիայից զրկված անձի գույքի ժամանակավոր կառավարիչ:

(43-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հոդված 44. Էլեկտրաէներգիայի հաղորդման, բնական գազի փոխադրման և (կամ) բաշխման ցանցեր մուտք գործելու իրավունքը

1. Արտադրության և ներկրման լիցենզիա ունեցող անձանց մուտքը հաղորդման (փոխադրման) և բաշխման ցանց իրականացվում է շուկայի կանոններով սահմանված կարգով:

2. Հաղորդման (փոխադրման), բաշխման լիցենզիա ունեցող անձինք պարտավոր են պայմանագրերի հիման վրա իրենց ցանցերով հաղորդել (փոխադրել), բաշխել այլ լիցենզավորված անձանց կամ սպառողի էլեկտրական էներգիան (բնական գազը)՝ Հանձնաժողովի սահմանած սակագնով, եթե հաղորդումը (փոխադրումը) և (կամ) բաշխումը չի վատթարացնում համակարգի հուսալիության և անվտանգության հաստատված ցուցանիշները և համապատասխանում է տեխնիկական կանոնակարգերի պահանջներին:

(44-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հոդված 45. Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաշվառումը

Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաշվառումը կատարվում է տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջները և Հանձնաժողովի հետ համաձայնեցված պայմանները բավարարող հաշվառքի սարքերով և (կամ) Հանձնաժողովի հաստատած հաշվարկային մեթոդների կիրառմամբ:

(45-րդ հոդվածը փոփ. 06.12.2006 ՀՕ-8)

Հոդված 46. Լիցենզավորված անձանց միջև ծագած տարաձայնությունները

1. Լիցենզավորված անձանց միջև ծագած տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դիմել Հանձնաժողով՝ վերջինիս իրավասությունների շրջանակում վիճարկվող հարցերը լուծելու խնդրանքով:

2. Սույն հոդվածը չի սահմանափակում վեճերը դատական կարգով լուծելու կողմերի իրավունքը:

Հոդված 47. Էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիները

1. Էներգետիկայի բնագավառի օբյեկտներն ապահովվում են անվտանգության գոտիներով:

2. Էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիների չափերը և դրանց օգտագործման կարգը սահմանում է կառավարությունը:

3. Էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիներում արգելվում է իրականացնել որևէ գործունեություն, որը կարող է սպառնալ օբյեկտների բնականոն աշխատանքին, քաղաքացիների և շահագործող անձնակազմի կյանքին ու առողջությանը, գույքի պահպանությանը՝ ըստ տեխնիկական կանոնակարգերի:

4. Էներգետիկայի բնագավառի օբյեկտների էներգատեղակայանքների անվտանգության գոտիներում արգելվում է՝

ա) կատարել հողային աշխատանքներ՝ առանց էներգատեղակայանքների սեփականատիրոջ կամ տնօրինող անձի թույլտվության.

բ) կառուցել շենքեր, կառույցներ, շինություններ, իրականացնել այնպիսի գործունեություն, որն անհնար է դարձնում կամ դժվարացնում է էներգատեղակայանքների սպասարկումը կամ սպառում է դրանց անվտանգությանն ու հուսալիությանը:

5. Էներգետիկայի և այլ բնագավառների համակարգերի փոխհատվող սարքավորումների (ինժեներական կառույցներ, հաղորդագծեր) սեփականատերերը պարտավոր են համագործակցել՝ դրանց անվտանգությունը, հուսալիությունը և բնականոն գործունեությունն ապահովելու համար:

Գ Լ ՈՒ Խ 9

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Հոդված 48. Միջազգային պայմանագրերը

Եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Գ Լ ՈՒ Խ 10

ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 49. Սույն օրենքին չհամապատասխանող կամ հակասող ակտերը

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ընդունված, օրենքի ուժ չունեցող այլ

իրավական ակտերը գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:

Հոդված 50. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից էլեկտրաէներգետիկական համալարգում գործում են հետևյալ սահմանափակումները.

ա) երեք տարվա ընթացքում Հանձնաժողովն իրավունք ունի սահմանել ներքին սպառման համար էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության և ներքին շուկայի համար գնման պարտադիր տարեկան քվոտաներ, որոնցով սահմանափակվում (արգելվում) է արտադրության առավել ցածր սակագին ունեցող արտադրող կայաններից էլեկտրաէներգիայի արտահանումը տարածաշրջանային շուկա.

բ) բաշխման լիցենզիա ունեցող անձին հինգ տարի ժամկետով տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում սպառողներին էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի բացառիկ իրավունք (բացառություն կարող են կազմել միայն սույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերը).

գ) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձի համար Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից 15 տարվա ընթացքում փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից և էներգիայի վերականգնվող այլ ռեսուրսների (հողմային, արեգակնային, երկրաջերմային և կենսազանգվածի) կիրառմամբ էլեկտրակայանների կողմից 20 տարվա ընթացքում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան (հզորությունը) ենթակա է գնման՝ շուկայի կանոններով սահմանված կարգով:

Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայից զրկված անձի կողմից սույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն նոր լիցենզիա ստանալու դեպքում սույն ենթակետով նախատեսված ժամկետը հաշվարկվում է էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության առաջին լիցենզիայի ուժի մեջ մտնելու պահից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը՝

ա) 6-ամսյա ժամկետում ընդունում է համապատասխան որոշումներ, որոնք կանոնակարգում են հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության համար անհրաժեշտ ջրի հաշվարկային քանակի երկարաժամկետ ապահովման երաշխիքների տրամադրումը.

բ) մեկ տարվա ընթացքում Ազգային ժողով է ներկայացնում սույն օրենքի 25-րդ հոդվածին համապատասխան օրենքի նախագիծ:

3. Սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անվտանգության և բնապահպանության նորմերի պահանջների կատարմանն ուղղված միջոցառումները լիցենզավորված անձինք իրականացնում են Հանձնաժողովի հաստատած փուլային ծրագրով և ժամանակացույցով: Հաստատված ծրագրի իրականացման ընթացքում դրանցում ներառված տեխնիկական կանոնակարգերով սահման-

ված նորմերի պահանջներից շեղումները չեն համարվում այդ նորմերի խախտումներ:

4. Էլեկտրաէներգետիկական շուկայի կանոնները և դրանց կիրարկումն ապահովող իրավական ակտերը Հանձնաժողովի կողմից մշակվում և ներդրվում են սույն օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում Հանձնաժողովը պարտավոր է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդունված որոշումները համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին, ինչպես նաև իրավունք ունի երեք տարվա ընթացքում իր կողմից սահմանված կարգով լրացումներ և փոփոխություններ կատարել նախկին օրենքի համաձայն տրված գործունեության լիցենզիաներում:

6. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 1999 թվականի դեկտեմբերի 29-ի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը:

(50-րդ հոդվածը փոփ., խմբ. 06.12.2006 ՀՕ-8, խմբ. 28.09.2017 ՀՕ-28-Ն)

Հոդված 51. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

30 նոյեմբերի 2002թ.
ք. Ստեփանակերտ
ՀՕ-6

Ինքնավար եներգաարտադրողի և էլեկտրաէներգիայի բաշխման
լիցենզիա ունեցող անձի միջև փոխհոսքերի կարգը

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար եներգաարտադրողի էլեկտրասպառման համակարգի անխափան աշխատանքի և գործունեության իրականացման անհրաժեշտ պայմաններն ապահովելու նպատակով էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձն ապահովում է էլեկտրական էներգիայի փոխհոսքերը:

1. Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար եներգաարտադրողի և էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի մատակարարած էլեկտրական էներգիայի դիմաց վճարման ենթակա գումարների հաշվարկը կատարվում է ամսական, իսկ վերջնահաշվարկը տարեկան կտրվածքով:
2. Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար եներգաարտադրողի և էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի էլեկտրական էներգիայի փոխհոսքերի շրջանակներում տարվա ընթացքում մատակարարած (հանձնած) էլեկտրական էներգիայի դիմաց հատուցում չի տրամադրվում այն ծավալի չափով, որը հավասար է տվյալ տարվա ընթացքում մյուս կողմից ստացված (հանձնված) էլեկտրական էներգիայի ծավալին (այսուհետ՝ հատուցման ոչ ենթակա ծավալ):

Տարվա արդյունքներով վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար եներգաարտադրողի կողմից հատուցման ոչ ենթակա էլեկտրաէներգիայի ծավալից ավելի առաքված էլեկտրաէներգիա ձեռք բերելը բաշխման լիցենզիա ունեցող անձը կատարում է՝

- 1) տվյալ սպառողական խմբի համար յուրաքանչյուր ամսվա համար Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից սահմանված սակագների 50 տոկոսի չափով, բացառությամբ սույն պարբերության 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի.
- 2) փոքր հիդրոէլեկտրակայանների դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից տվյալ խմբի (բնական ջրահոս, ռոտզման համակարգ, խմելու ջրատար) համար սահմանված գործող սակագնին հավասար.
- 3) արեգակնային և հողմային էներգիայի աղբյուրների կիրառմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայանների դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից արեգակնային էներգիայի աղբյուրի կիրառմամբ արդյունաբերական մասշտաբի էլեկտրակայանների համար սահմանված գործող սակագներից ամենացածր սակագնին հավասար՝

սույն մասի 1-ին կետով նախատեսված 50 տոկոսի չափից ցածր լինելու դեպքում:

Բաշխման լիցենզիա ունեցող անձի կողմից հատուցման ոչ ենթակա էլեկտրաէներգիայի ծավալից ավելի առաքված էլեկտրաէներգիա ձեռք բերելը վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողը կատարում է ամսական հաշվարկի արդյունքով մատակարարված էլեկտրական էներգիայի ծավալի և հատուցման ոչ ենթակա ծավալի դրական տարբերության հիման վրա, որի դիմաց ինքնավար արտադրողը վճարում է էլեկտրաէներգետիկական համակարգում տվյալ տարվա ընթացքում յուրաքանչյուր ամսվա համար տվյալ սպառողական խմբի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի սահմանած սակագներով:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի և էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի մատակարարած էլեկտրական էներգիայի դիմաց հատուցում տրամադրելու կարգը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը:

(Հավելվածը լրաց. 29.11.2018 ՇՕ-70-Ն)

ԱՂ-ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԷԿ-ԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԸՍՏ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

h/ h	Շահագործող ընկերության անվանումը	մուտքի վերաբերյալ կոդ	N մուտքի կոդ տարածքային տարածքի դիվիզիոնի կոդ	մուտքի վերաբերյալ կոդ	ՀԷԿ-ի անվանումը	Հիմնարկի բառային հարաբերակցությունը		Արտադրանքի արտադրող անվանումը	Միավոր վ-հ-ՎՊ	Գտնվելու վայրը
						Է	Վ			
1.	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ	N0001	20.03.2008թ N13Ա	20.03.2023թ	Սարսանգ	2	50	100		Մարտակերտի շրջանի Թարթառ գետի Սարսանգ ջրամբարի վրա
ՓՁԷԿ-ԵՐ										
1.	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ	N0004	11.06.2010թ N30Ա	11.06.2025թ	Թրղվա	3	3	16.5	ոռոգման համակարգ	Մարտակերտի շրջանի Թրղի գետից Սարսանգի ջրամբար տեղափոխվող մայր ջրատարի վրա
2.		N0005	26.12.2011թ N146Ա	26.12.2026թ	Թրղի-2	2	5,9	24,9	ոռոգման համակարգ	Մարտակերտի շրջանի Հաթերրի համայնքում
3.		N0005	24.07.2015թ N39Ա	24.07.2030թ	Թրղի-3	2	5,0	16,3	ոռոգման համակարգ	Մարտակերտի շրջանի Հաթերր համայն- քում՝ Սարսանգ ջրամբարի ձախակողմյան լանջի Թրղի գետից Սարսանգի ջրամբար տեղափոխվող մայր ջրատարի վրա
4.		N 0002	17.07.2012թ N58Ա	17.07.2027թ	Մատաղիս-1	3	4,8	22,4	բնական ջրահոսք	Մարտակերտի շրջանում Մատաղիս բնակավայրի մոտ
5.		N0003	17.07.2012թ N59Ա	1 7.07.2027թ	Մատաղիս-2	3	3	13	բնական ջրահոսք	Մարտակերտի շրջանում Մատաղիսի ոռոգման ջրամբարի մոտ
6.		N0003	18.05.2018թ. N27Ա	30.11.2033թ	Թրղի-4	2	0.8	3,4	բնական ջրահոսք	Մարտակերտի շրջ. հյուսիսում Միջնագետի և Ավագագետի միջին հոսանքն. և Թրղի ՓՁԷԿ-ների կասկադի գլխամասային հանգույցի տեղամասում
7.		N0009	12.12.2018թ. N66Ա	15.12.2033թ	Լև-1	2	7,562	37,435	բնական ջրահոսք	Շահումյանի շրջանի Չավինի բնակավայրի մոտ և գետի աջ ափին

8.	«Իգոտոպ Դելտա» ՍՊԸ	N0001	07.02.2011թ N6Ա	07.02.2026թ	Այուևիք-1	3	2,55	18,25	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջանի Աղավն համայնքում Ջաբուխ գետի վրա
9.	«Պրոտոն» ՓԲԸ	N0001	03.02.2012թ N11 Ա	03.02.2027թ	Սյուևիք-2	4	3,255	18,3	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջանի Միծեռնավանք համայնքում Ջաբուխ գետի վրա
10.	«Ալֆամագ» ՓԲԸ	N0001	18.03.2013թ N16Ա	18.03.2028թ	Այուևիք-3	4	1,728	13,9	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջանի Աղավն համայնքում Ջաբուխ գետի վրա
11.	«Նետրիկո» ՓԲԸ	N0002	28.06.2013թ N 43Ա	28.06.2028թ	Սյուևիք-4	4	2,4	17,09	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ համայնքում Աղավն գետի վրա
12.	«Իմաստ» ՍՊԸ	N0004	31.03.2015թ N17Ա	31.03.2030թ	ՀԱԿ	3	1,864	14,3	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջանի Հակ համայնքի տարածքում Աղավն գետի վրա
13.	«Մեգատոն» ՓԲԸ	N0007	07.08.2015թ N 47Ա	07.08.2030թ	Եղեգնուտ	2	2,86	11,24	բնական ջրահոսք	Շահումյանի շրջանի Եղեգնուտ համայնքի տարածքում Մայրան գետի վրա
14.	«Ջուր-Էներգիա» ՍՊԸ	N0006	07.08.2015թ N 46Ա	07.08.2030թ	Հոչանց	4	6,08	37,9	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջանի Հոչանց գետի աջափնյա հատվածում
15.	«Ծովինար-Նարեկ» ՍՊԸ	N0007	24.11. 2016թ N 46Ա	24.11.2031 թ	Այուևիք	1	0,055	0,475	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնքի Շրվական գյուղի տարածքում Սպիտակաջուր գետակի վրա
16.	«ՎԻՍԱՎՏ» ՍՊԸ	N0006	03.03.2017թ N 13Ա	30.03.2027թ	Ջերմաջուր	4	12,003	83,538	բնական ջրահոսք	Շահումյանի շրջանի Թարթառ գետի վրա
17.	«ՎԻԿԻԼՎ» ՍՊԸ	N0004	11.05. 2017թ N 26Ա	11.05.2032թ	Սյուևիք	2	1,813	12,125	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջանի Դողար գյուղի հարակից հատվածում Որոտան գետի ձախ վտակ Վարարակն գետի վրա
18.	«Կարչաս» ՍՊԸ	N0005	29.09.2017թ. N 47Ա	29.09.2031 թ	Աղավն-Կ	3	2,815	19,763	բնական ջրահոսք	ԱՀ Քաշաթաղի շրջ. Աղավն գետի վրա
19.	«ԼԵԿ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	N0002	05.03. 2018թ N 9Ա	05.03.2033թ	Աղավն	1	4,525	37,99	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջանի Միծեռնավանք և Մոշաթաղ համայնքների տարածքում Աղավն գետի վրա
20.	«Հիմնաքար» ՓԲԸ	N 0002	26.04.2018թ. N15Ա	26.06.2033թ	Բերդիկ	1	0,5	4,78	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջան, Մոշաթաղի համայնք Աղավն գետի Սնջուր աջ վտակ
21.	«Թարթառ Էներջի ինվեստ» ՍՊԸ	N0014	12.12.2018թ. N 162Ա	15.11.2033թ	Գետավան	4	10	50,4	բնական ջրահոսք	Մարտակերտի շրջանի Գետավան, Ջարդախաչ և Հաթերք համայնքների վարչ.տարածքներում Թարթառ գետի վրա

22.	«ԼԻՄԵՍՏՈՆ» ՍՊԸ	N0006	26.04.2019թ N32 Ա	25.12.2034թ	Եղեգևուտ 1	2	0,8	5,692	բնական ջրահոսք	ԱՀ Շահումյանի շրջան Նոր Գետաշեն համայնք, Թարթառ գետի ձախ վտակ Լև գետի վրա	
23.	«Ռիվեր Էներջի» ՍՊԸ	N 0011	26.06.2019թ N33Ա	26.06.2034թ	Ռիվեր Էներջի	1	4.0	31,67	բնական ջրահոսք	ԱՀ Շահումյանի շրջ. Մար համայնքի տարածքում, Թարթառ գետի վտակ Կարախան գետի վրա	
24.	«Տում-Հեկ» ՍՊԸ	N 0004	19.07.2019թ. N 42Ա	19.07.2034թ	Տում	1	1,00	6,271	բնական ջրահոսք	Հաղորտի շրջ. Մեծ Թաղեր համայնքում Իշխանագետի վրա	
25.	«Թարթառ Էներջի» ՍՊԸ	N 0006	19.07.2019թ N41 Ա	19.07.2034թ	Լև-2	1	4,186	24,16	բնական ջրահոսք	Շահումյանի շրջան, Եղեգևուտ և Նոր Գետաշեն համայնքների տարածք, Թարթառ գետի ձախակողմյան վտակ Լև գետի վրա	
26.	«ԷՆԵՐԳՈ - ՄԹԱՐ» ՓԲԸ	N 0007	19.07.2019թ. N43Ա	19.07.2034թ	Հոչանց-3	3	3,654	26,59	բնական ջրահոսք	ԱՀ Քաշաբաղի շրջանի Դրախտաձոր համայնքի տարածքում Հոչանց գետի վրա	
27.	«Էներգո Գրուպ» ՍՊԸ	N 0004	25.12.2019թ. N 66Ա	25.12.2034թ.	Կայծաղբյուր 2	2	11,152	55,78	բնական ջրահոսք	ԱՀ Քաշաբաղի շրջանի Շալուա և Դրախտաձոր համայնքներ, Հոչանց գետ	
28.	«Էլիտ Հիդրո» ՍՊԸ	N0008	25.12.2019թ. N68Ա	25.12.2034թ.	Էլիտ	2	13,034	70,5	բնական ջրահոսք	ԱՀ Շահումյանի շրջ. Քևարավան, Նոր Խարխափուտ և Նոր Կարաչխար համ., Թարթառ գետի ձախ վտակ Լև գետի վրա	
29.	«Իմաստ» ՍՊԸ	N 0005	25.12.2019թ. N65Ա	25.12.2034թ	ՀԱԿ-2	1	0.8	2,75	բնական ջրահոսք	ԱՀ Քաշաբաղի շրջանի, Մոշաթաղ համայնքի տարածքում, Աղավն գետի վրա	
30.	«Կոնտինենտ» ՍՊԸ	N 0009	25.12.2019թ. N 67Ա	25.12.2034թ	Հոչանց-1	1	5,76	43,46	բնական ջրահոսք	ԱՀ Քաշաբաղի շրջ. Մշենի և Հոչանց համայնքների տարածքում	
31.	«Հակարի» ՍՊԸ	N 0001	25.12.2019թ. N69Ա	25.12.2034թ	Հագարի-2	2	8,04	45,82	բնական ջրահոսք	ԱՀ Քաշաբաղի շրջանի Աղառուս և Շաղկաբերդ համայնքների տարածքում	
							134,936	786,679			
<i>Ընդամենը</i>							184,936	886,679			

ԱՀ-ՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՓՈՔԸ ՀԷԿ-ԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

h/h	Շահագործող ընկերության անվանումը	Լիցենզիայի գիայի համարը	Լիցենզիայի տրման ամսաթիվը և որոշման համարը	Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը	ՓՀԷԿ-ի անվանումը	Հյուղրագրե- զատների քանակը	Դրվածքային իզոբյուրն	Էլեկտրական էներգիայի միջին տարեկան արտադրանքը	ՓՀԷԿ-ի տիպը	Գտնվելու վայրը
							Մվտ	մյն կՎտ/ժ		
1.	«Սահման» ՍՊԸ	N0008	20.11.2017թ. N57Ա	18.08.2019թ. 01.1 0.2033թ	Սահման	2	0,371	2,45	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջանի Հակ համայնքի տարածքում Աղավնո գետի վրա
2.	«Մ Էներգո Լ» ՍՊԸ	N0012	12.12.2018թ. N50Ա	11.06.2020թ 1106.2035թ	Միություն	4	5.95	34,90	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջանում Աղավնո համայնքում Հագարի գետի աջափնյա հատված
3.	«Էներգո Գրուպ» ՍՊԸ	N0009	18.05.2018թ. N29Ա	18.05.2020թ 18.05.2035թ	Կայծաղբյուր 3	2	4,47	24,54	բնական ջրահոսք	ԼՂ Քաշաթաղի շրջանի Շալուա և Դրախտաձոր համայնքներ, Հոչանց գետ
4.	«Հոչանց» ՍՊԸ	N0009	31.08.2018թ. N43Ա	31.05.2020թ 31 05.2035թ	«ՀԱԿ-2»	1	0,342	2,96	բնական ջրահոսք	ԼՂ Քաշաթաղի շրջանի ՀԱԿ համայնքի տարածքում Աղավնո գետի վրա
5.	«Էներգո Գրուպ»ՍՊԸ	N0010	26.10.2018թ. N54Ա	26.10.2020թ 26.10.2035թ	Կայծաղբյուր 1	2	4,47	24,54	բնական ջրահոսք	ԼՂ Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնք, Հոչանց գետի վրա
6.	«Մոավ» ՍՊԸ	N0013	12.11.2018թ. N51Ա	27.09.2020թ 27.09.2035թ	«Մոավ»	2	2.4	11,2	բնական ջրահոսք	Շահումյանի շրջան, Եղեգ- նուտ համայնքի տարածք, Մայղան գետի վրա
7.	«ԱրցախՀԷԿ» ԲԲԸ	N0002	27.03.2019թ. N4Ա	30.09.2021թ 30.09.2036թ	Քարվաճառ	1	4,961	21,63	բնական ջրահոսք	Շահումյանի շրջան, Ծար համայնք, Թարթաղ գետի վրա

8.	«ԼԵՎԵԼԷՆԵԸՁԻ» ՍՊԸ	N0003	14.05.2019թ. N25Ա	14.05.2021թ 14.05.2036թ	Լուսին	2	3,5	24,972	բնական ջրահոսք	Քաշաթաղի շրջանի Ներքին Սուս համայնքի տարածքում Հակարի գետի վրա
9.	«ԷՆԵԸԸՁԻ ՍՏՐՈՑ» ՍՊԸ	N0007	19.07.2019թ. N 39Ա	14.02.2023թ 14.02.2038թ.	Գետաշեն	2	4,639	28,82	բնական ջրահոսք	Շահումյանի շրջանի Լոր Գետաշեն և Լոր Բրաջուր համայնքների վարչական տարածքներում՝ Թարթառ գետի վրա
10.	«Արմեն-Շին» ՍՊԸ	N0006	19.07.2019թ. N39Ա	04.09.2021թ. 04.09.2036թ.	Սպիտակաջուր	1	0,366	3,16	բնական ջրահոսք	ԱՀ Քաշաթաղի շրջանի, Լեռնահովիտ համայնքի Շրվական գյուղի տարածքում, Սպիտակաջուր գետի վրա
11.	«Ջեներալ ԷՆԵԸԸՁԻ» ՍՊԸ	N 0007	15.11.2019թ N 61 Ա		Չարիեկ	1	1,925	8,17	բնական ջրահոսք	ԱՀ Շահումյանի շրջանի Ծար համայնքի տարած- քում Թարթառ գետի ձախ վտակ Չարգետի ավազանում
12.	«ՋիԼԷՆԵԸԸՁԻ» ՍՊԸ	N0008	15.11.2019թ N 62Ա		Թարթառ 2	3	11,562	40,495	բնական ջրահոսք	Մարտակերտի շրջան, Թարթառ գետի վրա
	Ընդամենը						51,05			
	Ընդհանուր						235,982	1149,391		

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓՆԷԿ-երից ՀԱՂՈՐԴՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ/հ	Հայկի միավոր	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ 1-ին կիսամյակ	Ընդամենը	
1.	Հաղորդման ցանց մուտք գործած էլեկտրական էներգիա՝ ընդամենը	հազ. կՎտժ	273914.8	275046.8	297741.2	280134	302522.2	3064 79.9	339535.5	395101.2	438845.5	277372.75	3186693.85
2.	Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի կողմից ներքին սպառման համար գնված. ընդամենը. այդ թվում	հազ. կՎտժ	273914.8	275046.8	297741.2	280134	302522.2	306479.9	339535.5	395101.2	438845.5	277372.75	3186693.85
3.	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից	հազ. կՎտժ	173442.8	256024.7	276891.4	87282.8	78073.7	84222.8	43141.7	67329.8	50210.2	23716.41	1140336.31
4.	«Սրբայիս ՀԷԿ» ԲԲԸ-ից	հազ. կՎտժ	98530.3	1508.1	2908.9	142624.4	166416.6	140280	191795.3	181377.8	190801.5	113005.69	1229248.59
5.	«Իզոտոպ Դեյտա» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ	1941.9	15779.9	15222.4	14952	14848.8	15286.3	13053.9	13850.9	13069.7	6458.07	124463.87
6.	«Պրոտոն» ՓԲԸ-ից	հազ. կՎտժ		1734.1	2351.5	16882.4	16764.5	15993.3	14768.7	14677.9	14337.88	7426.53	104936.806
7.	«Ալֆամագ» ՓԲԸ-ից	հազ. կՎտժ			367	10185.5	10830	10526.7	10191.7	9400.1	9075.3	4654.76	65231.06
8.	«Նետրինո» ՓԲԸ-ից	հազ. կՎտժ				8206.9	15589.7	15552.8	15209.7	14400	13756.1	7017.65	89732.85
9.	«Իմաստ» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ					7775.8	10890.9	10759.9	10416.6	4997.67	44840.87	
10.	«Մեգատոն» ՓԲԸ-ից	հազ. կՎտժ					3134.9	8182.4	7321.8	7533.41	3237.79	29410.3	
11.	«Զոր-էներգիա» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ					13707.3	32294.2	30785.5	28526.39	13457.73	118771.12	
12.	«Օժվիևար-Նարեկ» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ						7.1	193.5	305.41	161.41	667.42	
13.	«Վիսավո» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ							34817.7	55111.59	26399.45	116328.74	
14.	«Վիկիևո» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ						5604.4	8630.11	4880.55	19115.06		
15.	«Կարշաս» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ						4581.9	16660.55	8711.05	29953.5		
16.	«Լև էներջի» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ								765.58	13631.59	14397.17	
17.	«Հիմնաքար» ՓԲԸ-ից	հազ. կՎտժ								245.63	967.3	1212.93	
18.	«Լիմեստոն» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ								537.62	1609.1	2146.72	
19.	«Թարթառ էներջի Ինվեստ» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ								1874.73	25799.16	27673.89	
20.	«Տում ՀԷԿ» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ									536.41	536.41	
21.	«Ռիվեր էներջի» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ									6013.5	6013.5	
22.	«Թարթառ էներջի» ՍՊԸ-ից	հազ. կՎտժ									3562.9	3562.9	
23.	«Էներգո-Սթար» ՓԲԸ-ից	հազ. կՎտժ									1128.03	1128.03	

«ԱՐՑԱՆՔՆԵՐԳՈՒ» ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՎԱՃԱՌՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՎԱՆ ԷՆԵՐԳԻՍՅԻ ՄԱԿԱԳՆԵՐԸ

Խ/Խ	Վերջնական սպառողների խմբեր	Չափի միավոր	Սակագրի մեծությունը (ներառյալ ԱԱՀ)	ԱՀ ՀՍՏԻ ԳՊՀ որոշումներ	Ուժի մեջ է մտել
1	110 կՎ լարմամբ սևվող սպառողների համար	դրամ/կՎտմ	36	25.11.2015թ. N61Ն	01.01.2016թ.
2	35 կՎ լարմամբ սևվող սպառողների համար	դրամ/կՎտմ	40	10.09.2015թ. N55Ն	12.10.2015թ.
3	6 10 կՎ լարմամբ սևվող սպառողների համար	դրամ/կՎտմ	46		
4	0,38 կՎ և ցածր լարմամբ սևվող սպառողների (այդ թվում՝ բնակչություն) համար				
4.1	ցերեկային սակագին	դրամ/կՎտմ	49		
4.2	գիշերային սակագին	դրամ/կՎտմ	44		

127

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱԶՍՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

		Չափման միավոր	2015թ.	%	2016թ.	%	2017 թ.	%	2018թ.	%
1	Ներկրված գազի քանակը	հազ մ³	44904,010		44907,025		43678,109		47114,82	
2	Գազի պաշարները հաշվարկային ժամանակաշրջանին նախորդող ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ	հազ մ³	77,920		251,800		186,65		177,609	
4	Գազի պաշարները հաշվարկային ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ	հազ մ³	251,800		186,65		177,609		104,536	
5	Փոխադրման համակարգից ընդունված գազի քանակը (բաշխման համակարգ)	հազ մ³	44730,130		44972,175		45416,341		47187,89	
6	Գազի կորուստները համակարգում	հազ մ³	2109,250		2205,723		1738,232		1353,746	
6.1	բնեղեն	հազ մ³	2109,250		2205,723		1738,232		1353,746	
6.2	տոկոսային	%	4,720		4,905		3,827		2,869	
7	Բաշխման համակարգում իրացված գազի ծավալը, որից	հազ մ³	42620,880		42766,452		43678,106		45733,21	

	մինչև 10,000 խմ գազ սպառում ունեցող սպառողների համար	հազ մՊ	18073,510		18773,9		19441,394		19469,05	
	10,000 և ավելի սպառում ունեցող սպառողների համար	հազ մՊ	24547,370		23992,55		24236,715		26264,16	
	Ընդամենը	հազ մՊ	42620,880	100	42766,452	100	43678,109	100	45733,210	100
7.1	Էներգետիկա	հազ մՊ	11,970	0,03	13,68	0,03	18,465	0,04	29,977	0,07
7.2	Արդյունաբերություն	հազ մՊ	4548,880	10,67	4147,37	9,70	3940,722	9,02	3940,823	8,62
7.3	Գյուղատնտեսություն (վերամշակվող կազմակերպություններ)	հազ մՊ					442,676	1,01	354,632	0,78
7.4	Ավտոգազալիքափորման ճնշակայան	հազ մՊ	16560,360	38,86	15971,74	37,35	16739,135	38,32	19074,611	41,71
7.5	Բյուջետային կազմակերպություններ	հազ մՊ	2235,600	5,25	2492,02	5,83	2226,605	5,10	1692,564	3,70
7.6	ԼՂՀ զինված ուժեր	հազ մՊ	2767,370	6,49	3015,74	7,05	2546,389	5,83	2457,645	5,37
7.7	Առևտրային կազմակերպություններ	հազ մՊ	110,500	0,26	102,50	0,24	107,406	0,25	135,000	0,30
7.8	Ջեռուցում իրականացնող ընկերություններ	հազ մՊ	1073,370	2,52	1306,44	3,05	1290,658	2,95	1314,376	2,87
7.9	Բնակչություն	հազ մՊ	14230,890	33,39	14624,52	34,20	15221,784	34,85	15328,730	33,52
7.10	Այլ սպառողներ	հազ մՊ	1081,940	2,54	1092,45	2,55	1144,269	2,62	1505,789	3,29
7.10.1	ադից կարմիր խաչ	հազ մՊ	7,710	0,71	12,51	1,14	23,148	2,02	11,453	
8	Բաժանորդների բնակիչ	հատ	28949		29311		29740		30095	
8.1	ադից բնակչություն	հատ	27982		28311		28704		29039	

ԼՂՀ ամսական մինչև 10,000 խմ գազ սպառում ունեցող սպառողներին յուրաքանչյուր 1000 խմ վաճառվող բնական գազի սակագինը կազմում է 139000 դրամ, իսկ ամսական 10,000 և ավելի սպառում ունեցող սպառողներին յուրաքանչյուր 1000 խմ վաճառվող բնական գազի սակագինը՝ 242,1*Ե դրամ, գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին (Նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ) և վերամշակվող կազմակերպություններին վաճառվող յուրաքանչյուր 1000 խորանարդ մետր բնական գազի սակագինը՝ 212,5*Ե դրամ (յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ 22 դրամի արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունն է):

**ՆԵՐՏՆԱՅԻՆ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ**

տեխնիկական սպասարկման ծառայություն տարեկան վճար
(ԱՀ ՀՇՏՄԿՊՀ-ի 26.04.2018թ N 18-Ն որոշում)

	Անվանումներ	Տարեկան վճարը (դրամ)		Ուժի մեջ է մտել
		առանց ԱԱՀ-ի	ներառյալ ԱԱՀ-ն	
1	«Արցախզագ» ՓԲԸ կողմից բնակչության ներտնային և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության տարեկան վճարը			2018թ. հունիսի 1-ից
1.1	մեկ գազօգտագործող սարքավորման համար	1891,6	2270,0	
1.2	երկու գազօգտագործող սարքավորման համար	3783,2	4540,0	
1.3	երեք և ավելի գազօգտագործող սարքավորման համար	5675,0	6810,0	

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

		Չափի միավոր	2015թ.	%	2016թ	%	2017թ	%	2018թ	%
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ներկրված գազի քանակը	հազ մ³	44904,010		44907,025		43678,109		47114,82	
2	Գազի պաշարները հաշվարկային ժամանակաշրջանին նախորդող ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ	հազ մ³	77,920		251,800		186,65		177,609	
4	Գազի պաշարները հաշվարկային ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ	հազ մ³	251,800		186,65		177,609		104,536	
5	Փոխադրման համակարգից ընդունված գազի քանակը(բաշխման համակարգ)	հազ մ³	44730,130		44972,175		45416,341		47187,89	
6	Գազի կորուստները համակարգում	հազ մ³	2109,250		2205,723		1738,232		1353,746	

6.1	բնեղեն	հազ մ ³	2109,250		2205,723		1738,232		1353,746	
6.2	տոկոսային	%	4,720		4,905		3,827		2,869	
7	Բաշխման համակարգում իրացված գազի ծավալը, որից	հազ մ ³	42620,880		42766,452		43678,106		45733,21	
	մինչև 10,000 խմ գազ սպառում ունեցող սպառողների համար	հազ մ ³	18073,510		18773,9		19441,394		19469,05	
	10,000 և ավելի սպառում ունեցող սպառողների համար	հազ մ ³	24547,370		23992,55		24236,715		26264,16	
	Ընդամենը	հազ մ ³	42620,880	100	42766,452	100	43678,109	100	45733,210	100
7.1	Էներգետիկա	հազ մ ³	11,970	0,03	13,68	0,03	18,465	0,04	29,977	0,07
7.2	Արդյունաբերություն	հազ մ ³	4548,880	10,67	4147,37	9,70	3940,722	9,02	3940,823	8,62
7.3	Գյուղատնտեսություն (վերամշակվող կազմակերպություններ)	հազ մ ³					442,676	1,01	354,632	0,78
7.4	Ավտոգազալիցքավորման ճնշակայան	հազ մ ³	16560,360	38,86	15971,74	37,35	16739,135	38,32	19074,611	41,71
7.5	Բյուջետային կազմակերպություններ	հազ մ ³	2235,600	5,25	2492,02	5,83	2226,605	5,10	1692,564	3,70
7.6	ԼՂՀ զինված ուժեր	հազ մ ³	2767,370	6,49	3015,74	7,05	2546,389	5,83	2457,645	5,37
7.7	Առևտրային կազմակերպություններ	հազ մ ³	110,500	0,26	102,50	0,24	107,406	0,25	135,000	0,30
7.8	Զեռուցում իրականացնող ընկերություններ	հազ մ ³	1073,370	2,52	1306,44	3,05	1290,658	2,95	1314,376	2,87
7.9	Բնակչություն	հազ մ ³	14230,890	33,39	14624,52	34,20	15221,784	34,85	15328,730	33,52
7.10	Այլ սպառողներ	հազ մ ³	1081,940	2,54	1092,45	2,55	1144,269	2,62	1505,789	3,29
7.10.1	Ձրից կարմիր խաչ	հազ մ ³	7,710	0,71	12,51	1, 14	23, 148	2,02	11,453	
8	Բաժանորդների քանակը	հատ	28949		29311		29740		30095	
8.1	Ձրից բնակչություն	հատ	27982		28311		28704		29039	

ԼՂՀ ամսական մինչև 10,000 խմ գազ սպառում ունեցող սպառողներին յուրաքանչյուր 1000 խմ վաճառվող բնական գազի սակագինը կազմում է 139000 դրամ, իսկ ամսական 10,000 և ավելի սպառում ունեցող սպառողներին յուրաքանչյուր 1000 խմ վաճառվող բնական գազի սակագինը՝ 242,1*Է դրամ, գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին (նայեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ) և վերամշակվող կազմակերպություններին վաճառվող յուրաքանչյուր 1000 խորանարդ մետր բնական գազի սակագինը՝ 212,5*Է դրամ (յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունն է):

«ԱՐՑԱՆԳԱԶ» ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՍՊԱՈՈՂՆԵՐԻՆ ՎԱՃԱՌՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ
(ԱՀ ՀՉՏՄԿՊՀ-Ի 24.11.2016թ. N44Ն ՈՐՈՇՈՒՄ)

131

Խ/Խ	Սպառողական խմբեր	Չափի միավոր	Ֆևական զագի սակագիեր		Ուժի մեջ է մտել
			սասնց ԱԱՀ-ի	ներառյալ ԱԱՀ-ն	
1.	Գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններ				2017 թվականի նունվարի 1-ից
1.1.	ևոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար	ԱՄՆ դոլարիև համարժեք դրամ/ հազար խմ	176,67*E	212*E	
1.2.	ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար				
ա	ամսական մինչև 10 000 խորանարդ մետր սպառման դեպքում	դրամ/ հազար խմ	115833	139000,0	
բ	ամսական 10 000 խորանարդ մետր և ավելի սպառման դեպքում	ԱՄՆ դոլարիև համարժեք դրամ/ հազար խմ	201,75*E	242,1*E	
2	Գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող կազմակերպություններ	ԱՄՆ դոլարիև համարժեք դրամ/ հազար խմ	176,67*E	212*E	
3	ամսական մինչև 10 000 խորանարդ մետր սպառում ունեցող սպառողներ (բնակչություն)	դրամ/ հազար խմ	115833,3	139000,0	
4	ամսական 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող սպառողներ	ԱՄՆ դոլարիև համարժեք դրամ/ հազար խմ	201,75*E	242,1*E	

5-ն յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժուրթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունն է:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ

Հրատարակության խմբագիր՝
Համակարգչային շարվածքը՝
Էջադրումն ու ձևավորումը՝

Ա. Հովակիմյան
Դ. Սարաֆյանի
Մ. Համբարձումյանի

Չափսը՝ 60×84 ^{1/16}:

Ծավալը՝ 8.25 տպ. մամուլ + 1 տպ. մամուլ ներդիր:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան 24

[1500pp.]

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0668118

№
H 108093

ՍՏԵՓԱՆ ՌԱՏԻԿԻ ՊԱՊԻԿՅԱՆ



Ծնվել է 1957 թվականի հուլիսի 9-ին ՌԴ Ալթայի երկրամասի Զալետովո բնակավայրում: 1979 թվականին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ստանալով ինժեներ ջերմաէներգետիկի որակավորում: Նա բազմաթիվ ակադեմիաների իսկական անդամ է և բազմիցս պարգևատրվել է տարբեր դիպլոմներով և պատվոգրերով:

Հեղինակել է ավելի քան 200 գիտական աշխատություն, որոնք առնչվում են ջերմամատակարարման և զազամատակարարման համակարգերին, զազատուրբինային կայանքներին, ՋԷԿ-երին և ԱԷԿ-ներին, ՀԷԿ-երին, կաթսայատների ռեժիմային, էկոլոգիական, ինչպես նաև էներգետիկայի պատմության հարցերին:

Հեղինակել է «Հայաստանի ջրաղացները», «Երևան քաղաքի էներգետիկայի պատմությունը», «Հայաստանի և Արցախի զազամատակարարման պատմությունը», «Երևան քաղաքի փողոցների լուսավորության պատմությունը», «Արցախի էներգետիկայի պատմությունը», «Գյումրի քաղաքի էներգետիկայի պատմությունը», ինչպես նաև քառհատոր «Հայաստանի էներգետիկայի պատմությունը» մենագրությունները:

1996թ. նա հիմնադրել է «Էներգետիկ լրատու» թերթը, որի գլխավոր խմբագիրն է մինչև օրս:

Գիտամանկավարժական բազմամյա և բեղմնավոր գործունեության համար ստացել է Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսորի գիտական կոչում, շնորհվել է Վերնադսկու անվան ոսկե մեդալ (ք.Մոսկվա), «Գիտության և կրթության վաստակավոր աշխատող» պատվավոր կոչում (ք.Մոսկվա), ինչպես նաև «Գիտության ուղղության հիմնադիր» պատվավոր կոչումը:

Արցախի Հանրապետության էներգետիկայի զարգացման գործում ունեցած ակնառու ներդրման համար ԱՀ նախագահի կողմից պարգևատրվել է Արցախի Հանրապետության պետական պարգևով՝ «Երախտագիտություն» մեդալով: